

Հայաստանի Տնտեսական Ազատութեան Աստիճանը Նուազած է

Անցնող մէկ տարուայ ընթացքին Հայաստանի մէջ տնտեսական ազատութեան մակարդակը իջած է:

Ամերիկեան պահպանողական երկու հաստատութիւններու՝ The Heritage Foundation-ի եւ The Wall Street Journal-ի պատրաստած «2014 թուականի տնտեսական ազատութեան ցուցանիշը» գեկոյցի համաձայն, Հայաստան 0.5 կէտով ետ քայլ արձանագրած է տնտեսական ազատութեան առումով եւ երեք կէտով գիջած է իր տեղը՝ գրաւելով 41-րդ աստիճանը՝ 178 պետութիւններու շարքի:

Այս Հայաստանի վատագոյն ցուցանիշն է 2007 թուականէն ի վեր:

Չեկոյցի հեղինակները ցուցանիշի վատացման պատճառ որպէս, կը նշուի գործարարութեան եւ ներդրումային ազատութիւններու ոլորտէն ներս տեղի ունեցած ետընթացը:

Իր միաւորներով Հայաստանը տեղ գրաւած «չափաւոր ազատ» տնտեսութիւն ունեցող պետութիւններու շարքին: Դրացի վրաստանը 22-րդ դիրքի վրայ է՝ «հիմնականօրէն ազատ» երկիրներու շարքին, իսկ Ատրպէյճանը 81-րդ տեղն է՝ Հայաստանի պէս «չափաւոր ազատներու» շարքին:

Հայ մասնագէտներու կարծիքով այս ետ քայլը կապուած է տնտեսական մենաշնորհներուն հետ:

Մարտի 1-ի Ձոհերու Ծնողները Վրդովուած Են Հայաստանի Նախկին Բռնապետի Վերադարձի Մասին Խօսակցութիւններով

Այս օրերուն քաղաքական շրջանակներու կողմէ լայն քննարկման կ'արժանանայ Հայաստանի նախկին բռնապետ Ռոբերտ Քոչարեանի իշխանութեան վերադառնալու մասին լուրերը, յատկապէս անոր կողմէ վերջերս կատարուած քննադատական ելոյթները վարչապետ Տիգրան Սարգսեանի հասցէին:

Այս մասին առաջին հերթին իրենց գալուցիքը կը յայտնեն Մարտ 1-ի գոհերու հարազատները:

«Մի նախագահ, որի օրօք եղել է Հոկտեմբերի 27 եւ Մարտի 1-ի սպանդ, այսօր ի՞նչ երեսով է փորձում վերադառնալ քաղաքականութիւն»։ «Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցներու ընթացքին տարակուսանք յայտնած են 2008-ի մարտիմէկեան իրադարձութիւններու ընթացքին գոհուածներու ծնողները՝ «Թշնամի» համարելով այն քաղաքական ուժերուն, որոնք կը փորձեն կանգնել Ռոբերտ Քոչարեանի թիկունքին:

Մարտի 1-ին ոստիկաններու կողմէ կիրառուած յատուկ միջոցներու պատճառաւ սպաննուած Գոռ Քրոյեանի հայրը՝ Սարգիս Քրոյեան, խիստ վրդովուած է նախկին նախագահի ակտիւացումով եւ այն քննարկումներով, թէ արդեօք Քոչարեանը կրկին իշխանութեան գալու յայտ կը ներկայացնէ:

«Խորհուրդ կը տայի Ռոբերտ



Արխիւային նկար՝ Մարտ 1-ի գոհերու պատկերներով երթ-երեսանի մէջ

Քոչարեանը չվերադառնար քաղաքականութիւն եւ գնար Աֆրիկա իր որսով գրադուէր... ամօթու: Նա ի՞նչ դէմքով, ի՞նչ երեսով պէտք է վերադառնայ քաղաքականութիւն, նա իրաւունք չունի, նա Հայաստանից պէտք է արտաքուսի: Համոզուած եմ, որ կը գայ դատարանի առաջ, եթէ նա մոռացել է մեր վիշտը, մենք երբեք չենք մոռանայ»,- ըսած է գոհուածի հայրը՝ օրինակ տալով Ուկրաինոյի պարագան, ուր հակակառավարական ցոյցերը դադար չունին, բայց ոչ ոք չի կրկեր ժողովուրդի վրայ:- «Ուկրաինացուք երկու ամիս է գնում են ցոյցեր եւ ոչ մի գոհ... Իսկ մենք ի՞նչ էինք

արել, Օպերայում հանգիստ կանգնած պահանջում էինք նոր ընտրութիւններ, ոչ մէկին չէինք խանգարում, ոչ մի բան.. Ինչո՞ւ յարձակուեց ժողովրդի վրայ, ինչո՞ւ ձեռքաւարկեց հարիւրաւոր մարդկանց, վիրաւորեց, սպաննեց.. ի՞նչ էինք արել, դա մեր սահմանադրական իրաւունքն էր, դրա համար կարելի է մարդ սպաննել.. եւ հիմա ի՞նչ երեսով է դուրս գալիս ժողովրդի աչքի առաջ, էկրաններին: Ո՞րք կարելի է»:

Մարտի 1-ին «Չերչոմուխա 7» գործողութեան ընթացքին գոհուած Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեան, որ

Շարք էջ 5

Քալիֆորնիոյ օրէնսդիրի՝ Ղարաբաղի ճանաչման Վերաբերեալ Նախագիծը Արժանացած Է Ատրպէյճանցիներու Ջայրոյթին

«Կլէնտէլի Նիւզ Փրէս» թերթի համաձայն, Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի ծրագիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչման վերաբերեալ, Ամերիկայէն ներս եւ դուրս արժանացած է ատրպէյճանցիներու գալուցիքին: Անոնք կը մեղադրեն Կաթոյին՝ հայկական լոպպիստական կազմակերպութիւններուն ծառայելու մէջ:

Մայք Կաթո չի ժխտեր սակայն, որ այդ ծրագրի շուրջ կը համագործակցի հայկական երեք հասարակական կազմակերպութիւններու հետ: Խօսքը Հայ Ամերիկեան Խորհուրդի, Հայ Դատի Գրասենեակի ու «Միաւորուած Հայ Երիտասարդներու» մասին է: «Այս խումբերը կը պայքարին ծագումով հայերու ինքնորոշման իրաւունքի ճանաչման համար»,- ըսած է Կաթոն ամերիկեան թերթին:

«Շատ խորհրդային մօտեցում է ըսել, որ մարդիկ չունին ինքնորոշման իրաւունք»,- ըսած է

Կաթո: «Կը կարծեմ, որ ամբողջ աշխարհը համաձայն է ինքնորոշման հետ: Տարածաշրջանը այժմ «լիցքաթափման» վիճակի մէջ է: Ատրպէյճանցիները կը փորձեցին ուժով ետ գրաւել գայն, բայց չկարողացան»:

Յիշեցնենք, որ Քալիֆորնիոյ օրէնսդիր մարմինի անդամ Մայք Կաթո Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ինքնիշխան պետութիւն ճանչնալու վերաբերեալ բանաձեւ ներկայացուցած է Նահանգային խորհրդարան: Ան նաեւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ բանաձեւի առաջին հեղինակներէն մէկն էր: Եթէ Քալիֆորնիոյ օրէնսդիր մարմինի երկու պալատները ընդունին բանաձեւը, ապա պատճէնները կը փոխանցուին ԱՄՆ նախագահին, Միացեալ Նահանգների Մերակոյտի քարտուղարին, ԱՄՆ Ներկայացուցիչներու Տան քարտուղարին եւ Գոնկրէսէն ներս Քալիֆորնիան ներկայացնող իւրաքանչիւր անդամին:

Մասնագէտի Կարծիքով Հայաստանը Ժողովրդագրական Աղէտի Առջեւ Է

Ժողովրդագրագէտ Արտաշէս Բոյաջեանի համոզմամբ՝ Հայաստանը այսօր կանգնած է ժողովրդագրական աղետի առջեւ:

«Կարելի է ասել, որ մօտ ենք արդէն ժողովրդագրական աղետալի վիճակին, եթէ ոչ արդէն ժողովրդագրական աղետալի վիճակում ենք»,- «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ըսած է Բոյաջեանը եւ աւելցուցած. - «Մօտակայ 5-6 տարուայ ընթացքում մեզ մօտ ամուսնութիւնների թիւը գնալով նուազելու է, բնականաբար կը նուազի նաեւ ծնունդների թիւը: Իսկ տարեցների տեսակարար կշիռը կ'աւելանայ: Եւ կարող է դա հանգեցնել բնական աճի բացասական մնացորդի»:

Միայն Գիւմրիի մէջ, մասնաւորապէս մէկ տարուայ ընթացքին բնակչութեան թիւը նուազած է 23 հազարով: Եւ այս անդրադարձած է նաեւ ծնունդներու թիւի վրայ: «Ազատութեան» հետ զրոյ-

ցի ընթացքին: Շիրակի մարզպետարանի առողջապահութեան բաժնի պետ Հայկուշ Աւետիսեանի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, 2012-ի համեմատ անցած տարի ծնունդներու քանակը մարգէն ներս նուազած է աւելի քան 100-ով, իսկ Գիւմրիի մէջ աւելի քան 400-ով:

Աւետիսեան ծնունդներու թիւի նուազումը կը կապէ գլխաւորաբար արտագաղթի հետ:

Ստեղծուած իրաւիճակէն ելքը Արտաշէս Բոյաջեան կը տեսնէ միայն ներգաղթը իրաւունքով մէջ. - «Ո՞ր դէպքում մարդիկ կը վերադառնան Հայաստան: Եթէ գիտենան, որ աշխատանք կ'ունենան եւ աւելի շատ գումար կը վաստակեն, քան դրսում: Մեր տնտեսագէտները, իշխանութիւնը, կառավարութիւնը պիտի մշակի այնպիսի ծրագրեր: Դա մասնագէտների խնդիրն է: Ոչ այնքան քաղաքական գործիչները»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչո՞ւ Քոչարեանը կ'ուզէր վերադառնալ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Ռոբերտ Քոչարեանի նոր հարցազրույցը աշխուժացրել է քննարկումները նրա հնարաւոր վերադարձի կապակցութեամբ: Քոչարեանն ինքն անձամբ չի արտայայտել վերադարձի ցանկութիւն, թէեւ չի էլ հերքել դրա հաւանականութիւնը՝ պարբերական յայտարարութիւններով ու հարցազրույցներով վառ պահելով կրակը:

Այն, որ Ռոբերտ Քոչարեանը կը ցանկանայ վերադառնալ քաղաքականութիւն, ինչը նոյնն է թէ իշխանութիւն, միանգամայն տրամաբանական է: Պատճառները մի քանիսն են: Մի կողմ թողնենք զուտ իշխանատենչութեան պատճառը: Հոգեբանական այդ կողմն իհարկէ բաւական մեծ ազդեցութիւն կարող է ունենալ մարդու վրայ, երբ մարդը դժուարութեամբ է յարմարուում կամ չի յարմարուում այն վիճակին, որ մի քանի տարի շարունակ բոլորն իրեն էին ենթարկուում, բայց յետոյ ոչ միայն այդպէս չէ, այլ կարող է լինել հակառակը՝ ինքը ենթարկուի բոլորին, ինչ որ բաներ ինդրի եւ այլն:

Կան մի քանի տնտեսա-քաղաքական պատճառներ: Հայաստանի իշխանութիւնը կապիտալի իշխանութիւն է: Ռոբերտ Քոչարեանն, ըստ մամուլի հրապարակումների, բաւական լուրջ ներգրաւուածութիւն ունի Հայաստանի տնտեսութեան տարբեր սեգմենտներում (բաժանմունք, հատուած): Քանի որ կապիտալն ու իշխանութիւնը սերտ աճած են, այդ կապիտալի պահպանութեան տեսանկիւնից վտանգաւոր է իշխանական համակարգից դուրս գտնուելը: Ի վերջոյ դէ իւրէ

իշխանութիւն ունեցող կապիտալի հեռանկարները ժամանակի ընթացքում աւելի մեծ են, քան այդ իշխանութիւնից զրկուած կապիտալինը:

Ռոբերտ Քոչարեանը լաւ է գիտակցում, որ ինքնընդհատ (անգործ վիճակ) յոյսին երկար մնալը հնարաւոր չէ, հետեւաբար անվտանգութիւնը պահանջում է ներգրաւուում իշխանութեան համար պայքարին: Այլ հարց է, թէ դա ինչպէս կ'անի Ռոբերտ Քոչարեանը՝ անձամբ, թէ այլ թեկնածուի կամ ուժերի միջոցով: Ըստ երեւոյթի, Քոչարեանն ինքն էլ դեռ չի կողմնորոշուել, եւ այժմ դիրքային պայքարում դիտարկում է, թէ որ տարբերակն է աւելի հաւանական եւ հնարաւոր:

Ի վերջոյ, այդ հարցի լուծումը միայն Հայաստանում չէ: Աւելին, Հայաստանում դրա փոքր մասն է, այսպէս ասած «նախերգանքի» մասը: Հայաստանի ներքին քաղաքական եւ ներիշխանական զարգացումները վաղուց են յանձնուել արտաքին կենտրոններին, գերազանցապէս Ռուսաստանին: Սեպտեմբերի 3-ին էլ դրուել է տարիներ շարունակ առկայ իրողութեան կնիքը: Ընդ որում, դրան ոչ միայն չեն ընդդիմացել, այլ զանազան տարբերակներով իրենց հաւանութիւնն են տուել հիմնական խորհրդարանական ուժերը:

Այնպէս որ, շատ էական է լինելու արտաքին կենտրոնների, մասնաւորապէս Ռուսաստանի դիրքորոշումը: Ժամանակի ընթացքում Ռուսաստանը յայտնուում է միջազգային լուրջ խնդիրների առաջ: Գազային մահակին սպառնում է համաշխարհային էներգե-

տիկ արդիականացումը, նոր տեխնոլոգիաների կիրառումն ու նոր աղբիւրների յայտնաբերումը: Դա թուլացնելու է Ռուսաստանին ոչ միայն արտաքին աշխարհում, այլ նաեւ իր ներսում, քանի որ ներքին տնտեսութիւնը եւ սոցիալական քաղաքականութիւնը կառուցուած է նաւթագազային հիմքի վրայ:

Դա նշանակում է, որ Ռուսաստանը տարբեր հարցերում ստիպուած կը լինի փոխզիջման գնալ Արեւմուտքի հետ: Այդ թուում նաեւ Հայաստանի հարցում: Եւ այն, ինչ այսօր միարժէքօրէն թուում է Ռուսաստանի որոշելիքը, հեռանկարում կարծես թէ վերածուելու է Արեւմուտքի որոշման: Եւ այդ առումով Հայաստանի նախագահի հաւակնորդների համար առաջանում է բաւական դժուար կացութիւն՝ եթէ նրանց այսօր ընտրի Ռուսաստանը, ապա վաղը կարող է չընտրել Արեւմուտքը: Իսկ եթէ նրանց այսօր չընտրի Ռուսաստանը, ապա մինչեւ Արեւմուտքի ընտրութիւնը հերթը կարող է եւ չհասնել: Իրավիճակը բարդանում է յատկապէս այն պատճառով, որ այդ բոլոր հաւակնորդները լիովին զրկուած են հասարակութեան ընտրութեանն արժանանալու հնարաւորութիւնից, յատկապէս երբ այդ հասարակութիւնը գտնուում է քաղաքացիական տրանսֆորմացիաների (փոխակերպում) դանդաղ, բայց կայուն փուլում:

Միեւնոյն ժամանակ, արտաքին խնդիրը հանդիսանում է այն կարեւոր պատճառներից մէկը, եթէ ոչ առաջնայինը, որը Հայաստանի իշխող համակարգի ներսում առաջացնում է իշխանութեան համար սուր պայքարի անհրաժեշտութիւն: Բանն այն է, որ

Հայաստանի ներքին ռեսուրսների սպառման պայմաններում, ինչն ինքնին սրում է ներհամակարգային պայքարը, առկայ է նաեւ միջազգային դինամիկ գործընթացի խնդիրը, որը շօշափում է Հայաստանը թէ տարածաշրջանի իմաստով, թէ նաեւ այն, որ Հայաստանին ուղղակիօրէն առնչուող մի քանի խնդիրներ հանդիսանում են աշխարհաքաղաքական գործընթացի առանցքային հարցեր:

Դա էպայէս մեծացնում է Հայաստանի իշխանութեան միջազգային պատասխանատուութիւնը: Այստեղ էլ առաջանում է երկակի վիճակ: Մի կողմից քչերը կը ցանկանան իրենց մեծահարուստ գլուխը դնել այդ բարդ գործընթացների տակ եւ ստանձնել այդ բարդ պատասխանատուութիւնը, միւս կողմից չունենալով իշխանութիւն, նրանք սպառնում են զրկուել նաեւ գլխից՝ բառի բուն եւ պատկերաւոր իմաստով, թէկուզ եւ այն պատճառով, որ Հայաստանում յանձնելու պետական գոյքը սպառուել է եւ յանձնման վտանգի տակ է արդէն մասնաւորը, եւ ամենայն հաւանականութեամբ դա կը լինի այն մասնաւորը, որն ամենաքիչն է պաշտպանուած դէ իւրէ իշխանութեամբ:

Կայ միջազգային պատասխանատուութիւնն իրացնելու այլ տարբերակ, այսպէս ասած աւելի առողջ տարբերակ, երբ պահանջուում են ոչ թէ գոհեր, այլ ինքնագոհաբերութիւն: Բայց Հայաստանի իշխող «վերնախաւի» ներկայացուցիչները լաւ գիտեն, որ իրենցից որեւէ մէկը չի գնայ դրան, քանի դեռ երկրում գոհաբերելու այլ բան կը տեսնի:

«ԼՐԱԳԻՐ»

Համագործակցութեան հարթակը

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Հայաստանում առկայ քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակից, ՀՀ իշխանութիւններից շատերն են դժգոհ: Հանրութեան քաղաքականապէս ակտիւ հատուածի մի զգալի մասը նոյնիսկ համարում է, որ դրութիւնն աղէտալի է եւ անհրաժեշտ է որոշակի գործընթաց սկսել երկիրը փրկելու համար: Դիտարկումները ցոյց են տալիս, որ ընդդիմադիր հանրութեան շրջանում կայ երեք հիմնական մտայնութիւն այն հարցի վերաբերեալ, թէ ո՞ր խնդիրը պէտք է առաջնային համարուի այդ գործընթացում:

Վերոնշեալ հանրութեան մի մասը կարծում է, որ կործանումից հնարաւոր կը լինի խուսափել, եթէ որպէս առաջնային խնդիր դիտարկուի ներկայիս իշխանութիւններից ազատուելը: Այս մտայնութեան կողմնակիցները համոզուած են, որ ներկայիս իշխանութիւնների օրօք որեւէ գործողութիւն չի կարող բերել վերոնշեալ իրավիճակի փոփոխութեան, քանի որ իշխանութիւններն ամէնուր մոնոպոլ (մենաշնորհային) դիրք ունեն եւ հեշտութեամբ կարող են չէզոքացնել իրավիճակը շտկող իւրաքանչիւր առողջ գործողութիւն:

Միւսները, համաձայն լինելով այն հարցում, որ իշխանութիւններից ազատուելն առաջնային խնդիր է, միաժամանակ կարծում են, որ դա բաւարար չէ եւ նոյնքան առաջնային է եւ խոր-

քային, համակարգային փոփոխութիւններ իրականացնելու կարողութիւններ ունեցող ուժի իշխանութեան գալը: Սոյն մտայնութեան կողմնակիցները նշում են, որ երկիրը հնարաւոր է փրկել արմատական բարեփոխումների միջոցով, իսկ դա հնարաւոր կը լինի անել միայն այն դէպքում, եթէ այդպիսի բարեփոխումների ծրագիր եւ այն ի կատար ածելու կարողութիւններ ունեցող քաղաքական ուժը իշխանութիւն ունենայ: Նրանք կարծում են, որ եթէ իշխանափոխութեան արդիւնքում չի երաշխաւորուում նման ուժի իշխանութեան գալը, ապա ներկայիս իշխանութիւններից ազատուելու գործողութիւնն էներգիայի անիմաստ կորուստ է:

Կան նաեւ այնպիսիք, ովքեր պնդում են, որ այսօր իշխանափոխութիւնն ընդհանրապէս անիմաստ է: Նրանք կարծում են, որ այսօրուայ պայմաններում ով էլ գայ իշխանութեան, իրավիճակը մնալու է նոյնը, որովհետեւ մի կողմից՝ Հայաստանում չկայ առողջ քաղաքական ուժ, միւս կողմից էլ՝ հասարակութեան իրաւական գիտակցութեան մակարդակը շատ ցածր է, որի պայմաններում որեւէ լուրջ արմատական բարեփոխում չի գործի եւ չեն ստեղծուի նորմալ դեմոկրատական ինստիտուտներ (իրաւական բնագաւառ), որոնք անհրաժեշտ են երկրում կայուն դրական զարգացում ապահովելու համար: Այդ իսկ պատճառով նման մտայնութեան կողմնակիցները համա-

րում են, որ առաջնահերթ խնդիրը՝ «քաղաքացիական հասարակութեան» ձեւաւորումն է, այն է՝ հասարակութեան իրաւագիտակցութեան բարձրացումը, առողջ քաղաքական եւ քաղաքացիական ուժերի ձեւաւորումը ու լոկալ (տեղային) յղթանակների նախադէպերի ստեղծումը:

Դժուար է ասել, թէ այսօր ո՞ր մտայնութեան է գերիշխողը, սակայն գրեթէ կասկած չկայ, որ իւրաքանչիւր մտայնութեան ունի բաւականին մեծ թուով կողմնակիցների բանակ, եւ դժուար թէ դրանցից որեւէ մէկը առաջիկայում կարողանէ համոզել դիմացիին հրաժարուել սեփական դիրքորոշումից: Այս պարագայում, թէեւ ընդդիմադիր հանրութեան տարբեր հատուածներ ունեն մէկ միասնական հեռաւոր նպատակ, սակայն, քանի որ տարբեր խնդիրներ են որպէս առաջնահերթութիւն հետապնդում, յաճախ նոյնիսկ չեն համագործակցում միմեանց հետ:

Սակայն, կարծում եմ, հնարաւոր է գտնել մի հարթակ, որտեղ վերոնշեալ երեք մտայնութեան կողմնակիցները կը կարողանան եւ կը ցանկանան համագործակցել եւ իրավիճակի շտկմանը նպաստող համատեղ գործողութիւններ իրականացնել: Այդպիսի հարթակ կարող են լինել հենց այնպիսի գործողութիւններ, որոնք, անկախ ամէն ինչից, օգտակար կարող են լինել բոլոր երեք մտայնութեանը:

Շաբ.ը էջ 18

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՅԴ-Ը ԿԻՍՈՒՄ Ե ՌՈՔԵՐՈՒ ՔՈՇԱՐԵԱՆԻ ՏԵՍԱԿԵՒՆԵՐԸ

Փետրուարի 3-ին ԱԺ-ն կը մեկնարկի 2014թ իր աշխատանքները: Խորհրդարանում բոլոր պատգամաւորներին դռները փակ էին, բայց էր միայն ՀՅԴ պատգամաւոր Արծուիկ Մինասեանի աշխատանքները: Նա արդէն ուսումնասիրում է կառավարութեան այն նախագծերը, որոնք ամենայն հաւանականութեամբ կ'ընդգրկուեն առաջիկայ քառօրեայում:

Առաջիկայ քառօրեայում ՀՅԴ-ն 2 հիմնական խնդիր է առանձնացնելու՝ «Նախընտր» գործարանի ճակատագիրն ու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը: Նա նաեւ յիշեցրեց՝ Յունուարի 18-ին ԱԺ ոչ իշխանական 4 ուժերը մասնակցելու են «Ընդդէմ պարտադիր կուտակային բաղադրիչի» նախաձեռնող խմբի հրաւիրած հանրահաւաքին: Մինչ ՄԴ նիստը, եւս մէկ

անգամ պէտք է յիշեցնել այս օրէնքի կիրառման բացասական հետեւանքները: ՀՅԴ-ն նաեւ զուգահեռ մտածում է պարտադիր բաղադրիչը այլընտրանքային տարբերակներով փոխարինելու շուրջ:

Վերջին շրջանում ՀՅԴ-ի ակտիւութիւնը ոմանք կապում են Ռոքերտ Քոչարեանի հնարաւոր վերադարձի հետ: Արծուիկ Մինասեանը չի հերքում, որ ՀՅԴ-ն արդիւնաւէտ համագործակցութիւն է ունեցել Ռոքերտ Քոչարեանի հետ: Այսօր էլ ՀՅԴ-ն կիսում է պարոն Քոչարեանի տեսակէտները գազի գնի եւ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերեալ:

«Եթէ համագործակցութիւնն այդ դաշտում կը լինի, մենք կը լինենք աւելի ուրախ եւ աւելի վստահ, որ աւելի շատ են պայքարողները այս բացասական կողմերի հանդէպ»:

«Նա, Ով Դրական Իմաստով Կը Տայ Քոչարեանի Անունը, Ազգի Դաւաճան Է»

Ռոքերտ Քոչարեանը պէտք է վերադարձնի երկրից թաւանածը եւ քրէական պատասխանատուութեան ենթարկուի, նա 10 տարի զուլթեց աթոռը, եւ այդ ընթացքում հասցրեց պաշտօնապէս 6 մլրդ դոլար ունենալ: Այս մասին, Յունուարի 14-ին, մամուլի ասուլիսում յայտարարեց Ազատամարտիկների ռազմադաշտային հրամանատարների խորհրդի նախագահ Սուրէն Սարգսեանը՝ անդրադառնալով ՀՀ երկրորդ նախագահի վերջին շրջանի ակտիւութեանը:

Սարգսեանի խօսքով՝ նա, ով դրական իմաստով կը տայ Քոչարեանի անունը, ազգի դաւաճան է:

Ինչ վերաբերում է ընդդիմութեան անելիքներին, Սուրէն Սարգսեանն ասաց. «Մենք պէտք է այս խամաճիկ իշխանութիւններին ճանապարհենք ազգովի, որից յետոյ ազգովի արժանապատիւ կը բանակցենք իւրաքանչիւր կողմի հետ եւ կ'առաջնորդուենք հանրային շահով»: Նա նշեց, որ իրենք իշխանութեան են գալու «զուռնադէտով, փետրուարեան մի օր»:

Ստեփան Սաֆարեան.- «Քոչարեանի Եւ Տիգրան Սարգսեանի Հեռակայ Բանավէճը Նման Է Իրար Վրայ Ցուցնուը Տալու»

Ռոքերտ Քոչարեանի եւ Տիգրան Սարգսեանի հեռակայ բանավէճը նման է իրար վրայ ցուցնուը տալու: Այս մասին Յունուարի 14-ին, մամուլի ասուլիսի ժամանակ նշեց «Ժառանգութիւն» կուսակցութեան քարտուղար Ստեփան Սաֆարեանը: Նրա խօսքով, իրականում երկուսն էլ չեն հերքում, որ փուշիկը փչուել է:



Ժառանգութիւն» կուսակցութեան քարտուղար Ստեփան Սաֆարեան

«Բայց այս պարագայում մէկը միւսին մեղադրում է փուշիկը փչելու մէջ, իսկ միւսը փուշիկը պայթեցնելու մէջ: Սա ճիշդ վիճիկ թուրի հեքիաթին է նման, եւ ինձ թուում է ժողովրդին բացարձակապէս չի հետաքրքրում, թէ ով է ծակել ու փչել փուշիկը, որովհետեւ շատ աւելի կարեւոր է, որ փուշիկը փչուել է եւ ծակուել: Հետեւաբար այս հեռակայ բանավէճում կարծես, թէ բանավէճի, որեւէ կողմը ժողովրդի շրջանում առանձնապէս, որեւէ համակրանք չի վայելում, քանի որ այն թեմայով, որով փորձում են իբր թէ դիւրեւաններ ստանալ դատապարտուած է ձախողման, որովհետեւ մեղաւորը մէկ անձ չէ եւ բոլոր սուբիեկտները անցելու են եղել են մէկ մարմնի մէջ», - նշեց Ստեփան Սաֆարեանը եւ աւելացրեց, որ այս բանավէճը աւելի շատ զուարճանքի տեղիք է տալիս այլոց համար, քան աջակցութիւններ ստանալու հնարաւորութիւն է:

Միաժամանակ նա աւելացրեց, որ 2-րդ եւ 3-րդ նախագահների կոնֆլիկտը բեմականացուել է բազմակի անգամներ եւ դրանք

Սուրէն Սուրենեանը Պնդել Է, Որ Աժ Պատգամաւորը Հարուածել Է Իրեն

Քաղաքագէտ Սուրէն Սուրենեանը ռադիկալութիւնում հաղորդում է տուել, որ Աժ պատգամաւոր Վահան Կարապետեանը հարուածել է իրեն:

Քաղաքագէտ Սուրէն Սուրենեանի հաղորդման հիման վրայ ՀՀ յատուկ քննչական ծառայութիւնում նախապատրաստուած նիւթերով՝ ՀՀ ՔՕ 118-րդ յօդուածի յատկանիշներով յարուցուել է քրէական գործ:

Ըստ Ս. Սուրենեանի ՀՀ ռադիկալութեան Մայրաթիալի բաժնում տուած հաղորդման՝ 2013թ. Դեկտեմբերի 14-ին՝ ժամը 18.00-ից 19.00-ն ընկած ժամանակահատուածում, Երեւան քաղաքի Լենինգրադեան 25 հասցեում գտնուող «Չերրի» հիւրանոցային համալիրի համարներից մէկում ՀՀ ազգային ժողովի պատգամաւոր Վահան Կարապետեանը վիճաբանութեան մէջ է մտել իր հետ, որի ընթացքում բռնուցքով հարուածել է իր դէմքին՝ ձախ աչքի շրջանում պատճառելով մարմնական վնասուածք:



Քաղաքագէտ Սուրէն Սուրենեանը

ՀՀ յատուկ քննչական ծառայութիւնում տուած բացատրութիւնում Սուրէն Սուրենեանը հաստատել է իր հաղորդման մէջ յայտնած հանգամանքները՝ նշելով, որ Աժ պատգամաւորի կողմից իր նկատմամբ բռնի գործողութիւն կատարելու հետեւանքով իրեն պատճառուել է մարմնական վնասուածք ու ֆիզիկական ցաւ, ինչի կապակցութեամբ բողոք է ներկայացրել Վահան Կարապետեանի դէմ:

Քաղաքագէտ.- «Հայաստանի Քաղաքական Կուսակցութիւնները Նման Են Ակումբների»

Հայաստանի ներքաղաքական իրավիճակը անելանելի չէ: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Կովկաս ինստիտուտի տնօրէն, քաղաքագէտ Ալեքսանդր Իսկանդարեանը:

Ըստ նրա, իրավիճակն անելանելի է այնպիսի երկրներում, ինչպիսին են Ադրբեջանը, Բելառուսը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ռուսաստանը, Ղրղզստանը, իսկ Հայաստանում կան հակասութիւններ, կան գործընթացներ, մրցակցութիւն, կայ ամէն ինչ աւելու հնարաւորութիւն. «Մենք մի բան չունենք՝ քաղաքական կուսակցութիւններ: Այն, ինչ մենք ունենք այսօր, կուսակցութիւններ չեն, այլ աւելի շուտ ակումբներ: Օրինակ՝ ՀՀԿ-ն նման է իւրատիպ «պաշտօնեաների արհմիութեան», եթէ կարիերայի աճ է պահանջուում, անդամակցում են ՀՀԿ-ին»:

Ի պատասխան այն հարցին, արդեօք ՀՀԿ-ում ներքին հակասութիւններ չկան, Իսկանդարեանն ընդգծել է, որ, բնական է, որ արտաքին սպառնալիքի բացակայութեան պատճառով: Այդ ֆոնին կուսակցութեան ներսում սկսում են ձեւաւորուել տարբեր խմբեր՝ տարբեր հետաքրքրութիւններով: Իսկանդարեանի գնահատականներով՝ ՀՀԿ ներսում հակասութիւնները շատ ուժեղ են: «Ըստ էութեան, այն իրենից ներկայացնում է ոչ թէ մէկ, այլ՝ երկու, եթէ ոչ երեք», - ընդգծել է նա: Ըստ որում, նա ընդգծել է, որ նման իրավիճակում այդ հակասութիւնները լիովին բնական է՝ հաշուի առնելով նաեւ կուսակցութեան չափերը:

«Ժառանգութեան» Նոր Նախագահի Անունը՝ Գարնանը

«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Բաֆֆի Յովհաննիսեանը չի պատրաստուում մեկնել Հայաստանից եւ իր պաշտօնը փոխանցել «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանին: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը արձագանքելով այն լուրերին, թէ Բաֆֆի Յովհաննիսեանը պատրաստուում է բնակութիւն հաստատել Միացեալ Նահանգներում եւ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահի պաշտօնում ցանկանում է տեսնել Արմէն Մարտիրոսեանին:

Նրա խօսքով, Բաֆֆի Յովհաննիսեանն է կուսակցութեան նախագահն ու առաջնորդը: «Իրականութիւնը այն է, որ ամենայն հաւանականութեամբ գարնանը կ'ունենանք համագումար եւ համագումարն, ըստ էութեան, պէտք է նոր վարչութիւն ընտրի եւ այդ նոր վարչութիւնը կ'որոշի, թէ ով է կուսակցութեան նախագահը: Բայց Բաֆֆի Յովհաննիսեանի փոփոխութեան հարցը չի քննարկուել եւ նա ոչ մի տեղ էլ չի պատրաստուում մեկնել: Նա ապրելու է Հայաստանում», - ասաց Արմէն Մարտիրոսեանը:

Նիկոլ Փաշինեանն Այցելել Է Շանթ Յարութիւնեանին

Ազգային ժողովի պատգամաւոր, ՀԱԿ խմբակցութեան անդամ Նիկոլ Փաշինեանն Յունուարի 14-ին այցելել է «Դատապարտեալների հիւանդանոց», «Վարդաշէն», «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկներ, որտեղ հանդիպումներ է ունեցել Նոյեմբերի 5-ի գործով կալանաւորուած 13 անձանց, այդ թւում՝ Շանթ Յարութիւնեանի հետ:

«Այս գործով կալանաւորուած անձանցից չլաշտողեց հանդիպելը գրուցել միայն Ան ուշաւան Գրիգորեանի հետ, ով «Նուբարաշէն» ՔԿՀ ղեկավարութեան պարզաբանումների համաձայն, տեղափոխուել է հոգեբուժական հիւանդանոց՝ դատահոգեբուժական փորձաքննութեան:

Շանթ Յարութիւնեանը հիւժուած էր երկարատեւ հացադուլից յետոյ եւ գտնուում է կազդուրման փուլում:

ԼՈՒՐԵՐ

Թոմաս Դե Վաալ.- «Հայ Հասարակութիւնն Այնքան Ռուսամէտ Տրամադրուածութիւն Զուցի, Որքան Քաղաքական Էլիտան»

Հայաստանը առայժմ պարտաւորութիւն է ստանձնել Մաքսային Միութեանը անդամագրուելու, բայց սա երկարաժամկէտ գործընթաց է: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրույցում յայտարարել է Վաալը: Գործող «Կարնեգի» հիմնադրամի առաջատար վերլուծաբան, կովկասեան հարցերով փորձագէտ Թոմաս Դե Վաալը:



Կովկասեան հարցերով փորձագէտ Թոմաս Դե Վաալ

Վերջինս կարծում է, թէ Հայաստանը, եւ կոնկրետ նախագահ Սերժ Սարգսեանը ցանկանում էր բաց պահել իր հնարաւորութիւնները, նա ուզում էր թէ՛ Եւրոպայի, եւ թէ՛ Ռուսաստանի հետ համագործակցել, սակայն փաստորէն քաղաքական պատճառներով, եւ իհարկէ, Ռուսաստանի ճնշման տակ, նա ստիպուած էր ընտրութիւն կատարել եւ ընտրել Ռուսաստանը: «Բայց կարծում եմ, որ Մաքսային Միութեան հետ կապուած շատ հարցեր կան՝ այն առումով, թէ որքանով այն կենսունակ կը լինի: Մենք արդէն իսկ տեսնում ենք որոշակի հակազդեցութիւններ, դժգոհութիւններ Ղազարխանի նախագահ Նազարբաեւի եւ Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի կողմից: Նրանցից իւրաքանչիւրը սեփական, միւսներից տարբերուող մտեցումներ ունի Մաքսային Միութեանը: Նրանք այն համարում են առաւելապէս տնտեսական համագործակցութեան սերտացման միջոց, այդպիսին է, մասնաւորապէս, Ղազարխանի դիրքորոշումը: Մինչդեռ Վլադիմիր Պուտինի համար սա աւելի շատ այսպէս ասած՝ քաղաքական պրոյեկտ է: Այնպէս որ, կարծում եմ՝ մենք որոշակի խնդիրներ ենք տեսնելու Մաքսային միութեան հետ կապուած եւ թէ՛-ներքին՝ այն առումով, թէ այս միութիւնը առհասարակ կը կայանա՞ց եւ կը գործի՞, շարունակու՞մ են մնալ», - նշել է փորձագէտը:

Հայաստանում այնքան ռուսամէտ տրամադրուածութիւն չունի, որքան քաղաքական էլիտան: Ժողովուրդն ուզում է տեսնել Ռուսաստանին երաշխաւորի, հասարակութիւնը կողմ է Ռուսաստանի հետ կապեր ունենալուն, սակայն վերջին տասը տարիներին մենք տեսնում ենք, որ հայաստանեան հասարակութիւնը աճ է ապրել, եւ ասում է՝ Հայաստանը Հայաստան է, Ռուսաստանը՝ Ռուսաստան, եւ չի ցանկանում այս՝ գաղութայինի նմանուող յարաբերութիւնը Ռուսաստանի հետ, որը հենց այն է, ինչ տալիս է Մաքսային Միութիւնը», - նշել է փորձագէտը եւ յաւելել. «Միեւնոյն ժամանակ, քաղաքական էլիտան, ինչպէս գիտենք, շատ ռուսամէտ է, նոյնիսկ եթէ նայենք նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, նա մի շարք բաւական ռուսամէտ յայտարարութիւններ է արել վերջին մէկ-երկու տարում: Եւ ես կարծում եմ, որ Սերժ Սարգսեանը զգում էր այդ ճնշումը՝ «Բարգաւաճ Հայաստանի» ղեկավար Գագիկ Մառուկեանի, իր նախորդի՝ Ռոբերտ Քոչարեանի կողմից, եւ այս որոշումն ընդունելու նպատակներից մէկը ներքին քաղաքական ճակատում պրոռուսական ճնշումներից, ներքին քաղաքական դաշտում կրեմլի աջակցութիւնը ստանալու ճնշումներից ձեռքազատուելն էր»:

Ռուսաստան Մեկնող Հայերին Տասնեակներով Սահմանից Ետ Են Ուղարկում

Վերջին մի քանի ամիսներին Ռուսաստան մեկնող ՀՀ քաղաքացիներից շատերին տարբեր պատճառաբանութիւններով, կամ առանց պատճառաբանութեան թոյլ չեն տալիս մտնել Ռուսաստանի Դաշնութեան տարածք եւ հետ են ուղարկում հենց սահմանից: «Ասացին՝ դիմէք դեսպանատուն, կը պատճառաբանեն, դեսպանատանն ասացին՝ մենք ոչինչ չենք կարող ասել, այդ հարցերով մեզ այլեւս չդիմէք», - NEWS.am-ին պատմեց Աշոտ Ալեքսանեանը, որին Յունուարի 10-ին հետ են ուղարկել Ռուսաստանի սահմանային անցակէտից: «Ես մեքենայով էի գնում: Հայաստանի սահմանն անցնելիս ոչ մի խնդիր չեղաւ, բայց Ռուսաստանի սահմանից արդէն շատերին էին հետ ուղարկում: Միայն մի ժամում 10 հոգու չթողեցին, որ սահմանն անցնի: Անձնագրիս տուեալները զտեցին ցանց, ասեցին՝ մինչեւ 2016թ. իրաւունք չունես մտնել

Ռուսաստան: Մարդ կար՝ իրեն ասեցին մինչեւ 2015թ.: Ամենակարեւորը, որ ոչ մի բան չպատճառաբանեցին՝ ինչու չեն թողնում», - պատմեց Աշոտ Ալեքսանեանը: Ռուսաստանից մէկ ամիս առաջ Հայաստան եկած երիտասարդ պատմեց, որ մոտքի արտոնագրի ժամկէտը ստիպուած է եղել երկարացնել Ռուսաստանում Հայաստանի դեսպանատանը՝ երկու ամիս ուշացումով: Կարծում է, որ հենց այդ պատրուակով իրեն թոյլ չեն տալիս անցնել սահմանը, թէեւ նախկինում էլ է նման խնդիր ունեցել, բայց սահմանն անարգել անցնել է: Ալեքսանեանը պատմեց, որ իր ծանօթներից շատերն են վերջին շրջանում նման խնդիրներ ունեցել: Այն մասին, որ Ռուսաստան գնալու իրաւունք չունեն, մարդիկ իմանում են միայն մաքսակէտ հասնելուց յետոյ, ոմանք Հայաստանում հանգիստ օդանաւ են նստում, բայց արդէն Ռուսաստանի օդանաւակայանից նրանց հետ են

Ադրբեջանը Բացայայտել է Ղարաբաղեան Պատերազմում Զոհուած Զինուորների Թիւը

Հրադադարի կնքումից մօտ 20 տարի անց Ադրբեջանի իշխանութիւնները հրապարակում են Ղարաբաղեան պատերազմում զոհուած զինծառայողների պաշտօնական թուաքանակն ու անուանական ցուցակը: Ադրբեջանի զօրակոչային-մրբի լիգայի պետական ծառայութեան պաշտօնական կայքում շաբաթակցերին հրապարակուած տուեալների համաձայն՝ 1991-94 թուականներին հակամարտութեան զօտու դարաբաղեան հատուածում, Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանագծին՝ ներառեալ հայ-նախիջեանեան սահմանը, զոհուել է ադրբեջանական բանակի 11 հազար 557 զինծառայող:

Ռուսական լրատուամիջոցները, ի դէպ, անդրադառնալով Բաքուի կողմից զոհերի քանակի պաշտօնական հրապարակմանը, չի շեղում են, որ 90-ականներին՝ դեռ մինչեւ հրադադարի կնքումը, ադրբեջանցի պետական գործիչները միանգամայն այլ թուեր էին հրապարակում: «1993-ի Հոկտեմբերին իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հետ հանդիպման ընթացքում այն ժամանակ Ադրբեջանի ղեկավարի պաշտօնը զբաղեցնող Հէյդար Ալիեւը խօսում էր 11 հազար զոհերի մասին: Դրանից մէկ շաբաթ անց ադրբեջանական հեռուստատեսութեան եթերում նոյն Ալիեւը խօսեց արդէն 16 հազար զոհերի մասին», - գրում է Lenta.ru-ն:

Տարիներ անց արդէն իշխամ Ալիեւը մէկ այլ թիւ էր մատնանշում՝ խօսելով 12-15 հազար զոհուած ադրբեջանցիների մասին: Այժմ ահա պաշտօնական Բաքուն կարծես որոշել է կանգ առնել հենց 11 հազար թուի վրայ:

Սա մի թուային ցուցանիշ է, որ նախկինում հանդիպում էր առաւելապէս ադրբեջանցի անկախ հետազոտողների աշխատութիւններում: Յայտնի բաթուեցի քաղաքագետ եւ պատմաբան Արիֆ Եւնուտովը, օրինակ, դեռ տարիներ առաջ հրապարակած յօդուածում նշում էր 11 հազար զոհերի, ինչպէս նաեւ 30 հազար վիրաւորների մասին:

Ի դէպ, ռուսմասիրելով Ադրբեջանի զօրակոչային-մրբի լիգայի ծառայողների հրապարակած ցանկը՝ կարելի է նկատել այն անհամաչափութիւնը, որով բաշխած են պատերազմում զոհուած ադրբեջանցի զինծառայողներն ըստ շրջանների: Այսպէս, պատերազմի սկզբնա-

կան շրջանի վրաւոր թատերաբեմերից մէկը հանդիսացած Շուշին տուել է ընդամէնը 29 զոհուած զինուորական, խոջալուն՝ աւելի քիչ՝ ընդամէնը 23: Փոխարէնը, այսօր հայկական ուժերի հսկողութեան տակ գտնուող շրջաններից զօրակոչուած եւ պատերազմում զոհուած զինծառայողների ցանկերից իւրաքանչիւրը ադրբեջանական գերատեսչութեան կայքում մի քանի էջ է զբաղեցնում: Օրինակ, տարածքով եւ բնակչութեամբ ոչ այնքան մեծ Ջաբրաիլի շրջանը, պաշտօնական տուեալների համաձայն, պատերազմում 110 զոհ է տուել, հարեւան Ֆիզուլին՝ շուրջ 300: Միանձնեայ առաջատարը, սակայն, 1993 թուականի Յուլիսին հայկական ուժերի հսկողութեան տակ անցած Աղդամն է՝ 577 զոհուած ադրբեջանցի զինուորական: Հրապարակուած տուեալներից դատելով՝ Աղդամից հիւսիս գտնուող Թարթառի շրջանը (նախկին Միր-Բաշիր) եւս լուրջ զոհեր է տուել պատերազմի ընթացքում՝ աւելի քան 200. սա եւս պատահական չէ, քանի որ պատերազմի վերջին ամիսներին՝ 1994 թուականի գարնանը, Մարտակերտի եւ Թարթառի շրջանների սահմանագիծը ռազմական ամենաթէժ գործողութիւնների թատերաբեմն էր:

Ադրբեջանական պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ երկրի զինուած ուժերը բաւական լուրջ զոհեր են տուել նաեւ անմիջականօրէն Հայաստանի Հանրապետութեանը սահմանակից շրջաններում: Այսպէս, Տաւուշի մարզին սահմանակից Ադրբեջանի երեք շրջաններ՝ Թովուզը, Աղստաֆան եւ Ղազախը միասին 1991-94 թուականներին շուրջ 600 զոհ են տուել: Զօրակոչամրբի լիգայի ծառայողների տուեալների համաձայն՝ երկրի մայրաքաղաք Բաքուին բաժին է հասնում զոհուած զինծառայողների ընդհանուր թուաքանակի մօտ 10 տոկոսը՝ շուրջ 1300 մարդ:

Հայկական կողմը Ղարաբաղեան պատերազմում կրած ռազմական կորուստների մասին որոշակի տեղեկատուութիւն նախկինում արդէն իսկ հրապարակել էր: Դրա համաձայն՝ Հայաստանի Զինուած ուժերը, Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակն ու ինքնապաշտպանական ջոկատները պատերազմի ընթացքում շուրջ 6 հազար 500 զոհ են տուել:

Ղարաբաղեան Հակամարտութեան Գօտում Կ'ամրապնդուի Ստատուս-քվոն

Ընթացիկ տարում դարաբաղեան հակամարտութեան գօտում կ'ամրապնդուի ստատուս-քվոն; Մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Կովկաս ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագետ Սերգէյ Մինասեանը: Ըստ նրա, փոփոխութիւններ գրեթէ չեն լինի բոլոր այն միտումներում ու սպասումներ, որոնք Հայաստանը փորձում է կեանքի կոչել:

«Հայաստանի՝ ՄՄ-ին անդամակցելու կապակցութեամբ որոշակի փոփոխութիւններ են տեղի ունենալու, որոնք նախանշանների մասին պատկերացում չունեն անգամ

գործող խաղացողները: Բացի այդ, հարց է ծագում, թէ Հայաստանը ինչ նոր ձեւաչափ կը փորձի ստեղծել կամ վերականգնել ու զարգացնել՝ կապուած ԵՄ հետ», - յայտարարել է Մինասեանը: Նա պարզաբանել է, որ բազմաթիւ երեւոյթների մասին պատկերացում չունեն անգամ Հայաստանի էկոնոմիկայի նախարարութիւնում ու Եւրասիական տնտեսական յանձնաժողովում: Նա նաեւ յաւելել է, որ կը շարունակուի հայ-թուրքական յարաբերութիւնների փակուղային իրավիճակը, ու այդ ֆոնին կը ստեղծուի տնտեսական ստագնացիայի նոր փուլ:

ուղարկում: Օդանաւի տոմսի արժէքն այդ դէպքում աւիաընկերութիւնը չի փոխհատուցում: Ամենայն հաւանականութեամբ, Ռուսաստանում օրէնք-

ների կիրառման նման խստացումը պայմանաւորուած է ֆետրուարի 7-ից 21-ը Սոչիում կայանալիք Օլիմպիական խաղերով:

ԿՐԿԻՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՄԵՋ

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դաուդթոլունի՝ Հայաստան այցի դէմ կազմակերպուած բողոքի ակցիային թուրքական առաջատար հեռուստատեսութիւններն ու կայքերն անդրադարձան ընդդէմ անց՝ «Դաուդթոլունի Երեւանում՝ սառը ցնցուղ» վերտառութեամբ: Որքանով էր Դաուդթոլունի ազդուած դրանից, դժուար է գուշակել, բայց որ այցը իրադարձային չէր եւ այդպէս էլ իրադարձային չդարձաւ, ակնյայտ է:

Ռուբէն Մելքոնեանը փաստում է. «Թուրքական կողմը հետագայում իր հոետորաբանութեան մէջ կը նշի, որ ցանկանում է բոլոր հարեւանների հետ լաւ յարաբերութիւններ հաստատել եւ, որպէս դրա առհաստէտեայ, կը նշի նաեւ այս հանդիպումը»: Գաղտնիք չէ, թուրքիայի արտաքին քաղաքականութեան գերակայութիւններից՝ զրօ խնդիր հարեւանների հետ ծրագրեր ոչ միայն յաջողութիւն չարձանագրեց, այլեւ՝ Սիրիայի դէպքերից յետոյ, սնանկ դուրս եկաւ: Միաժամանակ, ըստ թրքագէտ Ա. Իսպիրեանի՝ «Այսօր թուրքիայի թիւ մէկ խնդիրը Հայոց ցեղասպանութեան մօտեցող տարբերակներն են: Թեթեւ այս հանգամանքներով պիտի պայմանաւորել այդ երկրի օրաթերթերում՝ «Միլիթեթ», «Աքշամ», «Սաբահ», «Հուրիեթ» եւ այլն, փորձերը Դաուդթոլունի այցը ներկայացնել որպէս թուրքիայի համար խոշոր անակնկալ, բացառիկ շանս հայկական կողմին՝ բարեկարգելու հայ-թուրքական յարաբերութիւնները, բացելու հայ-թուրքական սահմանը:

Լրատուամիջոցների վերլուծաբանները ենթադրում են, որ Ահմեթ Դաուդթոլունի այցը մեծ նշանակութիւն ունի՝ այն անուանելով «առաջին դիւանագիտական ալիքը 2009 թ. ստորագրուած արձանագրութիւններից յետոյ»: Արձանագրութիւնների պատմութիւնն արդէն իսկ յուշում է, որ գոնէ առայժմ չափազանց անհեռանկարային է հայ-թուրքական յարաբերութիւնների ջերմացումը: Միաժամանակ, հաշուի առնելով տարածաշրջանային զարգացումները, թուրքիան, անշուշտ, ուզում է ինչ-որ կեցուածք ընդունել, իր ներկայութեան մասին հաղորդագրութիւնն տարածել, դրանով հանդերձ լեզանկանալով կամ յարմար չգտնելով իրատեսութեան գնահատել իրականութիւնը եւ թարմ ազդակներ հաղորդել արդէն աշխարհին յոգնեցնող իր դիւանագիտութեանը:

«Աքշամը» նշում է, որ թուրք արտգործնախարարը նախապայմաններով գինուած է գնում Հայաստան, եւ գլխաւոր նախապայմանն այն է, որ «եթէ հայկական կողմը գործերը դուրս բերի Լեռնային Ղարաբաղի յարակից առնուազն երկու շրջանից, ապա թուրքական կողմը պատրաստ է բացել հայ-թուրքական սահմանը»: «Սաբահ»-ն էլ Դաուդթոլունի այցից առաջ տպագրում է, իբր, հայկական կողմն արդէն իր պաշտօնական համաձայնութիւնը տուել է երկու շրջանների վերադարձի հետ կապուած: Թուրքական լրատուամիջոցների այսօրինակ աժիոտաժը համահունչ է թուրքական դիւանագիտութեանը եւ հիմնականում ներքին լսարանին է ուղղուած՝ միաժամանակ փորձ անելով ստուգել «հայկական ռեակցիան»: Երեւանում ընթացող Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան արտգործնախարարների խորհրդի նիստի շրջանակում Դաուդթոլունի եւ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հանդիպումից յետոյ վերջինիս յայտարարութիւնը կրկին հաւաստեց, որ հայկական կողմի «ռեակցիան» անփոփոխ է. «Հայաստանի եւ միջազգային հանրութեան դիրքորոշումը յստակ է. հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը պէտք է տեղի ունենայ առանց որեւիցէ նախապայմանի, ուստի թուրքական կողմի փորձերը դա կապակցել այլ հարցերի հետ, նախապայմաններ առաջ քաշել, ապարդիւն են եւ անիմաստ»:

Կասկածից դուրս է՝ թուրքիան Դաուդթոլունի այցը փորձելու է օգտագործել միջազգային հանրութեանը մոլորեցնելու եւ իր «ժողովրդավար» դէմքը ցոյց տալու համար, երբ իրականում ամբողջ մտածողութեամբ դեռ 20-րդ դարակերպում է եւ ոչ միայն չի հրաժարուել պանթուրքիստական քաղաքականութիւնից, այլեւ նախկինի պէս հակահայկականութիւնը թուրքերի հոգեկերտուածքի բաղադրիչն է: Թուրքիայի՝ նախապայմաններով առաջնորդուելու ոճը, գոնէ առայժմ հնարաւոր չէ խմբագրել, ինչի լաւագոյն վկայութիւնը այս երկրի նախկին նախագահ Սուլէյման Դեմիրելի յայտարարութիւնն է, որ «մի քանի գրոշ առեւտրի համար չեն պատրաստուում հայ-թուրքական սահմանը բացել»: Այնպէս որ, արտգործնախարարի այս այցն էլ կը մնայ առաւելապէս քարոզչական ոլորտում՝ կրկին հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնների հեռանկարը թողնելով անորոշութեան մէջ:

Գրական Թերթ

ԿԱՅԱՑԱԻ ՍՈՒՐԻԱՅԱՅԵՐՈՒ ՖԵՅՍՊՈՒԲԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՐԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Յունուար 13-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան մէջ տեղի ունեցաւ սուրիահայ ֆէյսպուքեան խումբերու պատասխանատուներու եւ ներկայացուցիչներու հանդիպում-քննարկումը: «Սուրիահայութեան տագնապը լուսարձակի տակ» նիւթով: Բացման խօսքով հանդէս եկաւ «Հայլէպահայեր» ֆէյսպուքեան խումբի («ARMENIANS OF ALEPPO») հիմնադիրներէն Բժիշկ Ռոպէրթ Սիւլահեան, ան կարեւոր համարեց ֆէյսպուքեան խումբերու դերը սուրիահայութեան հիմնախնդիրներու եւ անոնց լուծման, Սուրիոյ հայ համայնքի, սուրիական պատերազմին վերաբերեալ առարկայական տեղեկատուութեան տարածման հարցին եւ շնորհակալութիւն յայտնեց ՀՀ սփիւռքի նախարարութեան, ինչպէս նաեւ «Հայլէպոնոմ» դրամատան՝ քննարկում-հանդիպման կազմակերպման աջակցելու համար:

Ողջունելով հաւաքի մասնակիցները՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան շնորհաւորեց սուրիահայութեանը շոք տարուան եւ Սուրբ Ծնունդի առիթով՝ մաղթելով խաղաղութիւն եւ բարեկեցութիւն, ան շնորհակալութիւն յայտնեց այն սուրիահայերուն, որոնք մնացած են Սուրիոյ մէջ, կը պայքարին եւ կը պահպանեն համայնքը, ապա ներկայացուց պետութեան կողմէ սուրիահայերու համար տարուող աշխատանքները:

Նախարար Հրանտշ Յակոբեան ֆէյսպուքեան նախաձեռնութիւններու ներկայացուցիչներուն առաջարկեց մասնակցել ամիսը մէկ անգամ հրաւիրուող սուրիահայերու հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական մարմինի նիստերուն, ըլլալ առաւել տեղեկացուած եւ առարկայականօրէն ու անաչառ կերպով ներկայացնել կատարուող աշխատանքները:

ՀՀ սփիւռքի նախարարութեան Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքներու հետ կապերու վարչութեան պետ Լ. Ստեփանեան ներկայացուց սուրիահայերու իրաւական, ընկերային, առողջապահական, կրթական խնդիրներու ուղղութեամբ Հայաստանի մէջ իրականացուող աշխատանքները: Ֆէյսպուքեան «Հայլէպահայեր» խումբի ղեկավար Հրաչ Քալսահակեան ներկայացուց սուրիական հիմնախնդիրի վերաբերեալ

համընդհանուր լուրերու ծիրին մէջ սուրիահայութեան առընչուող լուրերը առանձնացնելու եւ զանոնք վերլուծելու ու նպաստաւոր ձեւով ներկայացնելու մօտեցումը: Ան նշեց, որ տեղեկատուական պատերազմին մէջ ոլորտի ներկայացուցիչները պէտք է տարբերակեն լրատուական այն հոսքերն ու մեխանիզմները, որոնք կրնան վնասել սուրիահայութեան, բացառելով երեւակայական մեկնաբանութիւնները, անստույգ տեղեկութիւններն ու անճշտութիւնները: Հրաչ Քալսահակեան նշեց. «Ժամանակն է, որ մենք եւ Հայաստանի, եւ արտերկրի մէջ իրականացուող աշխատանքներու վերաբերեալ քաջատեղեկ ըլլանք: Ապատեղեկատուութիւնը մեծապէս կրնայ վնասել սուրիահայերու ընդելուզմանը: Արհեստավարժ մօտեցում պէտք է ցուցաբերել եւ ներկայացնել սուրիահայութեան ցուցաբերուող օգնութեան վերաբերեալ ստույգ եւ առարկայական տեղեկատուութիւն, ստացուող օգնութիւններու չափերն ու անոնց բաշխման մեխանիզմները՝ խուսափելով տարբերութիւն անհարկի մեկնաբանութիւններից, որոնք յաճախ սեպ կը խրեն հայութեան տարբեր հատուածներուն միջեւ:

«Հայլէպահայեր» ֆէյսպուքեան խումբի ներկայացուցիչ, Լոնտոնաբնակ Թալին Մակարեան ներկայացուց Սուրիոյ հայ համայնքի ընկերային-հոգեբանական ծանր վիճակն այսօր, անոնց խնդիրները լուծելու ուղղութեամբ տարուած աշխատանքները:

Լիբանան հանգրուանած սուրիահայերու վիճակը եւ անոնց հիմնախնդիրներու լուծման ուղղութեամբ տարուող աշխատանքները ներկայացուց Արաքսի Փիլաճեան-Խորլարեան (Պէյրութ): Վազգէն Պերդուդեան ընթերցեց ֆէյսպուքի մէջ տեղ գտած այն հրապարակումները, ուր կ'արձարծուին սուրիահայութիւնը յուզող խնդիրները:

Չեռնարկին մասնակիցներու ուղղած հարցերուն պատասխանեցին Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան եւ միջգերատեսչական յանձնաժողովի անդամները:

Հաւաք-քննարկման ընթացքին քննարկուեցան ԶԼՄ-ներու եւ ընկերային ցանցերուն մէջ սուրիահայութեան մասին ճշգրիտ տեղեկատուութեան տարածման վերաբերող հարցեր:

րաւորուել են.. էլ չեմ ասում Հոկտեմբերի 27-ը.. Ու այդ ամէն ինչը մոռանալով՝ հիմա Քոչարեանն ուզում է գայ իշխանութեան: Ես կարծում եմ, որ ժողովուրդը չի ների, ճիշդ է, արտագաղթը մեծ է, ժողովուրդը յուսահատ է, բայց դա չի նշանակում որ լիջողութիւն չունի», - ըսած է Յովհաննիսեան:

Ժողովուրդի կողմէ ընտրուելու յոյս, գոհուածի մօր կարծիքով, Ռոբերտ Քոչարեանը չունի, այլ հարց է, եթէ քաղաքական ուժեր փորձեն զինք բերել իշխանութեան:

«Զարմանում եմ, որ այդ արիւնը, որ Քոչարեանի վրայ է, ոեւէ մէկը իրեն չի լիջեցնում», - ըսած է Ալլա Յովհաննիսեան. -

«Որեւէ քաղաքական ուժ, եթէ կանգնի Քոչարեանի մէջքին, ուրեմն այդ ուժը Հայաստանի թշնամին է, հայ ժողովրդի թշնամին է: Ուզում եմ լիջեցնել, որ այդ ոչ իշխանական ուժերին ժողովուրդը ձայն է տուել ոչ թէ նրա համար, որ նրանք Քոչարեանի մէջքին կանգնեն, Քոչարեան հետ բերեն, այլ նրանց մէջ այլընտրանք է տեսել»:

Մարտի 1-ի սպանութիւններու գործը մօտ վեց տարի է նախաքննութեան փուլին մէջ է եւ հակառակ Սերժ Սարգսեանի յանձնարարականներուն՝ թափ տալու քննութիւններուն, մինչեւ օրս ոչ ոք պատասխանատուութեան չէ ենթարկուած:

Մարտի 1-ի Զոհերու Ծնողները վրդովուած են

Շարունակուած էջ 1-էն

մարտիմէկեան իրադարձութիւններու բացայայտման համար մի քանի տարի ապարդիւն պայքարելէ յետոյ վերջնականապէս մեկնած է Հայաստանէն, «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հեռախօսային գրոցի ընթացքին ըսած է որ, լուրջ տարակարծութիւններ չեն կրնար ըլլալ գործող իշխանութիւններուն եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ:

տուլ է, իր ձեռքերն արիւնտուել է: Ու հիմա նրանց մէջ որեւէ հակադրութիւն լինի, ես չեմ հաւատում դրան: Ես համոզուած եմ, որ ներքին ինչ-որ պայմանաւորուածութիւն կայ, ուղղակի այդ ձեւով ուզում են Քոչարեանին առաջ քաշել: Դա նշանակում է, որ նրանք ծաղրում են մեզ, մտածում են, որ իրենք իրենց արածը մարտն են, ու հիմա հետ է վերադարձնում: Բացի գոհերից, կան նաեւ հազարաւոր վիրաւորներ, հալածեալներ, հազարաւոր մարդիկ կորցրել են աշխատանքը, հարիւրաւորները վի-

«...ՍԵՂՍԱԿԻՑ ԵՆՔ ՍԵՆՔ ԲՈԼՈՐՍ...» ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳՐՈՂ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ՝ ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻՆ

Յարգելի Ձօրի Բալայեան,

Կարդացի Ձեր նամակը ուղղուած «Ռուսաստանի Դաշնութեան նախագահ պարոն Վ. Վ. Պուտինին», այդ պատճառով էլ կրկին անգամ պէտք է բաց նամակով դիմեմ ձեզ: Կարծում եմ քննարկուող նիւթը շատերին կը հետաքրքրի, քանի որ նամակում արծարծուած հարցերը Հայաստանի ապագային են վերաբերում եւ շօշափում են հայ ժողովրդի արժանապատուութիւնը: Կարդալով Ձեր նամակը կարելի է տարբեր ենթադրութիւններ անել: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծուած, ասես հայ ժողովուրդի եւ Հայաստան երկրի գոյութիւնը դարձեալ վտանգուած են, այս անգամ արդէն անկախութեան դէպքում եւ խողող պայմաններում, որը շօշափում է նաեւ Ռուսաստանի շահերը, ուրեմն միակ ելքը՝ գրողը շտապում է Ռուսաստանի նախագահին յիշեցնել այդ:

Կարելի է նաեւ հետեւեալ եզրակացութեանը յանգել, ե՛ւ հայ ժողովուրդը ե՛ւ Հայաստանի վերնախաւը արժանի չեն նկատուած անկախ երկիր ունենալ կառավարելու համար:

Սա ապտակ է Հայաստանի իշխանաւորների երեսին, եթէ իհարկէ նրանք այդ հասկանան, եւ միայն այդ տեսակէտից կարելի է այն դրական համարել: Բայց Ձեր կողմից կրկնուած է նոյն սխալը՝ մեր ազգային հարցերի լուծումը՝ ցեղասպանութեան ճանաչումից սկսած, մինչեւ Հայաստանի եւ Արցախի ե՛ւ անվտանգութեան ե՛ւ տնտեսական, ինչպէս նաեւ քաղաքական, սպասել այլ պետութիւնների բարի կամքից:

Պատմութիւնից մեզ յայտնի է իսրայէլ Օրիի գործունէութիւնը, ով հայրենասիրական գաղափարներով տարուած եւ Հայաստանը փրկելու մտադրութեամբ, մէն-մենակ ճանապարհ ընկաւ Եւրոպայի մեծամեծների եւ իշխանների դռները թակելու:

Հայրենիքի ապագայի նկատմամբ մտահոգութիւնը, ազնիւ նպատակներ հետապնդելը, անարատ հայրենասիրութիւնից մղուելով ինչ որ գործունէութիւն ծաւալելու ընթացքը, բոլորովին էլ չեն կարող երաշխիք լինել, թէ ընտրուած քայլը եւ այդ ընթացքը ճիշտ են, հենց այդ պատճառով էլ թոյլ տուէք ժողովրդի լեզուով դիմել ձեզ:

Յարգելի Ձօրի Բալայեան, ի՞նչ էք կորցրել եւ ի՞նչ էք որոնում:

Այո, դուք շատ լաւ գիտէք, թէ ինչ ենք կորցրել եւ կորցնում: Դուք, մենք, հայ ժողովուրդը կորցրել է հաւատը իր երկրի լաւ ու անվտանգ ապագայի նկատմամբ, իսկ սա չարիքների մեծագոյնն է, այն էլ մօտ քսան տարի արցախեան փայլուն յաղթանակից եւ անկախութիւն ստանալուց յետոյ: Գիտեմ որ դուք բոլորից աւելի լաւ գիտէք պատճառները, գիտեմ, որ հենց այդ պատճառով էլ դուք բոլորից աւելի շատ էք տառապում, սակայն հրապարակաօրէն խոստովանել, բարձրաձայնել եւ մէկի «խաթրին» դիպչել չէք կարող, կամ չէք ցանկանում, որովհետեւ կամայ, թէ ակամայ շղթայուած էք: Որովհետեւ դուք էլ շատ գրողների եւ մտաւորականների նման, կամայ, թէ ակամայ դարձել էք ներկայիս տիրող վերնախաւի, եթէ ոչ համախոհը, ապա ճամբորդակիցը, գերեվարուած էք նրանց ցանցում: Բայց կողմնակի մարդկանց կողմից չէ, որ պէտք է ասուի, թէ մտաւորականութեան տեղը այդտեղ չէ, որտեղ նրանք հաստատ որ իրենց օտար են զգալու: Բայց դժբախտաբար Հայաստանի մտաւորականութեան մի մասը այլեւայլ պատճառներով իշխանութիւնների կողմից ներքաշուել է մի յորձանուտի մէջ, որից նա դուրս գալ չի կարողանում, չի համարձակուում, նոյնիսկ չի էլ փորձում, որի մտաւոր եւ հոգեւոր կարողութիւնը, ձիրքը եւ տաղանդը ներկայ վերնախաւի կողմից շահագործուած է իր իշխանութիւնը ամրապնդելու համար, այն վերնախաւի, որը իր գործողութեամբ ընդդէմ երկրի անվտանգութեան եւ ժողովրդի շահերի, երկրում տիրող ճգնաժամը օրէցօր աւելի է խորացնում եւ այդպիսով վտանգում երկրի ապագան: Իհարկէ որ այս կացութեան համար նաեւ մեղսակից ենք մենք բոլորս, ներառեալ մտաւորականութեան այն ներկայացուցիչները, ովքեր լքել են երկիրը, ինչպէս նաեւ կառավարող շրջաններից հեռու կանգնած քաղաքական այն գործիչները, ազգային այն կուսակցութիւնները, թէ՛ հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում, որոնք իրենց լուրթեամբ եւ իրենց կրաւորական պահուածքով քաղաքական ասպարէզը միանգամայն գիշել են իշխանութիւններին:

Ձեր նամակից նաեւ այն տպաւորութիւնն է ստացուում, ասես հայ

գրողը մարտի դաշտում բարձրացնում է ձեռքերը, յանձնուած է եւ օգնութիւն է հայցում իր եւ իր վտանգուած հայրենակիցների համար: Նման պահուածքը նուստացուցիչ է այն անձանց համար, ովքեր, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ արտերկրում, պայքարում են եւ փորձում են ելք գտնել: Դուք փոխանակ այդ պայքարող ուժերի հետ լինէք եւ փորձէք նրանց աջակցել, նրանց հետ ելք որոնել, կանգնէք յուսահատուած, այս կողմ այն կողմ դեգերող ժողովրդի կողքին եւ Ձեր իշխանաւոր ընկերներին, հովանաւորողներին պարզ ասէք, թէ այդ ի՞նչ էք անում, դէպի ո՞ր անկումն էք գլորում երկիրը, դիմում էք Վլադիմիր Պուտինին, յարգալից եւ ինչ որ տեղ խոնարհաբար (թող ինձ ներուի այս ասել), ցանկանում էք նրան յիշեցնել, թէ Ռուսաստանի շահերը որտեղ են, թէ Հայաստանը եղել է Ռուսաստանի մաս եւ նա կորցնում է այն: Սա յիշեցնում է նաեւ տանուլ տուող եւ այլ ելք չտեսնող ու չորոնող մարդու՝ օգնութիւն կանչող յուսահատ ճիչ: Ինչո՞ւ էք կարծում, որ յատկապէս նա՞ Վլադիմիր Պուտինը չգիտի, թէ որտեղ են Ռուսաստանի շահերը, հարկաւոր է նրան յիշեցնել այդ եւ նրան պատմութեան դասեր տալ: Միթէ՞ նա չէ, ով, ինչ որ յատուկ ծրագրեր հետեւելով, դատարկում է Հայաստանը եւ դուք եւ միւս մտաւորականները եւ իշխանաւորները ապշած, մի կողմ կանգնած դիտում էք այդ եւ անգամ բողբոջու անգոր էք:

Բայց երեւի ինչ որ մարդիկ կը գտնուեն, ովքեր կը համաձայնուեն ձեզ հետ, եւ այլ ելք չտեսնելով մի չարաբաստիկ օր, կամ ըստ Խ. Աբովեանի, օհնուած մի օր կը գնան եւ Վլադիմիր Պուտինից թախանձագին կը խնդրեն, քանի դեռ ուշ չէ, Հայաստանը միացնել Ռուսաստանին, որովհետեւ անգամ եւս, այն էլ 21-րդ դարում Հայաստանի ներկան եւ ապագան մեզ չուշում են, որ հայ ժողովուրդը ընդունակ չեղաւ եւ երեւի չէ, իր երկրում այնպիսի հասարակական մեխանիզմներ եւ պետականութիւն ստեղծել, որպէսզի կարողանար միւս ժողովուրդների նման արժանավայել եւ անկախ ապրել:

Դիպուկ է ասել Վինստոն Չերչիլը. «Իւրաքանչիւր ժողովուրդ արժանի է այն կառավարութեան, որ ունի»:

Այստեղ աւելի օգտուելով ցանկանում եմ ձեզ հետ նաեւ մի այլ հարց արծարծել, որն ինձ մօտ առաջացաւ ձեր «Դրախտ եւ Դժոխք» գիրքը կարդալուց յետոյ:

Այդ ինչպէ՞ս եղաւ, որ դուք՝ որպէս սովետական հասարակութիւնում ուսում առած բժիշկ, հասարակական գործիչ, հրապարակախօս, սկսեցիք այդպէս ջերմեռանդ հաւատալ Աստուծոյ գոյութեանը, որ երբեմն որոշ երեւոյթներ այնպէս էք նկարագրում, բացատրում, ասես դա Աստուծոյ կամքով է այդպէս կատարուել, կամ էլ Աստուծոյ նկատմամբ հաւատի բացակայութիւնը, տրամաբանական հետեւանքն է այս, կամ այն բացասական երեւոյթի նման ընթացքի:

Անհաւատալի է, բայց դուք գրում էք.

«Այն ինչ Աստուած է տնօրինում» (Էջ 343):

«Յաճախ եմ մտածել, որ հենց ամենակարգից ամէն ինչ սահմանուել է Աստուծոյ կամքով» (Էջ 499):

Տարիներ առաջ Հայաստանի հեռուստատեսութեան առաջին ծրագրով եւ այն էլ ուղիղ եթերով, ինչ որ պատմաբան դոկտ. պրոֆեսոր Խօսուի էր հայ ժողովրդի դէմ կատարուած ցեղասպանութիւնից, հայ ժողովրդի պատմութիւնից, դարաւոր արհաւիրքներից եւ վերջում առանց այլեւայլի սասց.

«Աշխարհում ինչ որ կատարուում է, կատարուում է Աստուծոյ կամքով»:


Սա սոսկալի յայտարարութիւն է, սա անուշի մոլորութիւն է: Այսինքն ի՞նչ, այսինքն եղեւնը կատարուել է Աստուծոյ կամքով: Այսինքն հենց ի-սկզբանէ ինչ որ ողորմելի եւ անօգնական նախամարդի հետ կատարուել է, ապա կատարուել է Աստուծոյ կամքով: Միթէ՞ մարդկութեան կողմից կատարուած բոլոր յանցագործութիւնները, նաեւ կրօնի անուշից, հրահրած եւ մղած պատերազմները կատարուել են Աստուծոյ կամքով: Մի-թէ՞ աշխարհի վրայ ի սկզբանէ Աստուծոյ կամքով է ստեղծուած մարդկութեան քիչ տոկոսի դրախտային եւ մեծամասնութեան դժոխային կեանքը: Չէ որ իւրաքանչիւր բանական մտածող մարդ պէտք է ինքն իրեն հարց տայ, եթէ՞ դա այդպէս է, ապա, արդեօ՞ք մարդկութեանը եւ յատկապէս մեզ հայերիս համար, պէտք է նման դաժան, մարդկութեան եւ մեր հայրերին այդքան տառապանքներ պատճառող Աստուծուն հաւատալ եւ դեռ նրան երկրպագել եւ այսօրուայ մեր կեանքում եղած տարատեսակ դժուարութիւնների լուծումը, որոնց պատճառը եւ հեղինակը մենք ինքներս ենք, հայ մարդիկս, հայ իշխանաւորները, նրանից սպասել:

Եւ ընդհանրապէս, մի-թէ՞

Շար.ը էջ 18








Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աժիւրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻ 74ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻՈՈՎ ՊԱՏԳԱՍ

ՎԵՐ. Ե. ՍԱՐՄԱՋԵԱՆ

Կասկած չկայ թէ Սփիւռքի օտար եւ անտղորմ տարածքին վրայ, հայրենակցական միութիւնները այսօր կորսնցուցած են իրենց համայնքն ու կորովը եւ հետզհետէ ալ աւելի կը կորսնցնեն: Էր ատեն մը՝ 1930-60 թուականներուն մանաւանդ, եւ յատկապէս Մերձաւոր Արեւելքի հայաշատ քաղաքներու մէջ, հայրենակցական միութիւնները ազգային ուշագրաւ, գործօն եւ գրաւիչ միաւորներ էին: Թերեւս անոր համար որ անոնց անդամներուն շատերը ծնած ու մեծցած էին մօտակալ Կիլիկիոյ գաւառներուն մէջ, որոնց դաշտերուն բոլոր տակաւին իրենց վրայ էր եւ գուլալ ջուրերու կարկաչը իրենց ականջներուն մէջ կը հնչէր: Ոմանց ֆիզիքական վէրքերը հազիւ սպիւնացած էր այն ատեն իրենց դէմքերուն եւ մարմիններու վրայ, իսկ շատերու կուրծքերուն տակ կարօտախտը, գաղթականութիւնը եւ նահատակուած հարազատներու անմոռանալի վիշտը ասեղորէն կը կոտորէր եւ կը ճարակէր իրենց իւրաքանչիւր բջիջին մէջ, անգութ քաղցկեղի անգուսպ մանրէներու նման: Բնականաբար, հայրենակցական միութեան մը կազմակերպութիւնը անոնց համար, համագոր էր իրենց համայն գաւառացիներուն համախմբումին՝ միեւնոյն երդիքին տակ: Բնականաբար, հայրենակցական միութեան շէնք մը անոնց համար եկեղեցիի մը շէնքին չափ սուրբ էր, եւ զանկա կառուցանել նոյնքան եւ աւելի սրբազան եւ ստիպողական առաքելութիւն մը, գորս կը կատարէին ամենայն երկիւղածութեամբ եւ առաւելագոյն գոհողութեամբ: Երնէ կը իրենց, երնէ կ'այն օրերուն...

Անշուշտ այսօր նոյն պատկերն ու վիճակը չեն ներկայացնէր հայրենակցական միութիւնները: Անոնցմէ ոմանք արդէն մարած հրաբուխներ են, ուրիշներ՝ մահաբուռնի մէջ եղող ծերերու կը նմանին, ոմանք՝ պարտուած եւ յոռետես գինուորներու, ուրիշներ՝ գիսաւորներու, նահանջ տարիներու կամ Փետրուար 29-երու...

Բայց արդար ըլլալու համար պէտք է ըսել որ անոնցմէ ոմանք տակաւին կը մնան պատնէշի վրայ, կը պայքարին վիրաւոր առիւծներու եւ մահացու հիւանդութենէ տառապող երիտասարդներու պէս, որոնք սակայն կը մերժեն մեռնիլ: Երիցս գնահատելի այդ տասնեակ մը միութիւններու շարքին կը դասուի Մարաշի Հայրենակցական Միութիւնը իր այլազան մասնաճիւղերով: Պատիւ եւ յարգանք իրենց:

Արտերկրի երկնակամարէն հայրենակցական միութիւններու հետզհետէ անհետանալը անշուշտ ցաւալի իրողութիւն մըն է, եւ մեծ կորուստ մը, ոչ միայն մեր տոհմիկ աւանդութիւնները, այլ նոյնիսկ ազգայիններ գոյութիւնը պահելու անողոք պայքարին՝ մեր առաջին եւ կարեւորագոյն պարտականութեան մէջ: Որեւէ հայրենակցական միութիւն, մեծ կամ պզտիկ, տկար կամ զօրաւոր, տակաւին անհրաժեշտ միաւոր մըն է, որովհետեւ անոր որեւէ մէկ ձեռնարկը կաթիլ մը հարազատ արիւն է իր հայու արիւնէն պարպուող եւ օտար արիւնէն վարակուած եւ հետզհետէ արիւնաքամ եղող սերունդին համար: Յետոյ, ուսանողներու համար անոնց

հայթայթած կրթանպաստները, եկեղեցական եւ դպրոցական շէնքերու կառուցման գործերու մէջ բերած իրենց նիւթաբարոյական աջակցութիւնը, եւ դեռ Հայաստանի վերականգնումի ծովածաւալ կարիքին հասցուցած իրենց նպաստը, եթէ նոյնիսկ այս բոլորը համեստ կաթիլներ են՝ միայն, անոնք տակաւին անգնահատելի եւ անփոխարինելի ներդրումներ են հայապահպանման եւ Հայաստանի վերականգնումի գիծով, մանաւանդ երբ նկատի ունենանք տասնեակներով այն կազմակերպութիւնները եւ հարիւր հազարաւոր հայ ունեւոր անհատները, որոնք կը զլանան իրենց նպաստը վերոնշեալ սրբազան նպատակներու:



Գնահատելով հանդերձ հայրենակցական միութիւններու գոյութիւնը եւ առաքելութիւնը, անհրաժեշտ է սակայն որ ըլլանք իրապաշտ, հասկնանք ու հանշուռի կ'հետզհետէ անոնց չբանալու ցաւալի գաղափարին հետ, որովհետեւ անոնց գոյութիւնը պահող եւ հրահրող հիմնական երկու ազդակները անդարմանելիօրէն բացակայ են, ու պիտի մնան ոչ միայն Սփիւռքի, այլ նաեւ հայրենիքի մէջ: Հիմնական այդ երկու ազդակներն են - Ծննդավայր եւ Գաւառաբարբառ, առանց որոնց հայրենակցական միութիւնները պահելը սերունդէ սերունդ շատ դժուար է, եթէ ոչ անկարելի: Ասոր համար բոլոր յանցանքը կամ պատասխանատուութիւնը միայն նոր եւ գալիք սերունդներուն վրայ դնելը շիտակ չէ, արդար չէ: Չենք կրնար ակնկալել որ օտար քաղաքներու մէջ ծնող եւ մեծցող սերունդները, որոնք նաեւ չեն խօսիր Կիլիկիոյ գաւառաբարբառներէն մէկը կամ միւսը, զգան, ապրին եւ գործեն իրենց ծնողներուն կամ մեծ ծնողներուն պէս, որոնք ծնած եւ ապրած են Կիլիկիոյ գաւառներուն մէջ, մանաւանդ երբ ակամայ՝ բռնի ուժով ու խարազանի հարուածներով անոնցմէ դուրս քշուած են, դեռ առանց հաշուելու իրենց կորսնցուցած տունները, հարազատները եւ ոմանց չարանքները եւ սպանութիւնը իրենց իսկ աչքերուն առջեւ:

Հոս երկուստեք անհրաժեշտ է գիրար հասկնալ, հանդուրժել եւ չմեղադրել բանի մը համար որուն պատասխանատուն ոչ մէկն է եւ ոչ ալ միւսը: Հաւանաբար «ճակատագիր» պէտք է ըսել եւ անցնիլ...

Եւ խորհիլ բաներու եւ պարտաւորութիւններու շուրջ-ընել այն ինչ, որ կարելի է ընել եւ պէտք է ընել լոկ իբր հայեր:

Այսօր, համայն Սփիւռքի կամ արտերկրի մէջ, մեր իւրաքանչիւրին մեծագոյն հարցը եւ գլխաւոր պարտականութիւնը մեր հայրեն-

ակցականութիւնը պահել չէ, այլ մեր Հայութիւնը: Նոյնն է պարագան միւս բոլոր հայ կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն, ըլլան անոնք կուսակցական, մշակութային կամ բարեսիրական, ըլլան անոնք դպրոց, եկեղեցի, նոյնիսկ - եւ մանաւանդ - ընտանիք: Մեր գաւակներուն համար այլեւս Մարաշի, Խարբերդի, Քէսապի կամ որեւէ գաւառացիի գիտակցութեամբ ապրիլը, դժբախտաբար անկարելի է, եւ այդ ուղղութեամբ մեր մտահոգուիլը՝ անտեղի եւ ապարդիւն: Բայց թէ՛ անոնց եւ թէ՛ մեզի համար կարելի է, եւ խիստ անհրաժեշտ է, ապրիլ հայու գիտակցութեամբ՝ իբր հայ: Մէկ խօսքով՝ պահել մեր ազգութիւնը: Սփիւռքը կարելի է կերպով մը նկատել ճակատագիր, որուն պատճառն ու պատասխանատուն, ըսենք թէ մենք չենք: Բայց

Անշուշտ կայ նաեւ հայրենիքի վերականգնումի նոյնքան կարեւոր եւ ստիպողական հարցը բոլոր հայ կազմակերպութիւններուն, եւ իւրաքանչիւր հայու համար անխտիր: Բայց եւ համոզուած եմ որ թէ մեզի՝ սփիւռքահայերուն, եւ թէ հայրենիքի ժողովուրդին համար, մեր գոյութիւնը պահելը շատ աւելի կարեւոր եւ առաջնահերթ հարց է քան հայրենիքի վերականգնումը կամ ուրիշ որեւէ ազգային հարց: Արդէն Սփիւռքահայութեան մեծ տոկոսը եթէ այլապէս եւ հայութեան պարպուած չըլլար, հայրենիքի վերականգնումը շատ աւելի արագ եւ դիւրին կ'ըլլար: Արդարեւ, եւ դժբախտաբար, Սփիւռքահայութեան փոքր մէկ տոկոսը միայն մասնակցեցաւ, եւ իր նիւթական կարելիութիւններուն (որքան ալ յարգելի ու գնահատելի) միայն չնչին մէկ մասը յատկացուեցաւ հայրենիքի վերականգնումի վսեմ առաքելութեան:

Հաւատացէք որ պիտի գայ օրը, երբ հայրենիքի պատերազմը պիտի վերջ գտնէ, երկրաշարժին հետեւանքները պիտի դարմանուին, հայ աղջիկները պիտի հարսանան եւ հազար հազար մանուկներ պիտի ծնին եւ լեցնեն հայրենի տունները, պիտի սպիանան բոլոր վէրքերը, պիտի կերտուի նոր ու հզօր հայրենիք մը, սակայն իւրաքանչիւր Սփիւռքահայ - մանուկ կամ երիտասարդ - որ կ'ուժանայ եւ կ'այլասերի, փոստ որ ա'լ պիտի չգայ եւ անդարմանելի կորուստ մը պիտի ըլլայ համայն հայութեան համար:

Հաւատացէք որ երկրաշարժի ու պատերազմի գոհերը կերպով մը - իրենց հոգիով, շունչով եւ լիշատակներով - կը դառնան ու կը մնան մեզի հետ: Միայն այլասերումի գոհերը երբեք չեն դառնար...


Այո, մեր առաջին, հիմնական եւ կարեւորագոյն հարցը՝ մեր օրուայ հացը ապահովելուն պէս, մեր հայութիւնը պահել է այսօր: Երանի, պատիւ եւ յարգանք բոլոր այն կազմակերպութիւններուն, միութիւններուն, ընտանիքներուն եւ անհատներուն, որոնք որեւէ կերպով, ի գին ամէն գոհողութեան, հոսանքն ի վեր թիավարելով՝ կ'աշխատին հայ մնալ, նոր սերունդը հայ պահել եւ ազգը փրկել ի սպառ ուժացումէ եւ այլասերումէ:

Սփիւռքի մէջ մեր հայութիւնը կորսնցնելը ընտրութիւն է, մեր իսկ գիտակցական ընտրութիւնը, որու միակ եւ լման պատասխանատուն մենք ենք եւ ոչ թէ տեղական աննպաստ պայմանները: Մարդ այն է ինչ որ են իր ընտրութիւնները: Եթէ կ'ընտրենք մեռնիլ, իբր հայ, անշուշտ թէ կը մեռնինք: Եթէ կ'ընտրենք ապրիլ, անշուշտ թէ կ'ապրինք: Եթէ որոշած ենք լուծուիլ, կը լուծուինք, եթէ որոշած ենք հայ մնալ, կը մնանք: Եկէք այսօր ընտրենք, որոշենք, վճռենք եւ ուխտենք միանգամընդմիջտ, թէ պիտի մնանք հաւատարիմ մեր նախահայրերու ոգիին, մեր նահատակներու կտակին, ի սէր մեր հայրենիքին, անոր ստեղծուածն ենք բոլորս ալ - համայն աշխարհը, տիեզերքը եւ բոլոր ազգերը:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«ԴԻԼԻՉԱՆ» ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ ԶԱՄԵՐԳԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 75 ԱՄԵԱԿԻՆ



Կիրակի, Յունուար 12ին, 2014 թիւ, Լոս Անճելոսի «Ջիբբըր Հոլ» համերգասրահը լեւի լեցուն էր հայ եւ օտար երաժշտասէր հասարակութեամբ: Արդարեւ, այդ օր Լարք Երաժշտանոցի հովանաւորութիւնը վայելող «Դիլիչան» սենեկային նուագախումբն իր հերթական համերգը նուիրած էր ժամանակակից հայ ականաւոր երգահան-կոմպոզիտոր՝ Տիգրան Մանսուրեանի ստեղծագործութիւններուն, իր ծննդեան 75 ամեակին առթիւ:

Համերգի սկիզբը «Դիլիչան»ի գեղարուեստական ղեկավար անուանի ջութակահար Մովսէս Պողոսեանն իր բացման խօսքին մէջ հակիրճ գիծերու մէջ ներկայացուց վաստակաշատ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրեանի կենսագրականը: Ծնած է Պէլլոթի 27 Յունուար 1939ին: 1947ին Հայաստան ներգաղթել է ետք հետեւած է Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանի յորինողական բաժինը եւ զայն աւարտած 1965 թուականին: Դասաւանդած է Երեւանի կոնսերվատիվում (երաժշտանոց) մէջ: Իր ստեղծագործութիւններու համալիրական երաժշտութեան նուաճումներու եւ ազգային երաժշտութեան մշակութի լաւագոյն ակնդրութիւններու միաձուլման համոզիչ օրինակ է: Ունի քանի մը տասնեակ յորինումներ սիմֆոնիք նուագախումբի, ինչպէս նաեւ ջութակի, երգեհոնի, թաւջութակի նմանապէս երաժշտութեան ֆիլմերու համար, երգչախումբային գործեր, մեներգներ, խմբերգեր եւ այլն:

Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական իւրաքանչիւր յայտագիր մը, մեծ մասամբ Տիգրան Մանսուրեանի ստեղծագործութիւններէ բաղկացած: Հեղինակի 2011ին յորինած նրբասրինգի (գլարինէթ) մենակատարումը առաջին անգամ ըլլալով ունկնդրուեցաւ ԱՄՆ-ի մէջ: Ուշագրաւ էր Տ. Մանսուրեանի «Ջութակի սոնատա թիւ 2»: Ինքնատիպ գործերէն մին էր 15 երաժշտական տարբեր գործիքներով «Tovem»ի կատարումը, ղեկավարութեամբ Վաչէ Պարսումեանի եւ մասնակցութեամբ «Դիլիչան» սենեկային նուագախումբին:

Վերոյիշեալ միջոցառումի փայլուն աստղն էր շնորհաշատ եւ խոստմնալի երգչուհի (սոփրանո) Շուշիկ Պարսումեանը: Արդարեւ, ան մեծ ապրումով եւ իւրաքանչիւ կերպով մեկնաբանեց Պողոս ձեւալեանի եւ Ռոմանոս Մելիքեանի ստեղծագործութիւնները: Տարուէ տարի զգալիօրէն նշմարելի է երիտասարդ երգչուհի արձանագրած նուաճումները երգարուեստի բնագաւառին մէջ:

Համերգի աչքառու եւ մասնաւոր յիշատակութեան արժանի արուեստագէտներն էին նաեւ Մարք Ռոպպոնը (դաշնամուր), Ֆիլ Օզանոր (նրբասրինգ), Սալբի Քերքոնեան (սրինգ), Մովսէս Պողոսեան (ջութակ), Ռոպերթ Պրոֆի (վիոլա) եւ Անթոնիո Լիսի (թաւջութակ) ինչպէս նաեւ մայիսթրօ Վաչէ Պարսումեան (խմբավար):

Ձեռնարկի աւարտին ներկաները յոտնկայս եւ երկարատեւ ծափող յոյներով գնահատեցին ականաւոր արուեստագէտ Տիգրան Մանսուրեանի վաստակը, որ անձամբ ներկայ էր:

«Պատիւս արժանաւորաց»:
Գ. Մ.

«ԶԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ, ՄԱՅՈՒՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅՐԻՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱՅՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏՈՍԱՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ»



Կիրակի, 8 Դեկտ. 2013 թուին, Ազգային Առաջնորդարանի Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան սրահին մէջ, չաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի տեղի ունեցաւ պատմական եւ վիճակագրական հետաքրքրութիւն ներկայացնող դասախօսութիւն մը, կազմակերպութեամբ Քրեանթա Հովիտի Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ դաստիարակչական յանձնախումբին: Տիգր Պերճ Զատոյեան, յանուն Քրեանթա Հովիտի դաստիարակչական յանձնախումբին, բարիգալուստ մաղթեց ներկաներուն եւ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց օրուան դասախօս՝ Փրոֆեսոր Յարութիւն Արմէնեանը, որ Քալիֆորնիոյ Համալսարանի Հանրային Առողջապահութեան Ակադեմիական Ծրագիրներու Գործակից Տնօրէնն է եւ համաճարակագիտութեան փրոֆեսոր: Արժանացած է Հայաստանի Հանրապետութեան կողմէ Մովսէս Խորենացի նախագահական շքանշանին 2001 թուին, ինչպէս նաեւ Լիբանանի Մայրիներու պետական շքանշանին:

Ապա ներկաներու ծափահարութիւններու ներքոյ Պրն. Զատոյեանը բեմ հրաւիրեց Յարգարժան դասախօսը, որ ունկնդիրներուն հասկնալի ոճով ներկայացուց, ինչպէս եւ ամենայն պատասխանատուութեամբ պատրաստուած համաճարակներու, մահացութեան եւ այրիութեան վիճակագրական տուեալները: Անոնք ուսումնասիրութիւնները սկսած էին 1980 թուականին՝ հիմք ընդունելով Միջին Արեւելքի, ի մասնաւորի Լիբանանի Ս. Նշան մայր եկեղեցւոյ, Եգիպտոսի եւ եւրոպայի 16 երկիրներու ծխական համայնքներու եկեղեցական տոմարներու արձանագրութիւնները, որոնցմէ ոմանք ունէին մինչեւ 300 տարուայ վաղեմութիւն: Դոկտ. Յարութիւն Արմէնեանն ու իր գործակիցները, հենուելով այդ տուեալներու վրայ եւ ի մի բերելով զանոնք, կարողացած էին ի յայտ բերել պատմական հետաքրքրութիւն ներկայացնող եւ վիճակագրական ու պատմական նշանակութիւն ունեցող հաւաստի փաստեր, որոնք ժամանակին տպագրուած են միջազգային գիտական պարբերաթերթերու մէջ:

Յարգարժան դասախօսը ընդգծեց, որ պատմութիւնը, համաճարակները, մահացութիւնները

ու անոնց պատճառները պէտք է ուսումնասիրել ո՛չ միայն օտարներու տուեալներով, որոնք հիմնուած են իրենց ազգային, երբեմն խեղաթիւրուած արխիւային տուեալներու վրայ, այլ անհրաժեշտ եւ առաջնահերթ է ունենալ մեր ուրոյն ազգային-եկեղեցական արխիւները՝ զանոնք որպէս փաստարկ ներկայացնելու առ որ անկէ, միջազգային ատեաններու կամ պատմաբաններու առաջ, պայմանով՝ որ անոնք պատրաստուած ըլլան գիտական հիմունքներով եւ ճշգրիտ հաշուարկներու հիման վրայ: Ան նշեց նաեւ, որ մեր եկեղեցական տոմարներուն վրայ հիմնուելով, կարելի կ'ըլլայ անուղղակի եւ մօտաւոր գաղափար մը կազմել այդ երկիրներու ժողովուրդներուն ընդհանուր կացութեան վրայ:

Փրոֆեսորը նշեց, որ իրենց ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ Հայկական ցեղասպանութեան յաջորդող 20 տարիներու ընթացքին, սպանդէն ազատած հայերու մօտ, մանկական մահացութիւնը կրկնապատկուած է: Հետաքրքիր էր նաեւ որ համեմատաբար ձմռան ամիսներուն յատուկ եւ յաճախակի նկատուող հիւանդութիւնները, ինչպիսիք են measles եւ այլ շնչական համակարգի հիւանդութիւններ, մեծ տոկոսով նկատուած էին նաեւ ամռան եղանակին, որոնք հետեւանք էին մանուկներու անմիթթար ապրելակերպին եւ բժշկական խնամքի պակասին: Նոյնպիսի մահացութեան աճ նկատուած էր նաեւ օսմանեան բանակին մէջ ծառայող հայ զինուորներու մօտ: Մահացութեան, հիւանդացութեան եւ համաճարակներու ուժգնութեան զգալի տարբերութիւններ արձանագրուած էին նաեւ camp-երու մէջ եւ camp-երէն դուրս ապրող հայրերներու մօտ:

Հետաքրքրական էր իմանալ, որ ըստ այս ուսումնասիրութիւններու, 65 տարեկանէն վեր իրենց կիները կորսնցուցած տղամարդկանց մօտ, մահացութեան տոկոսը կրկնակի բարձր եղած է, քան իրենց կանանց հետ ապրողներու մօտ: Իսկ իրենց ամուսինները կորսնցուցած այրիներուն մօտ, մահացութեան նման աճ չէ արձանագրուած:

Ապա Յարգարժան դասախօսը ընդգծեց եկեղեցական տոմար-

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

Massis Weekly

Volume 34, No. 1

Saturday, January 18, 2014

Renowned Conductor Aram Gharabekian Passes Away at 58

Armenia's Ministry of Culture has reported the untimely passing of renowned conductor Aram Gharabekian, who has died in the United States after suffering a heart attack. Gharabekian was 58 years old.

The US-born musician was the artistic director and principal conductor of the National Chamber Orchestra of Armenia. In 1983 he founded and until 1991 directed and conducted the Boston Sinfonova Orchestra.

As a guest musician, he has been the principal guest conductor of the Zagreb Philharmonic Orchestra, and appeared with the Sinfonietta München. He has also led the Ukrainian National Symphony, the Ukrainian State Opera and Ballet, the West Ukrainian Philharmonic, Armenian Philharmonic Orchestra, Shreveport Symphony Orchestra, Fresno Philharmonic, Zhejiang Symphony Orchestra and Hangzhou Symphony Orchestra and Chorus.

He was a merited artist of the Republic of Armenia and a holder of the Movses Khorenatsi medal.

See related article on page 3

Relatives Of 2008 March 1 Victims: Kocharian Has no Moral Right to Again Govern Armenia



Relatives of opposition protesters killed in the 2008 post-election violence in Yerevan on Tuesday decried former President Robert Kocharian's perceived plans to return to the political arena and warned opposition groups against cooperating with him.

They said that Kocharian has no moral right to again govern Armenia

because of his key role in the deadly break-up of street protests against vote rigging in the February 2008 presidential election, which formalized the handover of power from Kocharian to Serzh Sarkisian.

Eight supporters of the main opposition presidential candidate, Levon Ter-Petrosian, and two police servicemen were killed as security forces

tried to disperse thousands of people who barricaded themselves in downtown Yerevan on March 1-2, 2008. Kocharian vigorously defended the use of lethal force at the time, saying that it thwarted a coup d'état planned by the Ter-Petrosian-led opposition. The latter insisted, however, that the authorities deliberately killed people to enforce the official results of a rigged election.

More than 100 Ter-Petrosian loyalists were arrested and charged in the following weeks. By contrast, no law-enforcement officials or other individuals were prosecuted in connection with the ten deaths.

"I would advise Robert Kocharian not to return to politics. Shame on him," Sargis Kloyan, whose son Gor was among the victims, said, commenting on the ex-president's latest public statements that have stoked fresh speculation about his political comeback.

"He must be expelled from Armenia." Kloyan told RFE/RL's Arme-

Continued on page 2

New Book Provides Shocking Evidence of German Co-Responsibility in Armenian Genocide

"Keep Turkey on our side ... whether as a result
Armenians do perish or not."

The German ambassador in Constantinople, Count Paul Wolff-Metternich, wrote to the Imperial Chancellor, Theobald von Bethmann Hollweg, in Berlin on December 7, 1915:

... Our displeasure over the persecution of the Armenians should be clearly expressed in our press and an end be put to our gushing over the Turks. Whatever they are accomplishing is due to our doing; those are our officers, our cannons, our money... In order to achieve any success in the Armenian question, we will have to inspire fear in the Turkish government regarding the consequences. If, for military considerations, we do not dare to confront it with a firmer stance, then we will have no choice but... to stand back and watch how our ally continues to massacre.

The Chancellor's response:

The proposed public reprimand of an ally in the course of a war would be an act which is unprecedented in history. Our only aim is to keep Turkey on our side until the end of the war, no matter whether as a result Armenians do perish or not.


TORONTO –The Zoryan Institute is pleased to announce that the long-awaited English edition of *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, compiled and edited by Wolfgang Gust, has just been released by Berghahn Books. It contains hundreds of telegrams, letters and reports from German consular officials in the Ottoman Empire to the Foreign Office in Berlin which describe in graphic and shocking detail the unfolding genocide of the Armenians. The documents provide unequivocal evidence of the genocidal intent of the Young Turks and the German government's official acquiescence and complicity.

Upon the earlier release of the

German and Turkish editions of the book, the media reacted emphatically:

Frankfurter Allgemeine Zeitung [Germany]—"The documents collected here illustrate clearly the shared responsibility of the Kaiserreich, the most important ally of the Ottoman Empire during the First World War... They are therefore largely undisguised and so vivid that the reader often shudders when reading them."

Forum Wissenschaft [Germany]—"Wolfgang Gust documents, in this excellent political-historical edition from contemporary German sources and the Foreign Office of the Reich government, the murderous events themselves... as well as the political co-responsibility of the German



state.

Hurriyet Daily News [Turkey]—"If you read the book and look at the documents, if you are a person who is introduced to the subject through this book, then there is no way that you would not believe in the genocide and justify the Armenians."

GUSTThe exceptional importance of these documents is underscored by the fact that only German diplomats and military officials were able to send uncensored reports out of Turkey during World War I. Apart from the Americans, who remained neutral in the war until April 6, 1917, German diplomats and their informants

Continued on page 3

Against Genocide Association Criticizes Kurdish Leader's Anti-Armenian Statement

Germany-based Against Genocide Association criticized Kurdistan Communities Union (KCK) Executive Council Co-President Bese Hozat.

Hozat had stated that the Armenians and the Greeks have a parallel state in Turkey, and they hinder the democratization of the country.

Against Genocide Association released a disapproving statement addressed to Hozat, Demokrathaber website of Turkey reports.

The statement noted that the genocide victims are not an obstacle before Kurdish independence.

"The real barrier before the independence of the Kurdish people is the Republic of Turkey, which is guilty of genocide," the statement read, in particular.

In an interview with the Kurdish Firat news agency, and speaking about the parallel state which Islamic opinion leader Fethullah Gulen's movement has established in Turkey, Hozat had also reflected on the Armenians, Greeks, and Jews. She had noted that, aside from the official state, there also are parallel states in Turkey.

"The Jewish lobby, the nationalist Armenians and Greeks are such parallel states. Such parallel states are

Continued on page 2

2014 Index of Economic Freedom: Armenia 18th Among 43 Countries in the Europe Region


Armenia is ranked 18th among the 43 countries in the Europe region in the 2014 Index of Economic Freedom released by the Wall Street Journal and the Heritage Foundation.

According to the report, Armenia's economic freedom score is 68.9, making its economy the 41st freest

in the 2014 Index. Its overall score has declined by 0.5 point from last year, primarily due to combined deteriorations in investment freedom, business freedom, and fiscal freedom.

Over the 20-year history of the Index, Armenia has improved its economic freedom score by 26.7 points, the fourth largest score increase. Recording score improvements in eight of the 10 economic freedoms, including monetary freedom, management of public finance, trade freedom, and financial freedom, Armenia has advanced from economic repression 20 years ago to economically "moderately free" today. Facilitated by the broad advancement of economic freedom, diversification of the economic base has enhanced Armenia's economic dynamism and reduced poverty.

Nonetheless, substantial challenges remain, particularly in implementing deeper institutional and systemic reforms that are critical to strengthening the foundations of eco-



nomically. Both the protection of property rights and freedom from corruption are far below world standards, and the legal framework continues to be weak.

For 20 years The Heritage Foundation, in partnership with The Wall Street Journal, has tracked the march of economic freedom around the world with the influential Index of Economic Freedom based on 10 quantitative and qualitative factors, grouped into four broad categories, or pillars, of economic freedom: Rule of Law (property rights, freedom from corruption); Limited Government (fiscal freedom, government spending); Regulatory Efficiency (business freedom, labor freedom, monetary freedom); and Open Markets (trade freedom, investment freedom, financial freedom).

Armenia's neighboring countries and Customs Union member states are ranked as follows: Georgia – 22nd, Iran – 173rd, Azerbaijan – 81st, Turkey – 64th, Russia – 140th, Belarus – 150th, Kazakhstan – 67th.

Relatives Of 2008 March 1 Victims

Continued from page 1

nian service (Azatutyun.am). "I am sure that one day he will go on trial. He may have forgotten our loss, but we haven't."

"It's amazing that Kocharian is now criticizing those for whom he stained his hands with blood," said Alla Hovannisian, the mother of Tigran Khachatrian, another young man killed in the unrest. "There is a lot of apathy, but it doesn't mean that the people have forgotten what Kocharian did."

"I don't believe that there are disagreements between [Kocharian and Sarkisian,]" added Hovannisian. "I believe that there is some secret deal to promote Kocharian. They are making

fun of us."

Both parents stressed that they believe the current and former presidents are equally responsible for what was the worst street violence in Armenia's history. They also rebuked opposition forces for their muted reaction to Kocharian's possible comeback.

"Their kids didn't die and they stayed away from trouble," Kloyan said of unnamed opposition leaders. "But I can't forget [what happened in 2008] because I'm raising [Gor's] orphaned kids."

"I am surprised that nobody is reminding Kocharian of the blood on his hands," said Hovannisian. "A political force standing by Kocharian would be an enemy of the Armenian people."

Against Genocide Association Criticizes

Continued from page 1

in touch with one another and have interests from each other.

"Parallel states do not have formal and constitutional rights. It seems they do not have troops either, but they have an organized and a strong structure," the Kurdish woman militant had said.

Hozat also had claimed that these parallel states hinder the establishment of democracy in Turkey.

Numerous Turkish, Kurdish and Armenian intellectuals, the T24.com.tr website, and the vice-chairs of the Peoples' Democratic Party (HDP) of Turkey, however, strongly criticized Bese Hozat for her statement.

Pope Francis Sends his Blessings to the Armenian Nation



On January 13 Pope Francis received the Ambassadors accredited to the Vatican, Press and Information Department of the Ministry of Foreign Affairs reports.

During the traditional annual reception Armenia's Ambassador to the Holy See Mikael Minasyan had a short

conversation with Pope Francis.

The Leader of the Catholic Church asked to convey his warm greetings to Armenian President Serzh Sargsyan, His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and his blessings to the whole Armenian nation.

Armenian National Team to Face Germany in a Friendly-Benefit Match



YEREVAN — Armenian national team will face Germany in a friendly-benefit match on 6 June 2014 in Mainz, making it the first full international to be played in the city, reports the Football Federation of Armenia.

The DFB Egidius Braun Foundation will organize the fixture, with the proceeds going to the various foundations of the DFB and the League Association.

The match will be national team's final fixture before they jet off for the 2014 FIFA World Cup in Brazil. "We're delighted to have concluded our plans for the World Cup with this a third

friendly against Armenia following the ones against Poland and Cameroon", said DFB Secretary General Helmut Sandrock. "The match isn't just important from a sporting point of view.

The proceeds from the game will ensure the foundations are able to continue their excellent work and various projects into the future." Benefit matches have a long tradition in Germany.

Germany have won each of their two previous meetings with Armenia, winning 5-1 away and 4-0 at home in qualifying for the 1998 FIFA World Cup.

Armenia to Host Chess World Team Championship 2015

Armenia will host World Team Championship 2015, according to FIDE's official website. The event will take place from March 1 to 15.

The Women's World Team Championship 2015 will also take place in Armenia in the same period.

The World Team Chess Championship is an international team chess event, eligible for the participation of 10 countries whose chess federations dominate their continent. It is played every two years. In chess, this tournament and the Chess Olympiads are the most important international tournaments for teams.

Armenia has won the team title in



2011 and hosted the event once before in 2001.

The European Individual Men's Tournament as well will be held in Yerevan in March.

In Memoriam: Aram Gharabekian



By Heghinar Melkom Melkomian

The man with a simple baton: but a great talent, who left an even greater legacy ...

This piece turned out to be the hardest writing challenge I have ever faced. How do you tell the story of someone who has touched so many lives, brought change, spread love both through music and by simply being exceptionally kind and modest; someone who has done more than can be written down in just a few lines. How do you talk about and refer to someone who is no longer with us in person, but whose legacy will always live on? How do you keep it short but intense, just like his life and career.

Aram Gharabekian was born and raised in an average working class family in 1955. The realization that music was much more than a hobby led him to study music and composition at the New England Conservatory in Boston. He continued his postgraduate studies in Musical Phenomenology at Mainz University, Germany. In Italy, his conducting guru was Franco Ferrara and at the tender age of 24, he became one of the few conducting pupils of the legendary Sergiu Celibidache in Germany. Gharabekian also studied composition and conducting under Jacob Druckman and Leonard

Bernstein at Tanglewood Music Center in Massachusetts.

Music is not constrained by boundaries or time; it touches lives, shapes history, connects people and cultures and helps bring social change. A true bearer of this philosophy, throughout his career Maestro Gharabekian frequently performed at open air concerts to make classical music accessible to all, including the underserved communities.

He started his extraordinary journey by becoming the founder and conductor of the Boston SinfoNova Orchestra in 1983. The Orchestra excelled with performances in major American venues, including Carnegie Hall, the Dorothy Chandler Pavilion and Boston's Symphony Hall and Jordan Hall.

A guest appearance with the Ukrainian National Symphony Orchestra in 1991 changed his life and he became its Artistic Advisor and Conductor. "Following last Friday night's concert of the Ukrainian National Symphony in the Ukrainian Palace of Culture, we can attest to the fact that Armenian born American conductor Aram Gharabekian has transformed our orchestra to an unrecognizable musical standard", said Yuri Romazanov of the *Kievsky Gazette*.

Taking one challenge after the

other he moved to his homeland Armenia, to become the Artistic Director and Principal Conductor of the National Chamber Orchestra of Armenia in 1997. Under his directorship until the year 2010, he introduced a new face of classical music in the country by staging unforgettable performances. One such notable performance was when the audience showed up to find that there were no chairs for them and the concert began without any musicians on stage. The latter carried their instruments around with them, played while moving in and out of the crowd, and for the first time the musicians and the audience were on the same "stage", on the same level - all equal, all playing, all listening and all feeling.

He went on to undertake other challenges and with the launch of the Open Music Fest international music festival in 2009, he crushed many stereotypes in Armenia by mixing different genres, setting collaborations between artists from different cultures, taking classical music out of halls to open spaces, playing with the backdrop of historical sites and even adding a dash of fun to the performances by using children's musical instrument toys next to sturdy classical instruments.

In the words of Lane Crockett from *Shreveport Times*, "Gharabekian's conducting is not flashy, just solid and determined. His arms reach out and the orchestra obeys. He has good balance in that he not only can get the big dramatics, but also find the quieter subtleties in the works."

His work and efforts have not been in vain. Aram Gharabekian re-

ceived numerous prestigious awards, including a special proclamation by the United States Congress, Armenia's Presidential Medal of Honor, the Lucien Wulsin Award, the ASCAP Award, a special diploma by the ECO-ETNO-FOLK Film Festival for the DVD of an open-air concert recorded at the ancient Garni temple in Armenia, and the Harvard Musical Association's Best Performance Award.

Throughout his tragically short career Gharabekian commissioned and premiered over 40 works of various composers. He mentored and taught music to young talents. He also earned accolades as guest-conductor of several orchestras in the United States, Canada, the UK, Germany, France, Switzerland, Greece, Cyprus, Russia, Georgia, Lebanon, and the UAE.

John Lanouette Brenner wrote in the *Post-Gazette*: "Aram Gharabekian has to be one of the finest young conductors on the scene today. To watch him control his ensemble is a joy in itself. He works with elegant flair and great dignity."

Besides being a talented musician, Aram Gharabekian was also a beloved son, brother, uncle and friend. Unfortunately many of you may not have had the privilege of knowing him personally. He was kind, caring and loving, always helping, supporting and inspiring others; a true role model. Today we grieve and commemorate his untimely death on a personal, national and international level; however, parallel to this we must not forget that in reality people like Aram Gharabekian never die. His legacy will live on for generations to come.

New Publication:

"The Armenian Genocide. The Mechanisms of Decision-making and Implementation"

The Armenian Genocide Museum-Institute has published the work of Doctor of Historical Science Arsen Avakyan "The Armenian Genocide, The Mechanisms of Decision-making and Implementation". The book reveals the mechanisms of decision-making and their implementation during World War I and the years after war, based on archives and primary sources.

The book analyzes deeply the inner structure of The Committee of Union and Progress, which made the decision of Armenians extermination, the intergroup configuration of power in the central body of this party, and the structure and creation process of "Special Organization". It also covers the responsibility of Young Turks and the Parliament in destruction the Chris-

tian population all over the Ottoman Empire during World War I.

The book also discusses the participation of the army in the genocide against the Armenian population. Some documents from Turkish archives have been put in scientific circulation, including legislation of Ottoman Parliament regarding the deportation of the Armenians, the orders of Young Turks signed by Talaat Minister of Internal Affairs, and other ministers, as well as quotations from the records of court hearings about the deportation of Armenians and the massacres, which was going on during the deportations. The book is addressed to historians, researchers studying the history of World War II, orientals, as well as to wide audience.

New Book Provides Shocking Evidence

Continued from page 1

from the missions or employees of the Baghdad Railway were the most important non-Armenian eyewitnesses of the Genocide. These documents, meant strictly for internal use and never intended for publication, are remarkable for their candid revelations. Even as allies of the Ottoman Empire, German officials still felt compelled for moral and political reasons to report and complain about the atrocities being committed against the Armenians by their Ottoman ally.

In describing how he came to undertake this massive project, Gust writes,I was shocked to see the Germans again playing an important role in mass murder at the edge of Europe. This genocide was neither initiated nor committed by Germans, but was widely accepted by them. Imperial Germany was the closest ally of the Young Turks and had a formal

military alliance with them. Was there a link between these two most important genocides in Europe? Did the Nazis copy the methods of the Young Turks, who had committed the Armenian Genocide? Were the two World Wars in reality one historical event, as some historians believe?

Questions upon questions. Was Imperial Germany a driving force in the genocide of the Armenians, or possibly even the source of the idea, as some non-German historians have suspected.... Did Imperial Germany view the Armenian Genocide with indifference or with sympathy? Did some Germans or part of the leading class resist the deportations and mass killings? And finally, did Germany have the power to stop the Armenian Genocide, and if they were able to so, why did they not make use of this power?

The answers to these questions are found in this prodigious 800-page collection. For more information about

the book, please contact the Zoryan Institute zoryan@zoryaninstitute.org or telephone 416-250-9807.

The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916, compiled and edited by Wolfgang Gust. New York and Oxford: Berghahn Books, 2014. \$89.95US, \$95.50CDN.

The Zoryan Institute is a non-profit, international center devoted to the research and documentation of con-

temporary issues with a focus on Genocide, Diaspora and Homeland. The Zoryan Institute through its division, the International Institute for Genocide and Human Rights Studies, runs an annual course in comparative genocide studies in partnership with the University of Toronto and is co-publisher of Genocide Studies International in partnership with the University of Toronto Press. For more information please contact the Institute by email

Ara Güler's Exhibition Opens in Washington

Twenty black-and-white photographs of lesser-known sites in Turkey — the work of Turkish Armenian photographer Ara Güler, — are on display in the intimate exhibit “In Focus: Ara Güler’s Anatolia,” at the Arthur M. Sackler Gallery, The Washington Post reports.

A legend, Güler, 85, is called the “Eye of Istanbul” for his 1950s and ’60s photos of street scenes that are among the most iconic representations of the city.

The Istanbul native, whose photographic archive includes some 800,000 images, got his start in the 1950s as a photojournalist for Hayat (the Turkish “Life” magazine) and went on to a distinguished career that included working at Magnum Photos with luminaries including Henri Cartier-Bresson and publishing his work around the world.

The works in “In Focus” — never previously shown — come from a set of 53 photographs donated to the museum in 1989 by Raymond Hare, U.S. ambassador to Turkey from 1961 to 1965. Hare had a keen interest in Middle Eastern architecture, and the photos were a gift from colleagues when he left Turkey.

Shot at locations across Anatolia, the photographs mainly portray medieval Seljuk and Armenian monuments, along with a few other sites including the stunning IshakPasaPalace in Dogubayazit, built by the Ottomans in the 18th century.

The photos of Armenian sites, including the 10th-century Church of the Holy Cross on Akdamar Island in Lake Van, are especially poignant because Güler himself belongs to Istanbul’s Armenian community.

By the time he photographed the

remote ruins of Ani in northeastern Turkey — capital of the Bagratuni Armenian Kingdom in the 10th and 11th centuries — the buildings had badly deteriorated, caused by both natural forces and centuries of neglect. The facade of the crumbling Church of the Redeemer — only half of which remains erect after a lightning strike — appears surrounded by thick, overgrown grasses, as if it had stood untouched for years.

Güler has a distinctive photographic style, and the exhibit treats his photos as “art,” emphasizing aesthetic elements such as dramatic lighting, composition, texture and framing. Labeled only with names, locations and dates, the works are divided into four (slightly contrived) thematic sections, each paired with a quotation from Güler and commentary that encourages viewers to contemplate the artistic qualities of the images.

While presenting Güler’s photos as art is valid, to a certain extent it removes them from their cultural and historical context. A wide shot of the Church of St. Gregory of Tigran Honents in Ani, for example, shows a deep river valley that snakes between two hillsides directly behind the church. What isn’t revealed is that this river forms the boundary between Turkey and Armenia; the border itself is lined in places with mines and has been closed since 1993.

“Nevertheless, even without an in-depth examination of their political and historical significance, Güler’s photographs are compelling in their beauty and narrative power. Whether viewed as “art” or “documentation,” they capture a moment in Turkey that has long since vanished,” the article reads.

AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show



The AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show is almost here! All final preparations are well underway and it looks like it is going to be another fabulous event. This year’s theme is “It’s A Small World After All...”. An appropriate theme for Children helping Children in this small world of ours.

The show will feature exclusive fashions from Bloomingdale’s, Sherman Oaks! Nearly 60 beautiful and handsome young models are expected to walk the runway. The luncheon co-chairs, Alice Chakrian and Eileen Keusseyan have a wonderful and industrious committee which includes fashion show chairs, Christina Jabarian, Betty Balian and Caroline Tufenkian. There is still time to include your children in the fashion show. If you are interested, please contact the numbers listed below, or simply send an email to eilesq@aol.com.

This year, similar to last year, a very special and theme appropriate child sponsorship pin will be introduced by Tina Segel “which will allow the sponsor to be recognized as a guardian of these angelic little faces who are in so much need of our help”, says Tina. The Committee is certain that each sponsor will wear the pins with love and pride and encourage others to sponsor as well and claim their own pin.

And once again, we are overjoyed

and very excited to announce that Jessica Vartoughian will be donating to each guest an exclusive gift bag, containing wonderful items from her personal cosmetic line. What a treat for our attendees!

Of course, no AMAA luncheon can be complete without an over-the-top silent auction. This year, the co-chairs of the Auction, Nicole Nishanian and Leslie Shahinian are shepherding their extraordinary 24/7 Silent Auction Committee and doing a phenomenal job. The impressive items at the luncheon are simply amazing!! The list is just too much to include in this announcement but Alice and Eileen are delighted with the great support they are receiving from their 34 committee members with their input and their procurements!!

On February 22, 2014, the Beverly Hills Hotel is the place to be — amongst family and friends — to be part of an event that can change the lives of so many children in a land that is far away by distance, but so very close in our hearts...because it’s a small world after all...

For reservations or further information, please contact Alice Chakrian at (818) 388-6734, Eileen Keusseyan at (818) 404-5686 or Elizabeth Agabian at (310) 476- 5306. Ticket donations are \$95.00. But please hurry.... We are limited in capacity and are selling out very quickly...

Deadline Extended for AUA Summer 2014 Program



The American University of Armenia (AUA) has extended the deadline for the AUA Summer 2014 Program. The new deadline for applying is February 15, 2014.

Comprised of three weeks at Armenia’s very own university offering a global education, AUA Summer 2014 is an opportunity to get acquainted with the legacy and culture of the Armenian people in an American-accredited institution, while at the same time getting in touch with modern-day Armenia.

Lectures and presentations on Armenian Heritage & Culture, Armenian Music, and Armenian Art & Architecture will be interspersed with

excursions to concerts or theater, historical sites in Armenia, as well as visits to museums and galleries.

The AUA Summer 2014 Program is open both to current students and also to individuals generally interested in the topic areas covered by the courses. Because of AUA’s American accreditation, the courses will carry units which may be transferable to your home university according to its guidelines.

The program will run from June 9 to 27, 2014. Applications are now being accepted through February 15.

For more information — and to apply — visit summer2014.aua.am or e-mail summer2014@aua.am.

Dr. Ronald Marchese to Speak at Fresno State on “Art and Society: Armenian Constantinople”

Dr. Ronald Marchese will discuss his recent research in Constantinople/Istanbul with a talk on “Art and Society: Armenian Constantinople” at 7:30 PM on Thursday, January 30, 2014. This Leon S. Peters Foundation Lecture will be held in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus and is part of the Armenian Studies Program Spring 2014 Lecture Series.

Dr. Marchese is professor of ancient history and archaeology at the University of Minnesota, Duluth and has spent the last several years documenting the rich cultural history of the Armenians in Constantinople, by studying the works of arts that the Armenians produced. He will accompany his talk with slides of some of the artwork that he has catalogued.

The lecture will present illus-

trated examples of “Constantinople Style.”

Dr. Marchese received his Ph.D. from New York University and has a distinguished career in archaeology, having conducted research at the Plataiai Archaeological Excavation in Greece and at Tel Dor in Israel. He is the author of numerous articles and book chapters in the field. He is an alumnus of California State University, Fresno.

He is the author, together with Marlene Breu, of *Splendor and Spectacle: The Armenian Orthodox Church Textile Collections of Istanbul* (Çitlembik Ltd., Istanbul, 2010).

The lecture is free and open to the public.

For more information on the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669.

ԴՈԿՏՈՐ ԱՐԵԼ ՔԱՅԱՆԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ «ՉԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՐՅԵՐՈՒ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ՅԱՐՑԸ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Դոկտ. Արմենուհի Կոստանեան


Հայոց Մեծ եղեռնի 100-ամեայ տարելիցին ընդառաջ Յեղասպանութեան զոհերի սրբադասման հարցն առաւել քան արդիական է: Յայտնի է, որ այն քննարկուել է նաեւ 2013 թ. Սեպտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովում: Յաւոք տեղեկատուական բնոյթի հաղորդագրութիւններից բացի ոչինչ չհնչեց եւ հայութեան համար այսքան կարեւոր նիւթը բաւարար կերպով չմեկնաբանուեց եւ չներկայացուեց հանրութեանը: Այնուամենայնիւ այս հարցը դարձաւ հանրային քննարկման առարկայ, արտայայտուեցին թեր եւ դէմ կարծիքներ, ցաւօք, առանց հիմնարկի մասին խորը պատկերացում ունենալու:

Բարեբախտաբար մեր շրջապատում դեռ կան խորը աստուածաբանական գիտելիքներով օժտուած նուիրեալ հոգեւորականներ, ինչպիսին է Տէր Աբել քահանայ Մանուկեանը, ով իր հետաքրքրական եւ յոյժ կարեւոր ուսումնասիրութեամբ լրացնում է մեր հոգեւոր, եկեղեցական, ինչու ոչ՝ նաեւ քաղաքական կեանքում Մեծ Եղեռնի զոհերի սրբադասման վերաբերեալ եղած բացը:

Հեղինակն իր «Երկու խօսք»-ը սկսում է պատմական ակնարկով. Հետաքրքրական է, որ Յեղասպանութեան զոհերի սրբադասման հարցն արծարծուել է դեռեւս Հայաստանի Առաջին Հանրապետութեան տարիներին, երբ հայ անուանի գրող Վրթմանէս Փափագեանը նամակով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցին՝ առաջարկելով Հայոց Տօնացոյցի մէջ ամրագրել Ապրիլի 11ը (հին տոմարով)՝ իբրեւ «Յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին թրքական վայրագ սրից»: Նախորդ դարի 70-ական թուականներից սկսած այս խնդիրը կրկին քննարկուել է Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի, Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Շնորհ Արք. Գալուստեանի, Տիրան Արք. Ներսիսեանի, Զարեհ Արք. Ազնաւուրեանի եւ Մեսրոպ Արք. Աշճեանի կողմից:

Դոկտ. Աբել քահանայ Մանուկեանի հեղինակած գիրքը իմաստային ու բովանդակային առումով շատ խիտ եւ ընդգրկուն է: Հեղինակը խորապէս քննում է Յեղասպանութեան նահատակների սրբադասման հարցը բարոյական, եկեղեցաբանական, աստուածաբանական, կանոնական, ծիսական տեսանկիւններից՝ տալով համակողմանի բացատրութիւն եւ սպառնիչ պատասխաններ:

Մեծ եղեռնի 100-ամեակը համարելով նահատակներին սրբադասելու վճռական առիթ՝ հեղինակը հոետորական հարցադրում է կատարում, թէ «Ո՞վ սուրբ պիտի հռչակէ Հայոց Յեղասպանութեան աւելի քան մէկուկէս միլիոն նահատակները եթէ ոչ Առաքելական Եկեղեցին Հայաստանեայց, որուն սուրբ աւագանին ծնունդներն էին Ապրիլեան նահատակները» (էջ



23): Սրբերի առկայութիւնը ընդունելով որպէս եկեղեցու կենսունակութեան նշան՝ Նա օրինակ է բերում Հռոմի կաթողիկ եկեղեցուն, որտեղ մինչ օրս շարունակուում են սրբեր եւ երանելիներ հռչակուել (նրանց թոււմ՝ 1915թ.

զոհուած Մարտինի հայ կաթողիկ Արքեպիսկոպոս երանելի Շուքրալլահի իգնատիոս Մալոյեանը):
Լինելով քրիստոնէական աստուածաբանութեան եւ աւանդութեան խորը տեսաբան Աբել Մանուկեանն առանձին ենթաբաժիններում բացատրում է, թէ ովքեր են սրբերը եւ ինչպէս է իրականացուել սրբադասումը քրիստոնէական, մասնաւորապէս Հայ եկեղեցու աւանդութեան մէջ (էջ 28-29, 51-58): Յայտնի է, որ Հայ եկեղեցում սրբադասման առանձին կանոն չի պահպանուել, սակայն օրինակները հաշուի առնելով կարելի է ասել, որ սրբադասումն իրականացուել է հետեւեալ պայմաններում. 1. Անձի սրբակեցութիւնը, 2. հաւատքի համար նահատակութիւնը, 3. կրօնական-աստուածաբանական երկերի առկայութիւնը, եկեղեցանուէր ու ազգանուէր գործունէութիւնը: Այս վերջին պարագայում հեղինակը որպէս մտաւորականների կերպարը խորհրդանշող Կոմիտաս վարդապետին, ում. «խորին խորհուրդով» լեցուն երգարուեստը, ինչպէս նաեւ Սրբազան Պատարագը, հրաշակերտած է շատերու հոգին, աստուածային սիրով ճմլած է հայրողիներու սիրտը, անոր «Տէր Ողորմեան» պատճառ դարձած է անկեղծ ապաշխարութեան, քաւիչ արցունքի, ու հո-

գեպէս վերածնած է բոլոր անոնք, որոնք թերեւս Աստուծոյ եւ ընդհանրապէս մարդասիրութենէ կը հեռանային» (էջ 58):
Ներկայացնելով Հայ եկեղեցում տօնելի սրբերի հոյլը հեղինակը նկատում է, որ Հայոց Տօնացոյցի մէջ վերջին սրբերն են Յովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին: Փաստօրէն 15 ըդդարից ի վեր մենք չունենք սրբադասումներ մինչդեռ, ինչպէս նշում է գրքում մեր պատմութիւնը լեցուն է նահատակներով եւ քրիստոնէական հաւատքի ճշմարիտ վկայութիւններով. «Եկեղեցին ինքը, բառիս իսկական առումով, միասնաբար իր ժողովուրդին հետ դարձած է վկայեալ ու վկայող մարտիրոս մը, կղզեակ մը քրիստոնէական ջինջ հաւատքի՝ մահմետականութեան, այլակրօնութեան, ինչպէս նաեւ երբեմն անաստուածութեան այլամերժ ովկիանոսին մէջ: Եկեղեցին ինք մարտիրոսացած է իր ժողովուրդին հետ, ապա յառնած է հուրի եւ մոխիրներու մէջէն որպէս նոր փրկելի, վերստին կեանք եւ վերապրելու աննկուն ոգի բաշխելով իր հայկազուն հօտին» (էջ 35): Ապրիլեան նահատակների սրբադասումը հեղինակը համարում է նոր ժամանակների հոգեւոր եւ

Շաբ.ք էջ 20

Նոր Մերունդ Մշակութային Միութիւնը

Կը ներկայացնէ
"Արարատ Երազ-Խումբ 2013"ի
Արարատ լեռ բարձրանալու, Անի եւ Աղթամար Այցի վաւերագրական տեսաժապաւէնը



Տեղի կ'ունենայ
Ուրբաթ Յունուար 24, 2013 երեկոյեան ժամը 8:00-ին
ՀԿԲՄի Կարօ Սողանալեան սրահէն ներս,
1060 N Allen Ave. Pasadena, CA 91104

Մուտքը ազատ **Հիրասիրութիւն**

ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՄԵՌԱԲ, ԲԱՅՑ ՈՉ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Ձախեն աջ՝ Սոնա Նաչեան, Հրայր Ճէպէնեան, Հուրի Ապամեան, տիկին Կիրակոսեան, Զուարթ Մանուկեան, Փոլ Կիրակոսեան, Լորա Գուլուսեան եւ տնօրէն Արամ Պուլղուրեան

ՀՐԱՅՐ ՃԷՊԷՆԵԱՆ

Մարդկային ծնունդը ընդհանրապէս ուրախութեամբ ընկալուած է: Նոյնը չէ պարագան կեանքի աւարտին՝ մահուան: Եթէ առաջինը նոր աշխարհ գալու վիճակն է՝ կեանք մը սկսելու, երկրորդը՝ մնաք բարովի եւ վերջնական բաժանումի... Նոյն կեանքի երկու հակադիր կողմերու իրավիճակն է, որ պէտք է ընդունիլ ինչպէս որ է...:

Կարելոյը այն է, որ կայ ծնունդին եւ մահուան միջեւ ինկող եւ այդ երկուքը գիրար կապող ու ամբողջացնող մասը...: Անկախ ապրուած կեանքի օրերէն եւ քանակէն, այդ ապրուած մասն է, որ տեղ մը նշանակութիւն կու տայ անհատին կեանքին, բայց նաեւ կը ձգէ դրոշմ եւ ժառանգ՝ գալիք օրերուն կեանքը շարունակողներուն՝ անհատ թէ հաւաքականութիւն: Այս աւանդին հասկացողու-

թիւնն է, որ ստեղծուած եւ դաստիարակութեամբ փոխանցուած է կեանքի տարբեր ժամանակահատուածներու՝ սերունդէ սերունդ, պատմութեան սլացքին ընդմէջէն: Բարեբախտաբար աւանդը ունի գաջն ստեղծողները, բայց նաեւ պահողները՝ իմ մա դաստիարակները, որոնք ի գին ամէն գոհողութեան կը մտնեն այս առաքելութեան մէջ: Զոհողութիւն մը, որ եթէ մէկ կողմէ անհատին անձնական ժամէն, միտքէն ու էութենէն կը խլէ, բայց նաեւ կեանքէն՝ ամբողջ կեանք մը նուիրելով աւանդին փոխանցման եւ սերունդներու դաստիարակութեան:

Հաւաքական կեանքին մէջ անոնք՝ դաստիարակները, որոշած են մէկ քայլ առաջ երթալ՝ գիշերով իրենց անհատական ու անձնական կեանքը, էութիւնը եւ այս բոլորը ղենելով նժարին վրայ՝ անոնք հաւաքական աւանդին համար նուիրուելով միշտ աւելի ծանր կշռած են

իրենց տարբեր արժեքափերէն: Սոնա Նաչեանի կեանքը եղաւ խօսուած օրինակ մը այս դաստիարակութեան նուիրուած՝ աւելի քան հինգ տասնամեակներու: Եւ գիշերացա՞ւ: Անպայման: Անձնական կեանք, ջիղ, առողջութիւն, տրամադրութիւն, միտք, սէր, նուիրում, կրթութիւն...: Այս բոլորը երկար տարիներու ընթացքին, այսօր աշխարհով մէկ սփռուած բազմահարիւր աշակերտները դարձնելով «Օրիորդ Նաչեան»-ին ընտանիքը: Ան անմիջական ընտանիքը չկազմեց, բայց Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանը դարձաւ իր տունը, իսկ մենք բոլորս՝ իր աշակերտները, եղանք իր սրտին ու հոգիին հարազատները, իւրաքանչիւրիս դաստիարակութիւնը եւ կեանքի մէջ մտնելու եւ առաջնորդուելու տեսլականը՝ եղաւ իր «աշխարհ»-ը: Եղաւ խիստ ու խստապահանջ, բայց այդ պիտակին ետեւը կար ուրախութիւնը կերտելու եւ հասկնալու իր տրամադրութիւնը: Դժուար էր այդ օրերու մեր պատանեկան մտածողութեան համար հասկնալ եւ կամըջել խիստ ու ուրախութիւնը: Բայց երեւի պիտի սորվէինք հետագային, թէ կեանքի մէջ ուրախութիւնը կը կերտուի, երբ արժէքի հասկացողութեան նկատմամբ կայ անհրաժեշտ լրջութիւն եւ խստապահանջութիւն, որպէսզի կեանքի մէջ արձանագրուի յառաջիկայը եւ նուաճում՝ մարդկային կեանքերուն մէջ «բաց մը լեցնելու» գոհունակութեամբ: Այս «բացը լեցնելը» աւանդին դաստիարակութիւնն է, եւ հայկական վարժարանին մէջ օրիորդ Սոնա Նաչեանն ու իր նման դաստիարակները նուիրուած էին ատիկա կատարելու:

Սոնա Նաչեան երբեք չչոզնեցաւ իր ասպարէզին մէջ: Ան կառչած մնաց յոյսին՝ հաւատալով, թէ հայ ժողովուրդին գոյատեւումը նոր սերունդին շարունակականութեամբ մէջ է, իսկ շարունակականութիւնը հայուն աւանդին դաստիարակութեամբն է...: Սոնա Նաչեանին համար հայուն աւանդը՝ իր ազգային ու քրիստոնէական պարունակով մարմնաւորուած էր: Ան կրցած էր այս երկուքը իրարու շարկապել: Այս իմաստով ան միշտ հաւատաց, թէ դաստիարակութիւնը կարելի չէ սակարկել, քանի հայուն շարունակականութեան երաշխաւորման գերագոյն նպատակն է անսկիւա՝ նոր սերունդներուն միջոցով:

Սոնա Նաչեանի հետ ապրեցայ երեք հանգրուաններ: Նախ՝ որպէս աշակերտ, կեդրոնական բարձրագոյն վարժարանին մէջ, տասնչորս տարիներ անընդմէջ: Ապա պաշտօնակից՝ երբ կարճ ժամանակուան համար պաշտօնավարեցի կեդրոնական բարձրագոյն վարժարանին մէջ, եւ ինք նախակրթարանի պատասխանատու էր, նաեւ որպէս հոգաբարձու՝ երբ ինք իր կրթական ասպարէզին վերջին տարիներուն եղաւ տնօրէն նոյն վարժարանին մէջ: Այս երկար ժամանակահատուածին, տարբեր ժամանակներէ անցնելով տեսայ Սոնա Նաչեանի անսակարկ նուիրումը՝ հայ դպրոցին հայ աշակերտին եւ հայ աւանդին նկատմամբ: Նախակրթարանի բաժնի ընդհանուր պատասխանատու եւ համակարգողն էր, միեւնոյն ժամանակ՝ անգլերէն լեզուի ուսուցիչ: Մեր օրերուն ձորձ Չամիչի դասագիրքը կը գործածուէր...: Ներկայ օրերու չափանիշներէն մեկնելով՝ շատ պարզ եւ նախնական պիտի ըլլան Չամիչի դասագիրքերը: Բայց Սոնա Նաչեան անպայման կ'ամբողջացնէր պակասաւոր մասերը՝ իր հետաքրքրական մտայնացումներով եւ արուեստի ու գծագրական պատկերներով: Կը սիրէր գեղանկարչութիւնը եւ շատ ժամանակ կը տրամադրէր նախակրթարանի արտամաքը: Սոնա Նաչեանի հետ ապրեցայ երեք հանգրուաններ: Նախ՝ որպէս աշակերտ, կեդրոնական բարձրագոյն վարժարանին մէջ, տասնչորս տարիներ անընդմէջ: Ապա պաշտօնակից՝ երբ կարճ ժամանակուան համար պաշտօնավարեցի կեդրոնական բարձրագոյն վարժարանին մէջ, եւ ինք նախակրթարանի պատասխանատու էր, նաեւ որպէս հոգաբարձու՝ երբ ինք իր կրթական ասպարէզին վերջին տարիներուն եղաւ տնօրէն նոյն վարժարանին մէջ: Այս երկար ժամանակահատուածին, տարբեր ժամանակներէ անցնելով տեսայ Սոնա Նաչեանի անսակարկ նուիրումը՝ հայ դպրոցին հայ աշակերտին եւ հայ աւանդին նկատմամբ: Նախակրթարանի բաժնի ընդհանուր պատասխանատու եւ համակարգողն էր, միեւնոյն ժամանակ՝ անգլերէն լեզուի ուսուցիչ: Մեր օրերուն ձորձ Չամիչի դասագիրքը կը գործածուէր...: Ներկայ օրերու չափանիշներէն մեկնելով՝ շատ պարզ եւ նախնական պիտի ըլլան Չամիչի դասագիրքերը: Բայց Սոնա Նաչեան անպայման կ'ամբողջացնէր պակասաւոր մասերը՝ իր հետաքրքրական մտայնացումներով եւ արուեստի ու գծագրական պատկերներով: Կը սիրէր գեղանկարչութիւնը եւ շատ ժամանակ կը տրամադրէր նախակրթարանի արտամաքը:

Շար.բ էջ 19

ԿՈՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՈՐԲԱՅԵԱԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ 7ԴՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Վերակի, Յունուար 19, 2014, կէսօրէ ետք ժամը 2:00ին, տեղի պիտի ունենայ ծաղկեպսակի զետեղման արարողութիւն, Մոնթեպելլոյի Հայոց Նախատակաց Յուշարձանին առջև: Արարողութենէն ետք, պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն: **Bicknell Park: 850 via San Clemente, Montebello, Ca 90640**

Լոս օրը կէսօրէ ետք ժամը 5:00ին տեղի պիտի ունենայ նաեւ վաւերագրական տեսաժառանգի ցուցադրութիւն

OPENING THE DOORS - (KAPILARI AÇMAK) (Film)

Պղտսեայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիազլու» սրահին մէջ Տեղեկութեանց համար հեռաձայնիչ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիբեանին (818) 800-1976 (cell)

Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

HRANT DINK

A CALL TO ALL ARMENIANS REQUIEM

FOR THE 7th ANNIVERSARY OF THE ASSASSINATION OF HRANT DINK

PRAYER AND WREATH-LAYING CEREMONY WILL BE HELD Sunday, January 19, 2014, at 2:00 pm In front of the Armenian Martyr's Monument. Following the ceremony, a solemn mass of requiem will take place Bicknell Park: 850 Via San Clemente, Montebello, Ca 90640

On the same day at 5:00 pm, screening of a documentary film **OPENING THE DOORS - (KAPILARI AÇMAK) (Film)** will be held

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Վր հրապարակ ձեռք
ՅՈՒՇ ԵՐԵՎՈՅԻ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ

ՆԱՀԱՍԱԿՈՒԹԵԱՆ 7ԴՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ
Ենթիում՝ Հրանդ Տինքի Հոգիի Ազատութեան եւ Արդարութեան Տարեկան Առաջին Մետալը
Տիար ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

Պոսթընի «Արմինիքն Ուիլիքի» վարիչ խմբագիր
PhD Քիմիոսոմ՝ Հայոց Յեղատպանութեանց Ուսումնասիրութիւններու, Գաղթը Համալսարանի Պիտի գեկուցէ հիւք ունենալով՝

«ՅԱՅՆԱՐԵՐԵԼ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՈՒՐԳԻԱՆ» (Հայերէնով)

Բացման Խօսք՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիբեան
Հոգաբարձու եւ Առեւտրային Պղտսեայ Միութեան Մշակութային Յանձնախումբին (Հայերէնով)
Հանդիսավար՝ Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ
Առեւտրային Պղտսեայ Միութեան Հոգաբարձութեան եւ Խիթիկն Առեւտրային Հայ Իրաւաբաններու Կաճարի

Բանախօս՝
Օգնական Փրօֆ. **ԱՅՏԱ ԷՐՊԱԼ**
(Լիւր Ետք Համալսարանի Քաղաքակրթական Բաժանմանի)

Լիւր՝

Ապակեայ տուն: Զերոյի խնդրէն գերօջական լուծումի (Անգլերէնով)

Մրտի Խօսք՝ Պղտսեայ միութեան Երիտասարդաց Յանձնախումբի Խիթիկն տնօրէն՝
Տիար Ալեքս Ալիսեան (Անգլերէնով)

ԱՆԴՐԱԴԱՐՉՈՒՄՆԵՐ՝ Իրաւաբան Կարօ Նազարեանի կողմէ
Հայ իրաւաբաններու միութեան տունապետ
եւ Համաառեւտրային Հայոց Յեղատպանութեան հարիւրամեակի յանձնախումբի (Հայերէնով) եւ (Անգլերէնով)

Գեղարունակական Յայագիր
Վերակի, Յունուար 19, 2014, երեկոյան ժամը 6:00ին
Պղտսեայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիազլու» սրահին մէջ 19726 Sherman Way, Westca, CA 91306
Տեղեկութեանց համար հեռաձայնիչ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիբեանին (818) 800-1976 (cell)

Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

ՎԱՐՈՒԺԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ԾՈՒԽՆԱՆ

Վարուժանական ասելիքն ամփոփում է ո՛չ միայն շարքերում, այլ՝ գերխիտ կերպով կայ շարքերի բնաբաններում եւ շարքն ամփոփող վերջին բանաստեղծութիւնների մէջ: Դիտարկենք ձեւի եւ բովանդակութեան այս շրջանակող միաւորները: «Հեթանոս երգեր» շարքը բացուում է՝

Ես կ'երգեմ Գինին,- Բագիններուն

Ծիծաղը եւ խորաններուն արիւնը:

Դարերու կեանքը կ'երգեմ, յանուն

Հաճոյքի եւ տառապանքի գեղեցկութեան... բնաբանով: Բնաբանը (էպիգրամ)՝ որպէս գրականագիտական հասկացութիւն, յուշում է երկի բուն ասելիքը: Ի՞նչ է ասուած այս բնաբանում: Վարուժանը խոստանում է երգել Գինին՝ որպէս «բագիններուն ծիծաղը», այսինքն՝ իբրեւ հեթանոսական կենսախիղճ, անսանձ ապրելակերպի հաճոյք, գինին՝ իբրեւ հեթանոսական բաքոսեան գինարբուքների սիմվոլ, որպէս բակխանալիայի հրճուանք, որպէս բուն ոգեւորութեամբ կեանքի նախասկզբի՝ սիրոյ բնագրի փառաբանում, այսինքն՝ կեանքն է փառաբանում եւ նրա հաճոյքը: Բնաբանում Վարուժանը խոստանում է երգել նաեւ «խորաններուն արիւնը»՝ նկատի ունենալով գինու նաեւ քրիստոնէական սիմվոլը՝ որպէս Քրիստոսի թափած անմեղ արեան խորհուրդ, տառապանք, որը սրբացուած է: Այսինքն՝ կեանքի հաճոյքին հակադրուած է սրբացուած ցաւը, եւ հակառակը՝ ցաւին հակադրուած է հաճոյքը: Վարուժանի անլրացնում է նաեւ, որ կեանքի երգն է երգում՝ յանուն գեղեցիկի: Հետեւաբար՝ Վարուժանի երգած կեանքը սա է՝ կեանք =>ցաւ =>հաճոյք =>մահ, որը բանաստեղծը երգելու է յանուն Գեղեցկութեան: Այսինքն, նա՝ որպէս արուեստագէտ, կեանքի յաւերժական պտոյտի փիլիսոփայութիւնը փոխակերպում է գեղագիտական պատկերների, որոնց հիմքում նպատակադրուած է զնել գեղեցիկը՝ որպէս գեղագիտական կատեգորիա:

«Հեթանոս երգեր» շարքի բացուող երկու ենթաշարքերը՝ «Հեթանոս երգեր» եւ «Գողգոթայի ծաղիկներ», եւս ունեն իրենց բնաբանները, բնաբան ունի նաեւ նրանց միջեւ տեղադրուած «Հարճը» պոէմը: Ահա դրանք.

Փառք սարբինային.- Բագոս կը պսակուի («Հեթանոս երգեր»).

Փառք սարբինային.- Ներոն կ'արբենայ («Հարճը»).

Փառք սարբինային.- Քրիստոս կը պատարագէ («Գողգոթայի ծաղիկներ»):

Երեք բնաբանում էլ Վարուժանը մեղմ հումորով «փառք է տալիս» սարբինային՝ խաղողի թառամային, որի «չնորհիւ» խաղող է աճում, ինչի որթով մի դէպքում պսակուում է Բակի-Բաքոսը՝ նախապատրաստուելով բակխանալիայի (Փառք սարբինային.- Բագոս կը պսակուի), միւս դէպքում ակնարկուում է հարբած Ներոնի կողմից Հռոմը հրդեհակեղծող դէպքը, որը մեծ բռնակալն արեւը ընդամէնը բոցերով ոգեշնչուելու եւ բանաստեղծելու համար (Փառք սարբինային.- Ներոն կ'արբենայ), իսկ երրորդ բնաբանում Վարուժանը «փառաբանում է սարբինային, քանի որ նրա «չնորհիւ» ստացուած գինով է Քրիստոսը պատարագում (Փառք



սարբինային.- Քրիստոս կը պատարագէ): Քրիստոս կը պատարագէ ասելով՝ Վարուժանը նկատի ունի Մատթ., Իգ, 29 («Միայն ասում եմ ձեզ, թէ այսուհետեւ որթի այս բերքիցն էլ չեմ խմիլ մինչեւ այն օրը...») եւ Եբր., Ժ, 10 («Որ այն կամքովը մենք սրբուեցանք մէկ անգամ Յիսուս Քրիստոսի մարմնի պատարագովը») հատուածները, որոնցում խօսուում է պատարագի եւ հաղորդութեան քրիստոնէական խորհրդի մասին:

Իսկապէս որ, «Հեթանոս երգեր» ենթաշարքը պարունակում է բաքոսեան խրախճանքի եւ հրճուանքի անգուգական գեղարուեստական պատկերներ («Վանատուր», «Հեթանոսական», «Արեւելեան բաղնիք», «Ո՛վ Լալախէ» (ուր նաեւ ծննդաբերութիւնն է սրբացում), «Սաղուռնական»...): Այս երգերում հարբած աստիճաններն են ցատկոտում եւ ուղեկցում խաղողի որթով պսակուած իրենց ուսուցչին՝ Դիոնիսոս-Բաքոսին, որը, ի հեճուակ ցաւի եւ տառապանքի, սովորեցնում է հրճուել կեանքի վայելքով: Այսինքն՝ գեղարուեստական պատկերի վերածած գաղափարները Վարուժանը կերպաւորում է գեղեցիկի կատեգորիայով:

Երկրորդ ենթաշարքը՝ «Գողգոթայի ծաղիկներ», խորհրդանշում է Քրիստոսի տանջանքն ու տառապանքը, որն ինքը մարդկային տառապանքն է («Ճանապարհ խաչի», «Տրտունջը», «Բանուորուհին», «Պատգամաւորներ», «Մեռնող բանուոր...»): Այս ենթաշարքում գեղագիտական կատեգորիաներից իշխում են տգեղը, ստորը, սարսափելին: Այսինքն, քերթողը՝ արուեստագէտը, նոր ծնունդներ է տալիս՝ հարցերը բեկելով ի՛ր հոգու պրիզմայով:

Երկու շարքերը միմեանց օղակող «Հարճի» բնաբանը իշնեցնում է Ներոնի վայրագութեան մասին: Այսինքն՝ Վարուժանը փառաբանում է ողբերգութեան մէջ պարունակուող դաժանութիւնից ծնուող տառապանքը, ինչից էլ բխում է գեղեցիկը: Ողբերգութեան մէջ դաժանութեան մասին նիցշէական դիտարկումները նոյնութեամբ խտացուած են «Հարճի» բնաբանում: Փաստօրէն՝ Դ. Վարուժանը «Հարճը» պոէմում փառաբանում է դաժանութիւնը եւ ուժը՝ որպէս գեղեցիկի նախապայման:

«Հեթանոս երգեր» շարքի՝ միայն բնաբանների քննութիւնն իսկ հնարաւորութիւն է տալիս լիովին ընկալել բանաստեղծի ասելիքի ողջ խորութիւնը: Այսինքն՝ նիցշէական «հեթանոսապաշտութիւնը»՝ որպէս փիլիսոփայական երեւոյթ, որպէս «յաւերժական վերադարձի» առանցք, որպէս անցում մահից կեանք եւ ցաւից հրճուանք, շատ բնորոշ է Վարուժանի «Հեթանոս երգերին», որոնք, սակայն, բեկուած են գեղեցիկի կամ տգեղի պրիզմայով՝ որպէս արուեստի բարձրարժէք նմուշներ: Ողջ եւրոպական արուեստը (եւ յատկապէս գրականութիւնը), հիմքում ունենալով Նիցշէի մտքերը, ամենազանազան ճիւղաւորումներ տուեց, եւ թէ որ արուեստագէտը որքանով բերեց իրենը, նո՛րը, հենց դրանում էլ երեւաց նրա տեղն ու դերը արուեստի կամ գրականութեան պատմութեան մէջ:

Նիցշէական «հեթանոսապաշտութիւնը»՝ դիոնիսեան ցաւի եւ հաճոյքի երկփեղկուածութիւնը, Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» շարքում բեկուած է մէկ այլ հետաքրքիր տեսանկիւնից: Դիտարկենք այն:

Այս շարքի բնաբանը Գողթն գաւառի հեթանոս երգերից է՝

Ընդ եղեգան փող բոց ելանէր... որն իր մէջ ներառնում է շարքի երկու ենթաշարքերի ամբողջ ասելիքը. «Բագինին վրայ» ենթաշարքում ցաւի եւ տառապանքի գեղագիտական պատկերներ ստեղծելով («Հայրենիքի ոգին», «Անիի աւերակներուն մէջ», «Օճը», «Կարօտի նամակ», «Դիակի սայլը», «Մեր կուռնկը», «Կիլիկեան մոխիրներուն»)՝ դրանց հակադրուած է «Կրկեսին մէջ» ենթաշարքը, ուր գոյութեան կուռի պայքարում փառաբանում է ուժեղը («Վերածնութիւն», «Պատուէր», «Կուռի երթ», «Վահագն», «Առաքեալը», «Դիւցազնի մը սուրին»), այսինքն՝ Դ. Վարուժանը հաճոյքի եւ հրճուանքի գեղագիտական ապրումը մարմնակերպում է ազգային զարթոնքի եւ ազատագրական պայքարի երգերում: Ահա եւ հետաքրքիր ճիւղաւորում (կամ մակերեսայնութիւն, որն արւում է յանուն արուեստի): «Ցեղին սիրտը» շարքի կամ նրա երկու ենթաշարքերի առանցքը նորից դիոնիսեան գեղագիտական կատեգորիան է՝ կեանք-մահ, տառապանք-հաճոյք երկփեղկուածութիւնը՝ որպէս «հեթանոսականութիւն», որպէս «յաւերժական վերադարձ»: Սակայն փիլիսոփայական միտքը Վարուժանը բեկում է գեղագիտութեան, որի ցոլքերից ծնում են ազգային զարթոնքի, պայքարի հրաշք գոհարները:

Նիցշէյն կարեւորում էր հանճարի, բացառիկ անհատի դերը, որին իր ժամանակաշրջանում չէին կարող հասկանալ, սակայն որը պարտաւոր էր մարդկութեանը տալու գաղափարներ, որոնք «յղիացնելու» էին կեանքը եւ տալու նոր ծնունդներ: Հենց այս սկզբունքից է բխում «Նեմեսիս»-ում (որպէս «Ցեղին սիրտը» շարքի նախերգանք) քերթողի, արուեստագէտի դերի ընդգծումը Վարուժանի կողմից, արուեստագէտի, որի դերը «գաղափարներ ծնելն» է եւ ամբողջին առաջ մղելը՝ յանուն կեանքի հաճոյքի, գոյատեւման, յարատեւման՝ ի հակադրութիւն մահուան եւ ցաւի: Գրականագիտութեան մէջ Դ. Վարուժանի պոետիկայի երկփեղկուածութիւնը ցաւի եւ հաճոյքի, անշուշտ, դիտուած է, եւ այն էլ՝ վաղուց: Բայց մի հանգամանք

վրիպել է. երեւոյթի (դիոնիսեան գեղագիտական կատեգորիայի) ակունքների բացառապատումը չկար առ այսօր, այնինչ՝ արմատները «Գիլգամէշ»-ում են, որտեղից անցնում են զանազան կրօնափիլիսոփայական համակարգերով եւ հասնում XX դար: Հենց այստեղ է Նիցշէյի նշած «մակերեսայնութիւնը»: Պարզեւք ասելիքը: Նիցշէյի նշած գերմարդը՝ բացառիկ մեծ հոգին, որ նոյն ինքը շուճերական Գիլգամէշն է կամ հնդկական ուպանիշադների ներհայեցող որոնողը, ի վիճակի է իր գաղափարներով «յղիացնելու» դարաշրջաններ, իսկ Վարուժանեան «քերթողը» իր կենսափորձով տուեց այն, ինչ կարող էր տալ՝ «մակերեսային» գաղափարներ: Մակերեսային է նաեւ պայքարի կոչը (իզուր չէ Պ. Սեւակը Վարուժանի հայրենասիրութիւնը բնորոշել որպէս «գաղափարախօսութիւն»):

Դառնանք «Ընդ եղեգան փող բոց ելանէր...» բնաբանին: (Տողը վերցուած է Վահագնին փառաբանող հիմնից: Վահագնը՝ որպէս ռազմի, ուժի, քաջութեան աստուած, բնականաբար շատ հարագատ է «Ցեղին սիրտը» շարքի հայրենասիրական ոգուն: Ի դէպ՝ հեթանոս աստուածները Վարուժանի մօտ կերպաւորուում, գեղարուեստական պատկեր են դառնում ըստ անհրաժեշտութեան՝ առանց խորութեան, թէ որ դիցարանից են դրանք առնուած՝ հայկական, յունական, հռոմէական, հնդկական, թէ՛ մէկ այլ... Սա համամարդկայինի եւ ազգայինի միաձուլման հետաքրքիր հնարանք է՝ բնորոշ մեծ արուեստագէտներին, քանի որ նրանք առաւել կարեւորում են բովանդակութիւնը՝ ասելիքը, քան ձեւը): «Ընդ եղեգան փող...» բնաբանով բացուող «Ցեղին սիրտը» շարքը աւարտուում, փակուում է «Աւերակներու տիկինը» բանաստեղծութեամբ: Պայքարի կոչ հանդիսացող շարքն այս նոտայով աւարտելը տարբինակ է թուում: Օսմանեան սահմանադրութեան (1908թ.) առիթով գրուած այս բանաստեղծութիւնում՝

Գայլ Վահաններն, Դաւիթ բեկերն ընձառիւծ,

Հերոսներն հին՝ գաղափարին հինօրեայ,

Գինովութիւնը տեսան

Օտարներու առջեւ պարող իրենց մօր. ու մութին մէջ կանչեցին

Դէպ իրենց Մօր-«Ոլիաբա», Սալոմէ...»:

Շարքն այս բանաստեղծութեամբ փակելու իմաստը վերջին երկու բառերի մէջ է՝ Ոլիաբա, Սալոմէ:

Դ. Վարուժանի երկերի ակադեմիական հրատարակութեան ծանօթագրութիւնները չեն օգնում ճիշտ հասկանալու դրանք: Վարուժանի ասելիքը մնում է անորոշ: Դ. Վարուժանի առաջին հատորի 3 571 էջում «Աւերակներու տիկինը» բանաստեղծութեան 161-րդ տողի ծանօթագրութեամբ ասուած է. «Աստուածաշնչեան անձնակերպութիւններ: Սակայն Աստուածաշնչում Ոլիաբա է, իսկ Օլիաբա կամ Ոլիաբա չկայ: «Եւ դռնապանք, որդիք Սալոմէայ» (Աստուածաշունչ, ԵԶԲ, Ե, 28): «Եւ այս են որդիք Ոլիաբայի դստեր Անայի...» (Աստուածաշունչ Մինդ. ԼԶ, 14, 18)»: Մանօթագրութեան մէջ յուշող ոչինչ չկայ, որ բացուի Դ.

ՀԱՅԵՐԸ՝ ԻՏԱԼԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ ՍԵՋ

«Օտար ջրերում հայացեալ կղզի հայոց հիմ լոյսն է Բեզնով Գորա-
նում...
Հայրենիքից դուրս հայրենեաց համար»:

Յովհաննէս Ծիրազ

ԱՆԻ ԹՈՐԱՆՆԱՆ

Իտալիոյ մէջ հայերու գոյու-
թեան մասին առաջին հաւաստի
տեղեկութիւնները Ռաւէննա հաս-
տատուած հայկական գործասե-
րուն կը վերաբերին, որոնք իտալ-
իա բերած էր բիւզանդացի Զօրա-
վար Ներսէս Հայկազունը (Ներսէս
Պատրիկ - 541-568): Հայ բազմաս-
մուտ Զօրավարը կը յաղթէ իտալ-
իա խուժած օսթրոթերուն, ապա
Ֆրանկներուն եւ ալեմաններուն
(այժմու գերմանացիներու եւ ֆրան-
սացիներու նախահայրերը) եւ 555-
ին կը նշանակուի բիւզանդացիներ-
ու կողմէ նուաճուած Իտալիոյ
կառավարիչ (էքսարքոս): Ան էք-
սարքոթեան (փոխարքայութեան)
կեդրոն կը դարձնէ Ռաւէննան, ուր
շինարարական մեծ աշխատանքներ
կը ծաւալին: Ռաւէննայի պահակա-
գործը գլխաւորաբար հայերէ կազմ-
ուած էր եւ կը կոչուէր հայկական
կամ numerus Armeniorum, իսկ
Ռաւէննայի Օգոստոս կայսեր կա-
ռուցած Կլաւսիս նաւամատոյցը, ուր
կը բնակէին զինուորականները՝
Արմենիա կը կոչուէր: Իտալիոյ
փոխարքաներէն յայտնի է նաեւ
Սահակ Հայկազնը (625-644), որուն
դամբանը Ռաւէննայի Ս. Վիդալ եկե-
ղեցոյ մէջ է եւ ճանչցուած էր
որպէս Gloria dell'Armenia, (Հա-
յաստանի փառքը):

6-7-րդ դարերուն Սիլիկիոյ
մէջ հայկական գործարանակ մը
տեղաբաշխուած է, որու կառավա-
րիչները եղած են Յովհաննէս Ար-
շակունիի որդի Արտաբանը, (6-րդ
դար) եւ հակակայսր հռչակուած
ՄԺԵԺ Իշխանը (660-ական թուա-
կաններ): Պատրիկ, փրոքոնսիւլ,
մագիստրոս եւ կեսար տիտղոսնե-
րուն արժանացած է Ալեքս Մուշեղ
Մամիկոնեանը, որուն յիշատակը
կենդանի է Rocca degli armeni-ի
մէջ (Հայերու ամրոց): Գէորգ Մին-
իական Քաղաքներու պաշտպանն
էր, հայ առաջնորդ էր Լեւոն Զ.
Իմաստասէրի առաջին սպարապետ
Սմբատիկը, որ 891-ին Բիւզանդ-
իային վերադարձուց Պենեկէնթոյի
դքսութիւնը: Լեւոն Թոռնիկեանը
վերանուաճեց Պա'րին:

Դարձեալ ոչ թէ մենք, այլ
յո'յն գիտնական իտալիան է, որ
ուշադրութեան կ'արժանացնէ այն
փաստը, թէ 9-10-րդ դարերուն
հայերը զինուորներու, վարչական
աշխատողներու եւ կայսրերու հան-
դերձանքով կը տնօրինէին Բիւ-
զանդական կայսրութեան հանրա-
յին, ռազմական եւ քաղաքական
կեանքը, որ իր հզօրութիւնը մե-
ծապէս անոնց կը պարտի:

Սիլիկիոյ մէջ հայերու պատ-
կանող ամրոց մըն ալ կը յիշատակ-
ուի՝ Քալաթ-ալ-Արմանին, որ 861-
ին գրաւուած է: Զինուորականե-
րու եւ ծառայողներու այս շրջա-
նակներուն գուզահեռ, իտալական
տարբեր քաղաքներու մէջ (Ռաւեն-

նա, Վենետիկ, Ֆիրենցէ, Նափոլի,
Անքոնա, Հռոմ եւ այլուր) կային
նաեւ հայ վաճառականներ ու վա-
նականներ: Ըստ աւանդութեան, Ս.
Գրիգոր Լուսաւորչէն երկու մա-
սունք կը պահպանուի Իտալիոյ
մէջ, Նարոս՝ մէկ ձեռքին ոսկորնե-
րը, իսկ Նափոլի San Gregorio
Armeno (Սուրբ Գրիգոր Հայ) եկե-
ղեցոյ մէջ՝ զանկը:

12-րդ դարակէսին, Իտալիոյ
ինը գլխաւոր քաղաքներուն մէջ
տասն աւելի հայկական եկեղեցիներ
գործած են: Հայերու աշխուժաց-
ման այս իրավիճակին իսթանող
գործօնները Կիլիկիոյ հայոց թա-



գաւորութիւնը եւ իսաչակրաց ար-
շաւանքներն էին: Պատմական այս
նոր իրավիճակը նպաստեց, որ
Իտալիոյ արդէն ծանօթ հայերը
աւելի ընդարձակուին եւ արմա-
տապէս հաստատուին թերակղզիի
զրեթէ բոլոր քաղաքներուն մէջ՝
ստեղծելով ծաղկուն գաղութներ:
Ժամանակագրութիւնը կը վկայէ,
որ վենետիկցի ճանապարհորդ Մար-
քո Փոլոն իր Հեռաւոր եւ Մերձաւոր
Արեւելք կատարած ճամբորդու-
թիւններուն ընթացքին, 1271-ին,
Կիլիկիոյ Այաս նաւահանգիստէն
Պաղեստինի Ս. Ճովաննի Տ'Աբրի
երթալու համար հայկական նաւ մը
նստած է, որ անոր տրամադրած էր
Լեւոն Գ. Թագաւորը:

Ըստ Ղ. Ալիշանի, 1240-1350-
ին հայկական մէկ եկեղեցի ունեցող
քաներկու քաղաք կար, իսկ Հռո-
մի, Պոլոնիոյ եւ Վենետիկի մէջ
գործող եկեղեցիներուն թիւը մէկէ
աւելի էր: 14-րդ դարուն շուրջ 40
հայկական եկեղեցի ու մենաստան
եղած է Իտալիոյ քաղաքներուն
մէջ, որոնք գործած են հայ առա-
քելական եկեղեցոյ, իսկ 14-րդ
դարասկիզբին "Իտալիոյ հայերու
եպիսկոպոսի" ենթակայութեամբ:
Եկեղեցիներուն կից հիւանդանոց-
ներ եւ հայոց տուններ եղած են, ուր
հայեր բուժուած են եւ իջեւանած
են հայ վաճառականներ: Յիշար-
ժան է վենետիկի Հայ տան ծնուն-
դը: Վենետիկի տոժ էնրիքօ Տան-
տոլոն պաշտօնական դիւանագի-
տական յարաբերութիւններ հաս-

տատելով Լեւոն Մեծագործին հետ,
վերջինիս արքունիքը կը զրկէ
ձաքոմօ Պատուերուն, որ հմուտ
ղեկապան ըլլալով կը յաջողի բա-
նակցիլ հայոց թագաւորին հետ:
Այսպիսով, Պատուերուն Վենետիկ
կը վերադառնայ 1201-ի Դեկտեմ-
բերին, երկու օրինակէ բաղկացած
առեւտրական դաշինքով՝ մին հա-
յերէն, միւսը լատիններէն, ըստ որու
հայոց թագաւորը վենետիկցիներ-
ուն մենաշնորհ կու տար բնակիլ
եւ առեւտուր ընել իր թագաւորու-
թեան մէջ:

Իտալիոյ մէջ հայերուն տա-
րածումը գաղաթնակէտին հասաւ
14-րդ դարու կէսերուն եւ համայն-
քային, ազգային ու եկեղեցական
ոլորտներուն մէջ ամէնէն բարգա-
ւաճ ժամանակաշրջաններէն եղաւ:
Վաճառականներու եւ ուխ-
տագնացներու եռանդուն երթեւե-
կը վկայող բազմաթիւ իջեւանա-
տուններն ու վանատունները իրենց

գրական եւ մշակութային նշանա-
կալից գործունէութեամբ, քաղա-
քակիրթ եւ գիտակից համայնքա-
յին կազմակերպուածութեան մա-
սին կը վկայեն:

582-1610-ին հզօրացող Պարս-
կաստանը կ'որոշէ առեւտրական
կապեր հաստատել Իտալիոյ հետ:
Յատկանշական է, որ Իտալիա
զրկուած վեց պատուիրակութիւն-
ներու ղեկավարներն ալ հայ խոճա-
ներ եղած են (Սաֆար, Շիոշ,
Գրիգոր Կիրակոս Միրմանեան եւ
այլք): 17-րդ դարուն Գրիգոր Կի-
րակոս Միրմանեանի նիւթական
նուիրատուութեամբ կ'ընդարձա-
կեն Վենետիկի Ս. Խաչ հայկական
եկեղեցին:

Այսօր Վենետիկի Ս. Խաչ Հա-
յոցը՝ հայերուն պատկանող միակ
եկեղեցին է, միջին դարերուն Իտալ-
իա գործող շուրջ 40 եկեղեցիներ-
էն, ուր հայաբարբառ Հայաստան-
եաց եկեղեցոյ արարողութեամբ
ղեռ Ս. Խորհուրդներ կը կատար-
ուին: Եկեղեցին ինամակալուած է
Ս. Ղազարի Մխիթարեան միաբա-
նութեան կողմէ:

Հայերը Իտալիոյ մէջ աչքի
ինկած են նաեւ նաւաշինութեամբ:

16-րդ դարուն, Անտոն Սուրեանը,
Վենետիկի նաւաշինարանին մէջ
մեծ նաւերը ջուր իջեցնելու նոր
համակարգ մը մշակած է եւ ստեղ-
ծած է սարք մը, որ ծովու յատակը
կուտակուած դարերու տիղմը կը
մաքրէր:

Իտալիոյ մէջ կայացած է նաեւ
Հայ մշակոյթի նշանաւոր երեւոյթ-
ներէն մէկը: 1512-ին Յակոբ Մեղա-
պարտի աշխատասիրութեամբ Վե-
նետիկի մէջ ծնունդ առաւ հայա-
տառ առաջին տպագիր գիրքը՝
Ուրբաթագիրքը, որ այժմ կը պահ-
ուի Վենետիկի Ս. Ղազար կղզիի
Մխիթարեան Միաբանութեան մօտ:
Գիրքերու եւ տպագրութեան առու-
մով հաւանաբար մեծ փորձառու-
թիւն ունէր Յակոբ Մեղապարտը:
Չէ բացառուած, որ հրատարակած
ըլլայ նաեւ ուրիշ հատորներ, որոնք
անհետացած են եւ կամ չեն գտնուած
դեռ: Պէտք է նշել, որ հայերը
արեւելեան առաջին ժողովուրդն
էին, որ գործածեցին կիւթենպերկի
գիւտը, հակառակ որ ձեռագիր
ծաղկելը շարունակեց պահպանել
իր կենսունակութիւնը:

Առաջին տպագրիչ Յակոբէն
ետք, երկրորդը Աբգար դպիր Թո-
քատեցին կամ Եւդոկիացին եղաւ,
որ դարձեալ Վենետիկ, 1565-ին
տպագրեց հայերէն առաջին օրա-
ցոյցը՝ Խառնափնիթուր տուժարիչ
անունով եւ Սաղմոսարան: Հոս վեց
գիրք եւս տպագրուեցաւ:

Ուսումնասիրութիւնները ցոյց
կու տան, որ Աբգար Թոքատեցին
տպագրութիւնը սկսած է ձեռքի
տակ ունենալով հայ առաջին տպագ-
րիչ Յակոբ Մեղապարտին գիրքե-
րը: Աբգարին շնորհիւ Վենետիկի
մէջ ծնունդ առաւ առաջին իսկա-
կան հայ տպագրութիւնը, որը
վճռապէս ազդեց հայ ազգի հետա-
գայ վերածնունդի վրայ: Սակայն
վենետիկեան հրատարակչական
բուռն գործունէութեան կը հանդի-
պինք միայն 18-րդ դարէն սկսեալ,
Մխիթարեան վանականներուն մօտ,
որոնք 1717 թուականէն սկսեալ,
Վենետիկի Ս. Ղազար կղզիին մէջ
ստեղծեցին մշակոյթի այն անգին
կեդրոնը՝ հետագայի այն հզօր
սիւներէն մէկը, որուն վրայ յենած
էր ազգային զարթօնքի գաղափա-
րը:

Վենետիկէն գատ հայերը գիր-
քեր կը հրատարակեն նաեւ Ֆերրա-
րա, Հռոմ, Միլան, Լիվորնո, Փաւ-
իա, Փատովա քաղաքներուն մէջ,
սակայն Մխիթարեաններու տպագ-
րական գործունէութիւնը ամենա-
փառաւոր տեղը կը գրաւէ 1836-
1996-ի միջեւ, երբ կը գործէր
Վենետիկի Մուրատ Ռափայէլեան
վարժարանը, որուն շրջանաւարտ-
ները եղած են հայ ազգը բնորոշող
ու արժեւորող կարգ մը մտաւոր-
ականներ: 1843-էն սկսեալ Վենե-
տիկի մէջ անընդմէջ կը հրատա-
րակուի Մխիթարեան Միաբա-
նութեան Բազմավէպ գրական հան-
դէսը:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save Support Sustain
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948
www.syrianarmenianreliefund.org

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախապէս եւ մանուկներու Թայլանդացիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի նետանցով պատահած
վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՆՍԻՆ

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Խորագիրը՝ պատահական չէ: Ինչպես եւ պատահական չէր «Սիրոն»ի վերջին՝ 2013 թիվին մէջ լրջ տեսած «ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է» յօդուածը, որ արտատպուած է «Սիրոն»ի 1931 թիվէն Տ. Վ. անուան սկզբնատառերով:

«Սիրոն»ի մէջ կը կարդանք. «Այս օրերուս եկեղեցական կարգապահութիւնը դժբախտաբար շատերու կողմէ սխալ - չըսելու համար գլխիվար - ըմբռնուած, եւ ոմանց կողմէ նոյնիսկ անտեսուած իրականութիւն մըն է»:

Ցաւը՝ որուն մասին կ'ակնարկէ Պատրիարքութիւնը... նոյն ցաւն է, որ կը կոտորայ այսօր ալ շատերու կողմէ քին տակ, լռելեայն թէ բացառապէս: Եւ «Սիրոն»ի մէջ հրատարակուած գրութիւնը՝ ո՛չ միայն յատուկ է Երուսաղէմի, այլ մեր Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցոյ: Ցաւ մը՝ որուն աղաղակները նոյնիսկ կու գան Անթիլիասէն ու Մայր Աթոռէն:

«Եկեղեցին աստուածային հաստատութիւն մըն է, որուն գլուխն է Քրիստոս. (Եփ. Ա: 22-23): Ան Հայր Աստուծոյ տունն է, եւ անոր պատճառն ու նպատակը աստուածային են միանգամայն: Պատճառը՝ Աստուծոյ անսահման սէրն է, ու նպատակը մարդուն սրբացումն ու մերձեցումը Աստուծոյ» կը գրէ «Սիրոն»:

Ըսինք պատահական չէ այս յօդուածի արտատպումը այս օրերուն, ուր կը շեշտուի...

«Սոյն գրութեամբ կու գանք շեշտելու մեր եկեղեցոյ ու նամանականդ մեր վանքէն ներս հրամայական ու անհրաժեշտութիւնը կարգի ու կանոնի, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ, ՀՐԱՄԱՆԻ ԵՒ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ, մին՝ սիրով եւ արդարութեամբ, բայց միշտ վճռական, իսկ միւսը՝ դարձեալ սիրով, հեղութեամբ եւ անձուիրութեամբ: Կրօնա-եկեղեցական մեր կեանքին մէջ այս երկուքն ալ պարտաւորութիւններ են, որովհետեւ չենք կրնար մոռնալ մանականդ՝ որ եկեղեցականութիւնը գինուորութիւն է, մանականդ սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն համար:

Ներկայիս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ ամենէն անհրաժեշտ պայմաններէն մէկն է ունենալ Պօղոս Առաքելի նամակներուն ոգիովը տոգորուած հրամայող դիտող եպիսկոպոսներ, Եկեղեցոյ աւանդութեանց նախնաձախնդիր կղերականներ, որոնք ի պահանջել հարկին Աստուծոյ Սուրբ Տունէն, Քրիստոսի նման գիտնան դուրս հանել կեղծաւորներն ու մերօրեայ փարիսեցիները:

Սակայն ասոնց կարգին մեր Առաքելական եկեղեցին ամէն ժամանակ աւելի կարիք ունի իրենց գերադասներուն հնազանդիլ գիտցող զարգացած եկեղեցականներու՝ կուսակրօն թէ ամուսնացեալ, որոնք անձուներ կերպով ծառայեն իրենց եկեղեցոյ եւ ժողովուրդին, որոնք ըլլան անփոխարինելի գործակիցներ իրենց մեծաւորներուն, ինչպէս նաեւ բարի օրինակ հաւատացեալ ժողովուրդին:

Զարգացում, համեստութիւն եւ քաղաքավարութիւն ցանկալի բարենիշներն են Հայ հոգեւորականին, սակայն անոնցմէ աւելի պահանջուած գլխաւոր յատկութիւնն է ՀԱՒԱՏՔԸ, ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒ-

ԹԻՒՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ, ինչ աստիճանի վրայ ալ ըլլայ տուեալ եկեղեցականը», կ'եզրափակէ «ՍԻՈՆ»:

2014 տարին կը սկսին գոհութիւն եւ փառաբանութիւն տալով Աստուծոյ, որ Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռը ունեցաւ իր արժանաւոր գահակալը, եւ Երուսաղէմի պատրիարքութիւնը կը սկսի նոր շրջան մը:

2014 տարին կը սկսինք նոր յոյսերով, նոր տեսիլքով, նոր ոգիով, նոր գաղափարներով, ապաւինելով եւ զօրավիգ կանգնելով Ամենապատիւ Տ. Նուրհան Ս. Արք. Մանուկեանի, մեր սիրելի Պատրիարք Հօր խոհական իմաստութեան եւ առաջնորդութեան, մեր գինուորեալ միաբանութեան անսակարկ նուիրումին, որպէսզի մեր բոլորին միանական աշխատանքով ու ջանքերով, Հայ Երուսաղէմը հոգեւոր ու մշակութային գարթօնքի օրերը վերապրի: Որպէսզի Առաքելական Ուղղափառ հաւատքը մեր, ճառագայթէ Հայ Երուսաղէմէն եւ Բեթղէհէմի լուսատու Աստղը հայ հաւատացեալներուն առաջնորդէ դէպի Սիրոն, որուն բարձունքէն հայ աղօթքը, խնկաբոյր շարականներով ամէն արեւածաղին կը բարձրանայ դէպի երկինք, Արարիչին երկին եւ երկրի: Չշեղինք մեր հաւատքէն:

Յունուար 22-23, Երուսաղէմի մէջ պիտի կայանայ Միաբանական Ընդհանուր ժողով:

Կասկած չունինք, որ լընթաց օրակարգի պիտի արձարծուի նաեւ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ, ու ատոր կողքին, ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ, ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՒԱՏՔԻՆ:

Այլ խօսքով, Պատրիարքութեան այս նոր շրջանին հարկ է տունը կարգի բերել: Բարեկարգել: Ցաւերուն դարման գտնել: Ու այդ դարմանը մեզի կու տայ Պօղոս Առաքելի իր գրած նամակներուն ընդմէջէն, ինչպէս եւ կը շեշտուի «Սիրոն»ի մէջ: Այսպէս...

ԵՂՐԱՅՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ մասին, Սէր (ուսեցէք) առանց կեղծիքի, ատելով չարը՝ յարիլ բարին, եղբայրասիրութեան մէջ իրարու հանդէպ զթասիրտ, պատուելու մէջ՝ առաջ նետուիլ, ջանասիրութեան մէջ չըլլալ վեհերոտ, հոգիով եռացէք. Տիրոջ ծառայեցէք. (Հռոմ. 12:9-12):

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ մասին, Մտի՛կ ըրէք ձեր առաջնորդներուն, հնազանդեցէ՛ք անոնց, որովհետեւ անոնք կը տքնին ձեր հոգիներուն համար, քանի որ հաշիւ պիտի տան ձեր փոխարէն. եւ անոնք ուրախութեամբ թող ընեն այդ բանը եւ ոչ թէ հառաչելով, բան մը՝ որ օգուտ չի տար ձեզի: (Եփր. ԺԲ:17):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ մասին, հիմա դո՛ւք ալ թօթափեցէք ձեզմէ այդ ամէնը՝ բարկութիւն, զազրոյթ, չարութիւն, հայհոյութիւն եւ խեղկատակութիւնը ձեր բերաններէն: Մի՛ ստէք իրարու, մերկացած էք հին մարդէն իր գործերով եւ հազած էք նորը: (Կողոս. ԲԳ:5-10):

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆ մասին, արդ կը լսենք թէ ձեզմէ ոմանք կ'ապրին անկարգ կեանքով, ոեւէ գործով չեն գաղղիր, այլ ծոյլ ծոյլ կը պտտին՝ պարապ

Շաբ.ը էջ 20

ՊԱՏԵՅԱՊԱՇՏԻ ՍԸ ՎԱԽՃԱՆԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Ժողովուրդ մը կայ Ափրիկէի մէջ, որ իր հայրենիքի կլիմայով կը հպարտանայ, պարծենալով թէ տարին տասներեք ամիս արեւ կը վայելեն: Այդ ժողովուրդը եթովպացի ազգն է, որ գործնական մտահոգութեամբ տարին երեսունական օրերով 12 ամիսներու բաժնէր է, աւելցած 5-6 օրերը նկատելով տասներեքերորդ ամիսը:

Բնութեամբ եւ կենդանական աշխարհով հարուստ երկիր է Եթովպիան, որսորդութիւն եւ արկածախնդրութիւն փնտռողներուն առջեւ բանալով ամէն կարելիութիւն: Ծուրջ 2500 մեթր բարձրութեամբ այդ բարձրավանդակին վրայ ապրող չարքաշ ու նիզակալիք ժողովուրդը, բացի քանի մը քաղաքներէն, գրեթէ մերկ կամ կիսամերկ է՝ վայելելով 18-20 աստիճանի խեղճական կլիմայ մը: Անձրեւները առատ են՝ ոռոգելով ծաղկազարդ դաշտերն ու անտառները, ուր կարելի է հանդիպիլ ու որսալ բոլոր մեծ ու պզտիկ վայրի կենդանիները՝ եղջերազգիներէն մինչեւ առիւծ:

Ես որ երագող էի Ափրիկէն տեսնելու, որսորդական եւ արկածախնդրական հակումներու գոհացում տալու համար, յանկարծ կեանքիս ամենամեծ անակնկալներէն մէկը ունեցայ: 1951ին Եթովպիա հրաւիրուեցայ Ատտիս Ապապայի Հեթմանեան Ազգային վարժարանին մէջ ուսուցչութեան համար:

Երկիրը ճանչնալու պտոյտներու ընթացքին գարմանքի հետ հիացում գրացի Լալիպելլայի ժայռափոր վանքի համալիրը տեսնելով, որ յար եւ նման, բայց աւելի մեծ էր քան Հայաստանի Գեղարդը:

Ժամանակ մը յետոյ վարժարանին տնօրէն կղերականին մեկնումով, տեղը եկաւ Պէյրութի ուսուցչական խառնիճաղանձէն մէկը, որուն ծանօթ էի: Այդ ժամանակաշրջանին Հ.Բ.Ը. Միութեան Կրթական Ցանձնախումբին քարտուղարը ըլլալով, ի պաշտօնէ պէտք էր ճանչցած ըլլալի գինը: Հետզհետէ իր կարողութիւններուն մասին գաղափար կազմելէ ետք, գարմանալ սկսայ թէ այս համեստ կարողութեամբ ուսուցիչը ինչպէ՞ս կրցած էր տիրանալ տնօրէնի պաշտօնին: Բայց կամաց-կամաց իր «կարողութիւնները» երեւան գալ սկսան: Ուսուցիչներուն ուշադրութիւնը գրաւեց որ քառաչուկէ ներբանով կօշիկ հագողը այս մարդը, անշշուկ եւ գաղտագողի, ուսուցչարանին դուռը գալով կը լրտեսէր խօսակցութիւնները:

Շատ ժամանակ չանցած համայնքին ամենէն յարգելի ընտանիքներէն մէկուն տունը մնացած

աղջկան հետ սերտ յարաբերութեան մէջ մտաւ եւ շուտով ալ ամուսնացաւ: Այս եւ նման դէպքեր կան փաստելու իր նկարագրին մէջ պատեհապաշտական զօրաւոր գիծը: Դէպք մը պատճառ եղաւ ճակատ առ ճակատ բախում ունենալու այս պատեհապաշտին հետ: Ընդհանուր հերթապահը ես ըլլալով կէսօրուան դաղարին առթիւ աշակերտութիւնը ազատ կ'արձակէի որ ճաշի երթան: Այդ պահուն աւարտական դասարանէն մէկը սուրբ: Ես գիտէի թո ով էր սուրբը, բայց ուզեցի որ սուրբը խոստովանի եւ ներողութիւն խնդրէ այդ անվայել արարքին համար: Ես ուսուցչարան մտնելով ժամանակ տուի որ իրենք-իրենց խորհրդակցելով յանցագործը մղեն որ խոստովանի: Բաւական ուշացումէ յետոյ, երբ յանցագործը չուզեց խոստովանիլ, աղջիկ մը եւ տղայ մը կան վկայելու յանցագործին ով ըլլալը, որ վարժարանի հոգաբարձութեան անդամի մը աղջիկն էր: Իբրեւ պատիժ իր յանցանքին եւ գղջում չարտայայտելուն, իմ դասապահերուս ներկայ ըլլալը իրեն արգիլեցի ժամանակի մը համար:

Պատեհապաշտ տնօրէնը առիթ մը եւս գտաւ իր պատեհապաշտութիւնը ցոյց տալու, ինձի պարտադրել փորձելով որ դասարան ընդունիմ այդ աղջիկը, որ արդէն հասուն տարիքի մէջ եւ բաւական ալ գեղեցիկ էր: Յետոյ պիտի իմանայի որ ծնողքին կողմէ գայն ինձի հետ ամուսնացնելու մտադրութիւն մը ալ կայ եղբր, բայց երբ հակառակ տնօրէնին պնդումին ես մերժեցի գայն դասարան ընդունիլ, ան ըսաւ.

- Ուրեմն դպրոցէն վտարուած էք:
- Դուք գիս վտարելու իրաւասութիւն ունի՞ք, հարց տուի ես:
- Այո՛, այս վայրկեանէն սկսեալ վտարուած էք դուք:
- Շատ լաւ, ըսի եւ դուռը աղմուկով փակելով դուրս ելայ ես:
- Շիտակ գացի որսի ընկերոջս խանութը եւ դէպքը պատմեցի, յետոյ յաջորդ օրը որսորդութեան մեր ծրագիրը կազմեցինք ու գացինք:

Երեք օր յետոյ վերադառնալով իմացայ որ գաղութային վերին Մարմնի ատենապետ եւ ինձի շատ սիրելի Պրն. Մարտիրոս Տարագճեան գիս կ'ուզէ տեսնել: Հազիւ իր գրասենեակէն ներս մտայ, իրեն յատուկ անկեղծ ժպիտով գիս ընդունեց, բայց նաեւ յանդիմանեց «դուն ո՞ւր կ'երթաս առանց ինձի պատմելու եղածը», ըսելով:

- Ի՞նչ կրնայի ըսել, կրկնելով-կրկնելով ըսաւ որ՝ վտարուած եմ:
- Եւ ատիկա գործիդ եկաւ որսի երթալու համար, հա՞: Վաղն իսկ դպրոց կ'երթաս գործը շարունակելու: Մնացածը մեր գործն է...:

ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Մանրամասնութեան համար գաւգել

Նարինէին

(626) 818-9949

Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Ո՞Վ ԵՍ ԴՈՒ ԱՐՇԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Քո տոհմի դաւթարը թերթի, Որ իմանաս ով ես դու, Լաւն ու վատը քո մէջ փնտռի, Կը հասկանաս թէ ով ես դու:

Անարդար է չարախօսել, Ուրիշներին սուտ բամբասել Զարի կողքին չար է ծնուում, Զարը չարով է կործանուում:

Օտարի ցաւը չես գգայ, Եթէ սրտունդ բարութիւն չկայ, Պէտք է լինես հոգով բարի Կիսես քո ցաւը ընկերի:

Սուտ դատողութիւն մի՛ արա, Աստուած է այնտեղ վկայ, Ստախօսը միշտ պատուազուրկ, Սուտ լսողը անյարգուած:

ԲԱՐԵՒԸ ՍԵՐ Է ԱՐՇԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Մօտովս անցնում Երեսիս նայում Մի բարեւ ինչ է Որ ինձ չես ասում:

Սէր է փոխանցում, Բարեւ լսողը Սէր է ստանում:

Բարեւը սէր է Մարդկանց սրտերում, Ծանօթ անծանօթ, Իրար փոխանցում: Բարեւ ասողը

Բարեւ աշխարհին Բարի կամեցողներին, Բարեւ բարեպաշտ Մեր հայ ազգին Բերք ու բարիք արարողներին:

ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ ԱՐՇԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Գառն ու գայլը համատեղ Գործ բռնեցին շահաւէտ, Յանկարծ թէ ինչ կատարուեց, Գառն գայլին յօշոտեց:

Կեղծ ու ազահ մի արարած: Դէ-յ աշխարհ, փուչ աշխարհ, Աստուած գիտի, ով մեղաւոր, ով արդար, Միայն նա է վայելում, Ով արդար է վաստակում:

Գառան տեսքով գայլ էր նա, Գառան մորթի հագնուած, Գայլի մօր կաթով նա սնուած,

ՀԱՍԱՃԱՐԱԿՆԵՐ, ՄԱՅԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅՐԻՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 8-էն

ներու անհրաժեշտութեան եւ դե-րին մասին: Առաջին, երբ գանա-զան պատճառներով կ'անհետա-նան կամ կը հրկիզուին պետական տոմարները, անոնք կը դառնան հաւաստի արձանագրութիւններ: Երկրորդ, Անոնք պատմական հե-տազոտութիւններու մեծ աղբիւր-ներ են, որովհետեւ շրջապատին փոքրիկ աշխարհն (microcosm) ու հայելին են: Իսկ երրորդ, անոնք Մեծ արժէք կը ներկայացնեն մեր

հոգեւոր գանձերու պահպանման իմաստով: Ապա նշեց որ այս տարի մեր Ազգային Մահմանադ-րութեան 150 ամեակն է , ուր մասնաւորապէս նշուած է ծխա-կան համայնքներու տոմարներու պատրաստութեան անհրաժեշտու-թեան եւ անոնց պահպանման կա-նոններուն մասին: Դասախօսու-թեան աւարտին ան սիրով պա-տասխանեց ունկնդիրները յուզող հարցերուն: Դասախօսութիւնը վերջ գտաւ Արժ. Տ. Ղեւոնդ քհնյ. Քիրազեանի Պահպանիչով:

Համագործակցութեան հարթակը

Շարունակուած էջ 2-էն

կողմնակիցներին՝ իրենց կողմից առաջնային համարուող խնդիրնե-րին հասնելու գործում: Օրինակ՝ իշխանական քարոզչութիւնը չէզո-քացնելու ունակ հզօր մեղիադաշտ ստեղծելը: Ցանկութեան դէպքում կարելի է գտնել բազմաթիւ այդպի-սի գործողութիւններ, եւ երբ արձա-նագրուեն յաջող համագործակցու-թեան մի քանի օրինակներ, կարող է անհրաժեշտութիւն առաջանալ ստեղծել միասնական ճակատ, շար-ժում, որը կը համակարգի բոլոր նման գործողութիւնները: Հետագայում այդպիսի ճակա-տը կամ շարժումը (քանի որ այն,

անկասկած, մեծապէս նպաստելու է հանրութեան քաղաքացիական գի-տակցութեան բարձրացմանը, թու-լացնելու է իշխանութիւնների դիր-քերը, ուժեղացնելու է ընդդիմա-դիր հանրութեան ինստիտուցիո-նալ կարողութիւնները եւ դրանով իսկ հարազատ եւ թանկ է դառնա-լու վերոնշեալ բոլոր երեք մօտե-ցումների կողմնակիցների համար), կարող է արդէն ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը նպաստաւոր կը լինի միասնական առաջնահերթ խնդիրների եւ դրանց լուծմանը տանող միասնական կարճաժամկէտ գործողութիւնների ձեւաւորման համար:

«ՀԵՏՔ»

«...ՄԵՂՍԱԿԻՑ ԵՆՔ ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ...»

Շարունակուած էջ 6-էն

քրիստոնէութիւնն էլ հենց սկզբից բռնութեամբ, արիւնով, կոտորած-ներով չի հաստատուել Հայաստա-նում: Այն սոցիալիզմի նման, որի հարուածները նաեւ ձեզ է հասել, որի կործանման վկան նաեւ մենք ինքներս դարձանք: Դուք ինչ որ տեղ արտադրուել էք այն միտքը, որ նման սոսկալի բռնութեամբ եւ աւերումների գնով հաստատուած սոցիալիզմը, բնականօրէն չէր կա-րող այն լինել, ինչ որ պէտք է լինէր: Ապա մենք ինչո՞ւ ենք ահա արդէն 18 դար շարունակաբար սրբացրել Գրիգոր «Լուսաւորի-չին» եւ հաւատում ու հետեւում ենք նման դաժանութեամբ հաս-տատուող կրօնին...

Քաւ լիցի, երբեք չէի ցանկա-նայ մեծամիտ նկատուել եւ փորձել ձեզ կամ ընթերցողներին խրատ-ներ տալ, բայց երեւի աւելորդ չէր լինի այստեղ մէջ բերել Գերման-իայի նախկին կանցլեր եւ սոցիալ-դեմոկրատների դեկավար՝ Վիլի Բրանդի խօսքերը, ուղղուած իր կուսակցութեան անդամներին.

«Ոչինչ ինքն իրեն չի ստաց-ւում: Եւ միայն շատ քիչ բան է յարատեւ: Այդ պատճառով էլ վստա-հէք ինքներդ ձեր ուժերին եւ չիչէք, որ ամէն մի ժամանակ իրեն յատուկ պատասխաններն է պա-հանջում եւ մարդ պէտք է իր բարձունքի վրայ գտնուի, եթէ ինչ որ լաւ բան գործադրել պէտք է»:

Յարգանքներով՝ Սամուէլ Հովասափեան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:----- Fax: -----

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի
Երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէնտոյլի 380-րդ կայանից

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քաքուզի, թենիսի խաղադաշտ, կանա-չազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՇՈՒՆՆԱԳԻՍ



ԼՈՒԼԻԻ (ԽԱՅԵԱՆ-ՖԵՐՄԱՆԵԱՆ)

Լուլու (Խայեան-Ֆերմանեանի մահուան տասնչորրորդ տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Յունուար, 2014ին, Ս. Պետրոս Հայց Առաքելական Եկեղեցուց մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան
Վիզէն Գուլումճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՄԵՌԱՎ

Շարունակուած էջ 14-էն

դասարանային եւ ատենամարզանքի պահերուն՝ այլազան ձեւերով ճոխացնելով մեր ուսումնական առօրեան: Նուիրում էր՝ մէկ կողմէ հայ աշակերտին ու դպրոցին նկատմամբ, բայց նաեւ հայուն յոյսին, ուր պէտք էր յուսալ եւ տեսնել, թէ հայուն վաղուան օրը պէտք է շարունակուի...: Բայց արդեօք այս նուիրումը չէր, որուն շնորհիւ հայ ժողովուրդը ցեղասպանութեան արհաւիրքէն դուրս գալով՝ հող, տուն եւ հարագատ կորսնցնելէ ետք, հիւղաւանները վերածեց անմիջական տան, դպրոցի ու եկեղեցու, յոյսը դնելով վաղուան օրուան: Այդ միջոցով էր, որ հայը կերտեց սփիւռքահայ գաղութները իր շատ մը «ամբողջ»-ներով՝ քիչ մը ամէն տեղ...: Սոնա Նաչեանի նուիրումը նոյն այս հիմքով շարունակուեցաւ իր կրթական երկար տարիներուն ընթացքին՝ յոյսը տեսնելով հայ նոր սերունդին վաղուան օրուան տիրապետելու իրականութեան մէջ: Այսօր ալ իր աշակերտները քիչ մը ամէն տեղ Սոնա Նաչեանի յոյսին իրականացումն են...: Եւ արժէ, որ հայը իր գրաւը բարձր դնէ այս յոյսին վրայ:

«Բոլորին համար իր խիստ ինքնութենէն մեծ սէր եւ գեղեցիկը կերտելու բծախնդրութիւնն փոխանցած է ինծի, եւ միշտ երախտագիտութեամբ կը պահեմ յուշերուս մէջ...: Շնորհակալութիւն օրիորդ Նաչեան...»: Եթէ այս մէկը իր աշակերտներէն մէկուն վկայութիւնն է: Հեռաւոր մէկ ամիսէն, բայց նաեւ մէկ լաւ թարգմանն է այն իրականութեան, որ իւրաքանչիւր աշակերտ իր տեղին ու դիրքին մէջ, կեանքի այլ գոյապայքարներ-

ընթացքին իւրաքանչիւրը կ'ապրի օրիորդ Նաչեանի դրոշմած սէրը եւ գեղեցիկը՝ կեանքին ու աւանդին նկատմամբ...:

Դաստիարակը մեռաւ, բայց մնաց դաստիարակութիւնը: Հոս թէ հոն, քիչ մը ամէն տեղ, ուր Սոնա Նաչեանի աշակերտները կ'ապրին հայուն գիտակցութիւնը՝ սիրելով արժէքը եւ պահելով աւանդն ու անոր գեղեցիկութիւնը...: Այս դաստիարակութեան շնորհած յոյսն է, որ չի մեռնիր եւ իր շարունակականութիւնը կը գտնէ վաղուան օրուան մէջ: Այս յոյսին համար անպայման արժէ ապրիլ եւ նուիրել ամբողջ կեանք մը:

Սոնա Նաչեան հանգստեան կոչուելէն ետք շարունակեց կառուած մնալ յոյսին եւ անոր շնորհած դաստիարակութեան: Իր ժամերը տրամադրեց եկեղեցիին եւ հաւաքական աշխատանքին: Մեր իւրաքանչիւր հանդիպումին իր ուրախութիւնը կը յայտնէր իմ աշխատանքներուս եւ յօղուածներուս համար, նաեւ ինծի կը յանձնէր իր ձեռագիր գեղարուեստական աշխատանքները: Պզտիկ բացիկներ՝ իր կողմէ գծագրուած, ուր տեղադրած էին Աստուածաշունչէն համարներ՝ դարձեալ իր ձեռագիրով: «Բաժնէ, ուր որ պէտք է», կ'ըսէր, «Աստուծոյ խօսքը յոյսին կուռանն է»:

Սոնա Նաչեան ապրեցաւ այս յոյսին համար՝ եւ իր կրթական դաստիարակչական կեանքը նուիրում մըն էր՝ հայ ժողովուրդը տանելու վաղուան օրուան...:

Շնորհակալութիւն՝ Սոնա Նաչեանի նուիրական կեանքին: Սոնա Նաչեան դաստիարակը մեռաւ, բայց դաստիարակութիւնը, որուն անհաւատաց, եւ որուն համար գոր-

ՎԱՐՈՒԺԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Շարունակուած էջ 15-էն

Վարուժանի ասելիքը:

Մինչդեռ աւելի ուշադիր ընթերցումն այլ բան է յուշում:

Հնօրեայ գաղափարի հերոսները (չմոռանանք, որ Պ. Սեւակի բնորոշմամբ Դ. Վարուժանի պոէզիայում հայրենասիրութիւնը դիտուում է որպէս գաղափարախօսութիւն)՝ «Գայլ վահաններն, Դաւիթ բեկերն ընծառիւծ» չէին կարող ներել իրենց մօրը՝ հայրենիքին, որ, խաբուելով թշնամու խօսքից կամ կեցուածքի արտաքին փայլից (օսմանեան սահմանադրութիւնից), դաւաճանել է իր որդիներին՝ ազգին, հաւատին՝ տրուելով թշնամուն, պարելով նրան ի հաճոյս: Գաղափարի հերոսները միայն մի բան գիտեն՝ պայքարել, մինչեւ վերջ պայքարել: Պայքարից շեղուած իրենց մօրն են նրանք Ոլիաբա, որ լ՛ղ անցումով նոյնն է, թէ Ողիաբա, կոչում: Այս Ողիաբայի մասին պատմում են ոչ թէ Մննդ. ԼԶ-ն, ինչպէս նշուած է ծանօթագրութեան մէջ, այլ Եգեկիւնի մարգարէութեան ԻԳ. 11-17 կամ Երեմիայի մարգարէութեան Գ հատուածները: Այստեղ մարգարէները կոպտօրէն են խօսում անբարոյական կնոջ այլաբանական սիմվոլի տակ թաքնուած մայր-հայրենիքի մասին, որը, դաւաճանելով իր որդիներին, պարում է թշնամու առաջ, տրուում նրան: Աստուածաշնչեան այս մայր-հայրենիքը՝ կնոջ կերպարով, կոչում է Ողիաբա, որն էլ Դ. Վարուժանի նշած Ոլիաբան է (լ՛ղ փոխանցումով):

Ինչ վերաբերում է Սալոմէ անուանը, «Աւերակներու տիկինը» բանաստեղծութեան 161-րդ տողի ծանօթագրութիւնը կրկին ոչինչ չի յուշում: Վարուժանի ակնարկած Սալոմէն Մատթ. ԺԴ. 6 կամ Մարկ. Զ. 21-22-ում պատմող դէպքերի հերոսուհին է՝ Հերովդիայի աղջիկը, որը պարեց ինճոյքում եւ պարի դիմաց Յովհաննէս Մկրտչի գլուխն ուզեց: Դ. Վարուժանը թափանցիկ ակնարկով յուշում է, որ օսմանեան սահմանադրութեանը հաւատալը մեզ վրայ Յովհաննէս Մկրտչի գլուխն է նստելու: (Ի դէպ՝ Նոր Կտակարանում Հերովդիայի աղջկայ անունը չկայ: Այն, որ նա Սալոմէ է կոչուել, յայտնի է պատմութիւնից):

Այս անունների հարցը պարզելուց յետոյ դառնանք Վարուժանի ասելիքին: Իսկապէս, օտարտի է թուում շարքը «Աւերակներու տիկինը» բանաստեղծութեամբ աւարտելը: Բայց քանի որ ողջ շարքում պայքար է երեւում, 1908թ. սահմանադրութեանը հաւատալը եւ

կառավարութեան առաջ «պարելը» Վարուժանը անհանդուրժողութիւն է համարում՝ անուանելով «դաւաճանութիւն»: Հետեւաբար, պահանջը մնում է նոյնը՝ պայքար: Ձեւի, կառուցուածքի տեսանկիւնից բնաբանը եւ շարքի վերջին բանաստեղծութիւնը, փաստօրէն, շրջանակում են ասելիքը՝ որպէս բանաստեղծութիւններից հիւստած պոէմ՝ ողջ շարքի ասելիքի ամբողջականութեամբ:

«Յեղին սիրտը» շարքում հայրենասիրութիւնը իրօք որ գաղափարախօսութիւն է, քանի որ այն շարքի խորքում թաքնուած «հեթանոսապաշտութեան» աշխարհայեացքային առանցքի ձեւ եւ թաղանթ է:

Վարուժանը «ազգայնացրել» է դիոնիսեան գեղագիտական կատեգորիան՝ դրան տալով զարթօնքի, ազատագրական պայքարի երանգ, այսինքն՝ կեանքի կրկնափայլից Վարուժանը բխեցնում է պայքարի, կռուի եւ յաղթանակի հաճոյքը՝ որպէս ուժեղի գոյատեւման հիմք:

«Հեթանոսականութիւնը», լիներով փիլիսոփայական երեւոյթ, Դ. Վարուժանի պոեզիայում դրսեւորուած է որպէս աշխարհայեացքային հենք ընդհանրապէս: Այն խոր փիլիսոփայականութիւնը, որը պէտք է բնորոշ լինի հեթանոսապաշտութեանը, կամ որ նոյնն է, թէ դիոնիսեան գեղագիտութեանը, Դ. Վարուժանի աշխարհայեացքում բեկուած է որպէս տառապանք-ցաւի եւ հաճոյքի հակադրամիասնութիւն:

Իսկ գեղարուեստի տեսանկիւնից վարուժանական պոեզիան անկրկնելի գոյների եւ ձեւերի ամբողջութիւն է՝ լի գեղեցիկով եւ այլ էսթետիկական կատեգորիաներով:

Այսինքն՝ այն կարծիքը, թէ «հեթանոսական ուղղութիւնը» սոսկ անցեալի թեմատիկ անդրադարձ է, ճիշտ է այն հեղինակների համար, ում հասու էր հեթանոսապաշտութեան փիլիսոփայականութիւնը՝ որպէս կեանքի յաւերժական վերադարձ, որպէս կեանքի ցաւից յետմղում դէպի հաճոյք, մահից յետմղում դէպի կեանք: Ինչը երբեք չի կարելի ասել Դ. Վարուժանի մասին:

1. Պ. Սեւակ, Երկերի ժողովածու, Ե., 1983թ., հ. 3, էջ 506:
2. Դ. Վարուժան, Երկեր, Ե., 1984թ., էջ 172:
3. Դ. Վարուժան, ԵԼԺ, հ.1, Ե., 1986թ.:
4. Տե՛ս Հայր Միշել Բենեյ, Ինչպէս կարդալ Աւետարանը, Էջմիածին, 1992թ., էջ 93:

ձեց՝ տակաւին կը շարունակուի...: Եւ հայուն վաղուան օրուան

յոյսը դաստիարակութեան շարունակականութեան մէջ է...:

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE

THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Շարունակում է 17-էն

բաներով հետաքրքրուելով:

Այդպիսիներուն կը պատուիրենք եւ կը յորդորենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ աշխատին հանդարտութեամբ եւ իրենց հացը ուտեն: (Բ. Թեսաղ. Գ:11-13):

Նկատի ունենալով, որ Միաբանութեան օրակարգին վրայ կայ նաեւ եպիսկոպոսական թեկնածուներու հարցը, Հեթանոսաց Առաքեալը այս մասին ալ կու տայ իր պատուիրանը...

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ.-

Եպիսկոպոսը պարտի ըլլալ անարատ, հեզ, խոնարհ, պարկեշտ, հիւրասէր, ուսուցանող, ո՛չ նախատող, ո՛չ բռնացող այլ հանդարտաբարոյ, ո՛չ կռուական, ո՛չ արծաթասէր: (Ա. Տիմոթ. Գ:2-5):

Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարքի գահակալութեան առթիւ գրած էինք. «Կասկած չունինք, որ Ամենապատիւ Պատրիարք Հայրը ո՛չ միայն քաջածանօթ է Պատրիարքութեան դիմագրաւած բոլոր դժուարութիւններուն, այլ նաեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ առջեւ ծառայած հարցերուն:

Կը հաւատանք, որ ան այս օրերուն գահ չբարձրանար «Թագաւորելու ի վերայ աւերակաց», այլ աստուածաշնչեան այն խօսքով ու հաւատքով, որ «Աստուած կարող է այս քարերէն Աբրահամու որդիներ յարուցանել»: Բայց ինչպէս ըստած է, որ հարկ է «Պօղոս տնկէ» եւ «Ապօղոս ջուր տայ», որպէսզի «Աստուած անցնէ»: Այլ խօսքով՝ «Ան, որ կը մշակէ իր հողը, պիտի յագենայ հացով», (Առակաց, 12:11):

Ահա թէ ինչո՞ւ արձագանգ կը հանդիսանանք Պատրիարքութեան պաշտօնաթերթ «Սիոն»ի մէջ արծարծուած յօդուածին... շեշտելու մեր եկեղեցւոյ ու նամանաւանդ մեր վանքէն ներս հրամայականն ու անհրաժեշտութիւնը կարգի ու կանոնի, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ, ՀՐԱՄԱՆԻ եւ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ..., եւ կարկինը աւելի լայն պիտի չբանայինք այստեղ, եթէ Սաղէմի աղաղակները ալ իք առ ալ իք չհասնէին ամբողջ ինչպէս, ինչպէս «անձրեւին» որ կու գայ քամիի կանչով»:

Ուրախ ենք, որ Ամենապատիւ Պատրիարք Հայրը, որպէս առաջին սպասաւորը Սուրբ Աթոռին, իր իսկ գահակալութեան նուիրուած «Սիոն»ի թիւին մէջ, որպէս Պատրիարքութեան նոր շրջան, նոյնպէս կը պարգէ դրօշը ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ, մէջ բերելով... «Ներկայիս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ամենէն անհրաժեշտ պայմաններէն մէկն է ունենալ Պօղոս Առաքեալի նամակներուն ոգիովը տոգորուած հրամայել գիտցող եպիսկոպոսներ, Եկեղեցւոյ աւանդութեանց նախանձարնդիր կղերականներ...

... Զարգացում, համեստութիւն եւ քաղաքավարութիւն ցանկալի բարենիշներն են Հայ հոգեւորականին, սակայն անոնցմէ աւելի պահանջուած գլխաւոր յատկութիւնն է ՀԱՒԱՏՔԸ, ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆԸ ու ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ, ինչ աստիճանի վրայ ալ ըլլայ տուեալ եկեղեցականը»:

«Հաւատքը վարդապետութեան մասին կամ տեսական ճշմարտութեան մը հանդէպ գգացուած իմացական յարումի մը վիճակը չէ, այլ անձնաւորական միացումը կրօնքին առարկային, այսինքն Աստուծոյ հետ, այնպիսի կերպով մը, որ Աստուծոյ եւ մարդուն էութիւնները գոյացապէս միանան իրարու, եւ խառնուին իրարու հետ, ինչպէս ֆիզիքական կարգին մէջ կերակուրը եւ գայն ընդունող մարմինը իւրացումի գործողութեամբ կը սուզուին իրարու հետ»:

Երջ. Գուշակեան Պատրիարքի վարդապետութեան այս ՀԱՒԱՏՔՆ է, Պօղոս Առաքեալի նամակներուն պատուիրաններն են որ կը մաղթենք որ ապրի եւ շնչէ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցիէն եւ յատկապէս պատրիարքութեան այս նոր շրջանին ներս, եւ պատմութիւնը բարի օր մըն ալ լուսաշող էջեր արձանագրէ Երուսաղէմի պատրիարքութեան տարեգրութեանց մէջ, որպէս «Նուրհանական շրջան»:

Ամենապատիւ Պատրիարք Հայրը իր առաջին քայլը կ'առնէ Միաբանական Ընդհանուր Ժողովին, Հայրաբար բարեկարգելու Տունը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Մեզի կը մնայ աղօթել Սուրբ Աթոռին անասանութեան, մեր միաբանութեան եւ զօրավիզ կանգնիլ մեր դարաւոր Պատրիարքու-

ԴՊԿՏՈՐ ԱԲԵԼ ՔԱՅԱՆԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Շարունակում է 13-էն

բարոյական հրամայականը: Պետականութիւն ունեցող հայ ժողովրդի կողմից իր գաւակներին գնահատելը հոգեւորից բացի ունի քաղաքական նշանակութիւն, այն կարելու է ոչ միայն համագային, այլեւ միջազգային առումով. «Գուցէ Հայ Եկեղեցիին կողմէ տրուած նման որոշում մը մեծապէս կը նպաստէ նաեւ Հայոց Յեղասպանութեան վերջնական ճանաչումին եւ պահանջատիրութեան արդար լուծումին» (էջ 73):

«Բանավէճ մը» խորագրի ներքոյ բարձրացում են այնպիսի հարցեր, որոնք իսկապէս բանավէճի առիթ կարող են հանդիսանալ՝ հնչեցուելով անգամ կոմիտաս վարդապետի եւ Յեղասպանութեան գոհերի սրբադասմանը դէմ արտայայտուողները կողմից. արդեօ՞ք Մեծ Եղեռնի բոլոր նահատակներն ունէին քրիստոնեայի օրինակելի վարք, միգրացի գոհերի մէջ կային մարդիկ, որոնք դեռեւս մկրտուած չէին, կամ Հայ Առաքելական Եկեղեցին ունի՞ իրաւունք իր սրբերի դասի մէջ ընդգրկելու կաթոլիկ կամ աւետարանական եկեղեցիների հետեւորդ հայերին եւ այլն: Հեղինակն անաչառօրէն պատասխանում է այս եւ վիճահարոյց այլ հարցադրումներին, համարելով, որ դրանք սերտօրէն առնչուած են իրար հետ, որովհետեւ «Քրիստոսի սիրոյն հաւաքաբար ընդունուած արեան նահատակութեան վկայութիւնը կը կազմէ ամէնուն ընդհանուր հիմքը» (էջ 61):

«Տոմարական եւ ծիսական հարցեր» բաժնում հեղինակն անդրադառնում է այնպիսի կարեւոր խնդիրների, թէ ինչպէս պէտք է Հայ Եկեղեցին համատեղի, եթէ Ապրիլի 24-ը համընկնի Մեծ Պահաքին, Աւագ շաբաթուայ օրերին կամ Հինանց շրջանին: Առաջնային է համարում այն հանգամանքը, որ «անօրինակ եւ բիւրաւոր մարտիրոսներու յիշատակի տօնը պէտք է գերազանց բացառութիւն մը նկատուի եւ առանձնատուկ տեղ մը գրաւէ մեր եկեղեցական տօնացոյցին մէջ՝ «Ապրիլ 24» հաստատուն օրով»: Իսկ այն հարցին, թէ ինչպէս պէտք է վարուել,

թեան, ըսելով... Աստուած օգնական եւ պահապան ըլլալ Սուրբ Աթոռին եւ անոր ողջ միաբանութեան, ի

եթէ այդ օրը համընկնի հենց Ս. Յարութեան տօնին հեղինակը պատասխանում է. «Անձամբ պիտի ուզեմ համոզուած ըլլալ, որ թերեւս հայ ժողովուրդին համար չկայ աւելի պերճախօս վկայութիւն մը՝ քան այն փաստը, թէ Ապրիլ 24-ին, երբ քրիստոնեայ աշխարհը Յիսուսի Յարութեան տօնը կը նշէ, մենք՝ հայերս ներշնչուած նոյն խորհուրդով եւ յագեցած անոր սիրած պայծառ լոյսով, կ'ոգեկոչենք 1915 թուականի Յեղասպանութեան արհաւիրքէն վերապրած մեր ազգին իրական եւ յաղթապանծ յարութիւնը Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի բոլոր գաղթօճախներուն մէջ» (էջ 77):

Գրքում գետեղուած են Մեծ Եղեռնի նահատակ մտաւորականների եւ Յեղասպանութեան զարհուրելի տեսարաններ ներկայացնող նկարներ, որոնց շնորհիւ գիրքն աւելի խօսուն է դառնում, իսկ պատմութիւնն աւաւել քան տեսանելի: Դրանց նայելով մարմնովդ սարսուռ է անցնում. իսկ ինչպէ՞ս ենք մենք այսօր պատասխանում այդ բազմաչար սրբեկորոյս հայրերին եւ մայրերին, իրենց ձմեռնաշունչ գարունը կորցրած հայ մանուկներին: Սրբադասումն իսկապէս մեր ազգային ու եկեղեցական բարոյական պարտքն է բոլոր նրանց նկատմամբ, ում նահատակութեան շնորհիւ ընդհանրապէս այսօր մենք հայ քրիստոնեաներ ենք:

Յուսանք, որ մերօրեայ առաջնորդներն էլ նոյնքան իմաստուն կը գտնուեն, որքան մեր միջնադարի մեր մեծ հայրապետները հասկանալու համար Յեղասպանութեան նահատակների սրբադասման կարեւորութիւնը եւ «Հայ Եկեղեցւոյ խորաններէն եւ ազգիս սրբազան բեմերէն տարուէ տարի 24 Ապրիլին հնչէր նուիրական «Սրբոցն Կոմիտասայ Վարդապետին եւ աւելի քան մէկուկէս միլիոն նահատակացն ազգիս Հայոց» յիշատակութիւնը»:

Դոկտ. Արեւի Քեմյ. Մանուկեան, Հայ եկեղեցիին եւ Մեծ եղեռնի գոհերու սրբադասման հարցը. Հայոց Յեղասպանութեան 100-րդ Տարելիցին Ընդառաջ, Ժրմու, 2013:

INNOVATIVE
Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com